

ԵՐԵՎԱՆԻ «ՀԱՅՔՐՈՍԱԿ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՄԵԹՈԴԻԿԱՆ ՀԱՆԴԵՍ 2022/1
YEREVAN "HAYBUSAK" UNIVERSITY SCIENTIFIC AND SCIENTIFIC-METHODOLOGICAL JOURNAL 2022/1



ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆՅՈՒԹԵՐ
«ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԿՈՌՈՒՊՏԻԱՆ»
միջազգային գիտաժողովի
Նոյեմբեր 26, 2021, Երևան

Կազմակերպող՝ ԵՀՀ Իրավագիտության և միջազգային
Հարաբերությունների ինստիտուտ

SOCIAL SCIENCES

Reports of the international conference
“HUMAN RIGHTS AND CORRUPTION”
November 26, 2021, Yerevan

Organizer: YHU Law & International Relationships
Institute

ԵՐԵՎԱՆ - YEREVAN - 2022

ՀՏԴ
ԳՄԴ

Ե

Երաշխավորված է փպագրության Երևանի «Հայբուսակ» համալսարանի գիտական խորհրդի որոշումով

Խմբագրական կոլեգիա.

Աբրահամյան Մարտին - ֆիզմաթ գիտ. դոկտոր, պրոֆ, գլխավոր խմբագիր

Քոստանջյան Վարդան - տնտեսագիտության դոկտոր, պրոֆ,

Պետրոսյան Հայկ - մանկավարժական գիտ. դոկտոր, պրոֆ,

Սաֆարյան Գառնիկ - իրավագիտության դոկտոր, պրոֆ,

Վահրադյան Հասմիկ - կենսաբանական գիտ. դոկտոր, պրոֆ,

Օտարերկրյա անդամ՝

Բաբայան Արսեն - բժշկագիտ. դոկտոր, պրոֆ, «OrthoLiga Spine and Joint Center» Մյունխեն, Գերմանիա,

Բալասանյան Դիանա - բանասիրության դոկտոր, Լա Լագունայի համալսարան, Թեներիֆե, Իսպանիա

Մարիա Անջելո-Հաթար - բժշկագիտության դոկտոր, Ծերացման դեմ ամերիկյան բժշկության ակադեմիայի տնօրեն, Քուվեյթ,

Ե 813 Երևանի «Հայբուսակ» համալսարանի գիտական և գիտամեթոդական հանդես - 2022/1, Երևան: Էդիթ Պրինտ, 92 էջ

Հանդեսը պարունակում է 2021թ. Նոյեմբերի 26-ին Երևանի «Հայբուսակ» համալսարանի Իրավագիտության և միջազգային հարաբերություններ ինստիտուտի կազմակերպած «Մարդու իրավունքները և կոռուպցիան» թեմայով միջազգային գիտաժողովի նյութերը:

ՀՏԴ
ԳՄԴ

ISBN 978-99930-805-7-2

© «Հայբուսակ» հրատ., 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դ.Сафарян, Լ.Арутюнян - ГЕНОЦИД АРМЯНСКОГО НАРОДА КАК ТЯГЧАЙШЕЕ ПРЕСТУПЛЕНИЕ ПРОТИВ ЧЕЛОВЕЧНОСТИ И ПРАВ ЧЕЛОВЕКА .. 4	
Ն.Մարտիրոսյան - ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՅՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 1912-1914թթ. ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ13	13
Գ.Մուրադյան - ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՖՂԱՆՍՏԱՆՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ..... 29	29
Մ.Մուրադյան - ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՐՏԱՑՈՂՈՒՄԸ ՀԱՅՈՑ ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԵՐՈՒՄ 36	36
Լ.Մալխասյան, Գ.Սաֆարյան - ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ. ՊԱՏԱՍԽԱՆԱՏԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ 58	58
Դ.Արակեյան - ПРОТИВОДЕЙСТВИЯ КОРРУПЦИИ: ПОИСК ЭФФЕКТИВНЫХ РЕШЕНИЙ 68	68
Ռ. Սիրունյան, Կ. Առաքելյան - ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 73	73
A. Gamsakhurdia - HUMAN RIGHTS PROTECTION DURING HOSTILITIES 80	80
Ա. Սարգսյան, Ա. Մարգարյան - ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ ԱՌԵՎՏՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 86	86
Я. Стрельченко - ОБЪЕКТЫ МЕХАНИЗМА ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ КОНФЛИКТА ИНТЕРЕСОВ ИСКУССТВЕННЫМ ИНТЕЛЛЕКТОМ..... 90	90

ГЕНОЦИД АРМЯНСКОГО НАРОДА КАК ТЯГЧАЙШЕЕ ПРЕСТУПЛЕНИЕ ПРОТИВ ЧЕЛОВЕЧНОСТИ И ПРАВ ЧЕЛОВЕКА

¹Гарник Сафарян, ²Левон Арутюнян

¹Институт философии и права НАН Армении.

²Ереванский Университет Айбусак

Резюме: Основываясь на результатах комплексного анализа исторических и юридических фактов, авторы обосновывают необходимость привлечения международной ответственности за Геноцид армян, характеризуя его как тяжкое преступление против человечности, прав человека, международного права и верховенства права.

Ключевые слова: геноцид, права человека, международное право, тягчайшее международное преступление, международно-правовая ответственность.

Понятие «геноцид» происходит от лат. *genos* - племя, род и лат. *caedo* - уничтожаю, убиваю. Мировая цивилизация практически **во все эпохи своего развития** - как на Востоке, так и на Западе - знает примеры, когда представители одной расовой, национальной либо религиозной группы стремились к уничтожению представителей другой такой группы. Достаточно вспомнить о многочисленных гонениях на евреев, о массовом уничтожении христианского населения во время турецкой экспансии в Европу на протяжении XIV—XVIII вв., о трагических страницах самой европейской истории, связанных с религиозными войнами XVI—XVII вв.

Впервые геноцидом как преступлением против человечности было признано массовое истребление армянского населения по приказу властей Османской Турции [1], что зафиксировано в совместной Декларации стран-союзниц (Англии, Франции и России) от 24 мая 1915.

В годы Первой мировой войны в бывшей Османской империи имела место одна из величайших трагедий в истории человечества. Правящая клика султанской Турции, точнее говоря кровавая банда младотурецких националистов-шовинистов, организовала варварское истребление около полутора миллионов армян и превратила в дымящуюся пустыню всю Западную Армению [2].

Это чудовищное злодеяние партии младотурок (партии «Итгихад нс Тераки») было кульминацией той гнусной практики физического уничтожения армян в Турции, которую начал жестокий и коварный тиран султан Абдул Гамид еще в последней четверти XIX века. Известно, что в 1890-ых гг. было вырезано до 300 000 мирных беззащитных людей, а в 1909 г. в городе

Адана и ряде провинций Киликии - 40 000 человек. Поэтому, когда речь идет о геноциде армян в Османской империи, нужно иметь в виду не только всеобщую резню 1915-1923гг., но и массовые погромы и избиения конца XIX - начала XX вв.

Анализируя положение армян в Османской империи на рубеже XIX и XX столетий, можно усмотреть тех трагические события, которые за короткий срок трижды - в 1894-1896, 1909 и в 1915—1923гг. привели к депортации и полному истреблению армянского народа на своей исконной родине - в Западной Армении. Первое массовое уничтожение армян было осуществлено по указанию «конституционного» монарха Абдул-Хамида II. В дальнейшем младотурки, начертавшие на своем знамени борьбы против Абдул-Хамида призыв к свободе, равенству и братству «соотечественников-османов», взяли на вооружение расистские идеи о национальной исключительности турок, дошли в своей шовинистической политике до организации геноцида армянского народа.

В справочнике «Турецкая республика» подготовленном советскими учеными, сказано: «Из 2 млн. армян, живших в Турции до первой мировой войны, в 1965 г. осталось, по официальным данным, 33 тыс. ...Многие армяне, как и другие национальные меньшинства, скрывают свою национальную принадлежность» [3].

Западные армяне, находившиеся под господством турецкой деспотии, подвергались бесчеловеческому угнетению и неслыханным притеснениям. Социальный и национальный гнет принимал здесь самые уродливые и позорные формы. Необузданный произвол султанов и пашей не имел границ. Положение армян как бесправных «гяуров» было невыносимым; они постоянно находились под угрозой погромов и резни.

«Участь армян, как и других христиан Турции, достойна сожаления... Я видел несколько армян с отрезанными ушами и носами, что было сделано не по суду, а по произволу и насилию какого-нибудь богатого и влиятельного старшины, может быть члена местного дивана. Они постоянно находятся в тревожном состоянии». Так писал русский генерал М. Лихутип, побывавший в 1854-1855гг. в Западной Армении [4].

Корреспондент лондонской газеты «Таймс» Норман, говоря о положении армян в 1877г., когда только что началась русско-турецкая война, отмечал неслыханные жестокости турецких войск над мирным населением Западной Армении. «Положение армян о стране, по которой прошла армия Исмаила-паши, крайне бедственно. Из 122 деревень Алашкертской равнины все, за исключением девяти, полностью разрушены... Город Баязед и окрестные селения постигла та же участь. В большинстве этих мест мужчины, женщины и дети были убиты самым жестоким образом» [5].

В донесении от 14 марта 1882г. на имя русского посла в Константинополе Новикова исполняющий должность российского вицеконсула в Ване писал: «Считаю долгом заявить, что действительно положение здешних армян, систематически преследуемых турками, стало невыносимее, чем когда-либо. Нужно быть здесь, на месте, чтобы судить, до каких возмутительных пределов доходят преследования турками армян» [6]. Комитет армянских патриотов в Европе, обращаясь к министрам иностранных дел европейских государств, писал, что в результате заранее продуманной политики турецкого правительства в Западной Армении «гибнут люди, уничтожаются хозяйства, проводится в жизнь план истребления. Со времени принятия статьи 61 Берлинского трактата турецкое правительство тайно направляет все свои усилия к истреблению армянской нации на ее родине» [7].

Посол США в Константинополе Томпсон в письме от 13 марта 1893г. сообщал английскому послу Клеру Форду: «Из докладных записок, полученных мною из Марзвана от консула Соединенных Штатов Джюйетта, я все больше убеждаюсь в том, что вписанное в сообщениях положение христианского населения в этой беспокойной части Турции чрезвычайно тяжелое» [8]. Известный английский публицист Эм. Диллон, путешествовавший по Западной Армении, пришел к заключению, что в «армянских провинциях утвердилась зверская система управления, по сравнению с которой жестокости рабовладельческой системы южных штатов Америки представляются незначительными злоупотреблениями» [9]. Власти действовали огнем и мечом, с неслыханной жестокостью. Погромщики действовали самым жестоким образом.

Кровавую политику Абдул Гамида в отношении армянского народа полностью унаследовали его преемники - младотурки, пришедшие к власти в 1908г. [10] Будучи ярыми шовинистами-пантюркистами, они превзошли кровавого султана.

«Их стремление отуречить славян, армян, евреев, греков и т. д., населяющих Оттоманскую империю, приняло более грубый и настойчивый характер, чем при Абдул Гамиде», - писала газета «Правда» в 1912г [11].

Свою людоедскую политику младотурки решили применять прежде всего в отношении армян. Дело в том, что, преследуя агрессивные цели, они стремились, в частности, захватить и присоединить к Турции Кавказ. Но этому в значительной мере мешал армянский народ, придерживавшийся, как известно, русской ориентации, ибо свое освобождение от невыносимого османского ига он связывал с Россией. Чтобы устранить препятствие на своем пути на Кавказ и кончить с Армянским вопросом вообще, младотурки решили истребить армянский народ.

В воспоминаниях и письменных указаниях ряда ответственных чиновников Турции того времени сохранились сведения о тайном совещании младотурец-

ких заправил, на котором было принято чудовищное решение об истреблении армянского народа. Вот, например, что говорил на этом совещании один из руководителей иттихадистов доктор Назым-бей: «Армянский народ надо уничтожить в корне, чтобы ни одного армянина не осталось на нашей земле и забылось само это имя. Сейчас идет война, такого удобного случая больше не будет. Вмешательство великих держав и шумные протесты мировой прессы останутся незамеченными, а если они и узнают, то будут поставлены перед совершившимся фактом, и тем самым вопрос будет исчерпан. На этот раз наши действия должны принять характер тотального истребления армян; необходимо уничтожить всех до единого... Я хочу, чтобы на этой земле турок и только турок жил и безраздельно господствовал. Пусть исчезнут все нетурецкие элементы, к какой бы национальности и религии они не принадлежали» [12].

В таком же каннибальском духе выступали и другие участники совещания, в том числе военный министр Энвер-паша, министр внутренних дел Талаат-паша и др. Сговорившись между собой, они выработали план истребления армян, который и осуществили в разгар Первой мировой войны, осуществили тайно, методично, беспощадно.

Вначале правительство турецких извергов под предлогом мобилизации в армию призвало на военную службу молодых армян, но вскоре эти невинные люди были разоружены, переведены «в рабочие батальоны» и отдельными группами тайно расстреляны.

24 апреля 1915 г. и в последующие дни были арестованы, а затем вероломно уничтожены несколько сот представителей интеллигенции западных армян. Покончив таким образом с основной частью взрослого мужского населения и многими активными деятелями армянского общества, способными организовать вооруженное сопротивление своего народа, гнусные убийцы перешли далее к открытой и массовой резне женщин, детей и стариков. Часть беспомощного населения была уничтожена в родных селах и городах, часть, насильственно выселенная, в пути, на чужих дорогах, местными грабителями и специально организованными бандами из числа уголовников, выпущенных из тюрем. Те же, кто добрался до знойных пустынь Месопотамии, погибли, изнуренные голодом, болезнями, от рук жандармов и наемных убийц.

Мировая война стала для младотурок благоприятной возможностью решить эту проблему с меньшим шумом и с большим «успехом». И западные армяне были уничтожены со всей бесчеловечностью, присущей вандалам. Армянский очаг был разрушен. Историческая родина армян, где на протяжении веков была создана одна из великих цивилизаций, обезлюдела.

По данным патриаршества, потери армянского народа составили 1,5 млн. человек [13]. И сегодня все новые и новые архивные материалы подтвержда-

ют факт планомерной, преднамеренной программы уничтожения армянского народа Османской империи. Факт осуществления Османским правительством Геноцида армян обоснован, признан и подтвержден свидетельствами очевидцев, законами, резолюциями и решениями различных стран и международных организаций.

Официальное признание армянских погромов как первого в истории факта, получившего юридическую оценку именно как геноцид в отношении целой нации, подтверждено также в Заявлении Государственной Думы Российской Федерации от 14 апреля 1995г. «Об осуждении геноцида армянского народа 1915-1922гг.» [14].

Однако понадобилось еще одна мировая война для того, чтобы мир осознал не просто ужас и бесчеловечность подобного деяния, но и было выработано понимание его преступности и наказуемости как одного из тягчайших преступлений против человечности и в частности, против прав человека.

В конвенции о предупреждении преступления геноцида и наказания за него (1948г.) прямо указывается, что потерпевшими от этого преступления могут быть представители (члены) национальной, расовой, этнической или религиозной группы.

Многие авторы отмечают, что, по существу, именно с определения преступности геноцида и наказуемости этого деяния в международно-правовых актах начался процесс формирования международного уголовного права как юридического феномена мировой культуры [15]. В мировой юридической практике после Второй мировой войны обвинение в осуществлении геноцида официально выдвигалось при расследовании преступлений против человечности, совершенных в Руанде.

И так, можно констатировать, что геноцид - это международное преступление против человечности и прав человека. Согласно ряду международных документов, в понятие «международное преступление» включаются «преступления против мира и человечества» и «преступления против международного права». Они выражаются в нарушении принципов и норм международного права, имеющих основополагающее значение для обеспечения мира, защиты человеческой личности и жизненно важных интересов международного сообщества в целом.

Статья 6 Устава Международного военного трибунала, созданного для суда над военными преступниками, включает в категорию международных три вида преступлений против человечества:

«а) преступления против мира, а именно: планирование, подготовка, развязывание или ведение агрессивной войны или войны в нарушение международных договоров, соглашений или заверений, или участие в общем плане или заговоре, направленных к осуществлению любого из вышеперечисленных

действий:

б) военные преступления, а именно: нарушение законов или обычаев войны. К этим нарушениям относятся: убийства, истязания или увод в рабство или для других целей гражданского населения оккупированной территории; убийства или истязания военнопленных, или лиц, находящихся в море; убийства заложников; ограбление общественной или частной собственности; бессмысленное разрушение городов и деревень; разорение, не оправданное военной необходимостью, и другие преступления;

с) преступления против человечности, а именно: убийства, истребление, порабощение, ссылка и другие жестокости, совершенные в отношении гражданского населения до или во время войны, или преследование по политическим, расовым или религиозным мотивам в целях осуществления или в связи с любым преступлением, подлежащим юрисдикции Трибунала, независимо от того, являлись ли эти действия нарушением внутреннего права страны, где они были совершены, или нет».

Конвенция 1948г о предупреждении преступления геноцида и наказании за него относит к категории международных преступлений также геноцид (ст. 1).

Защита прав человека после Второй мировой войны, стала объектом международного правового регулирования.

Международная защита прав человека - это совокупность правовых норм, определяющих и закрепляющих в договорном порядке права и свободы человека, обязательства государств по практическому претворению в жизнь этих прав и свобод, а также международные механизмы контроля за выполнением государствами своих международных обязательств в этой отрасли права и непосредственной защиты погранных прав отдельного человека [16].

Координационным центром сотрудничества государств по защите прав и свобод человека после второй мировой войны стала ООН. Она содействует повышению уровня жизни, полной занятости населения и условиям экономического и социального прогресса и развития; разрешению международных проблем в области экономической, социальной, здравоохранения и других проблем; международному сотрудничеству в области культуры и образования; всеобщему уважению и соблюдению прав человека и основных свобод для всех, без различия расы, пола, языка, религии (ст. 55 Устава ООН). Ответственность за практическое выполнение такого сотрудничества возложена на Генеральную Ассамблею ООН, ЭКОСОС и Верховного комиссара ООН по правам человека.

Подавляющее число важнейших международных соглашений по защите прав и свобод человека разработано в рамках ООН и ее специализированных учреждений. К их числу относятся Всеобщая декларация прав человека 1948г. Международный пакт об экономических, социальных и культурных правах с

факультативным протоколом I и Международный пакт о гражданских и политических правах 1966г. с факультативными протоколами I и II, Конвенция о согласии на вступление в брак, брачном возрасте и регистрации брака 1962г. (Россия не является участником), Конвенция о предупреждении преступления геноцида и наказании за него 1948г., Конвенция о пресечении преступления апартеида и наказании за него 1973г., Международная конвенция о ликвидации всех форм расовой дискриминации 1966г., Конвенция против пыток и других жестоких, бесчеловечных или унижающих достоинство видов обращения и наказания 1984г. и др.

Одна из основных аксиом современной доктрины международного права заключается в том, что безопасным мир может стать только при соблюдении прав человека. Данная связь четко закреплена в ст. 28 Всеобщей декларации прав человека, в которой подчеркивается, что «каждый индивид имеет право на такой социальный и международный порядок, при котором права и свободы, изложенные в Декларации, могут быть полностью осуществлены». Как справедливо утверждает американский, профессор Б. Бузан в своей работе

«Народы, государства и страх: проблемы национальной безопасности в международных отношениях», безопасность индивида базируется на национальной безопасности, которая, в свою очередь, зависит от обеспечения прав и свобод человека в обществе, а это все ведет к укреплению международной безопасности [17].

Только свободное общество людей, объединенных в правовое демократическое государство, создает наилучшие условия для всеобщего соблюдения прав своих членов. И для того, чтобы неповторились в будущем погромы народов (нации), унижения прав человека, необходимо привлечь к ответственности виновных подобных преступлений: Субъектом таких преступлений могут быть - государства (правительство), должностные лица, исполнители, преступные организации и т.е.

В этой связи, актуальным становился и вопрос об ответственности турецкой власти (в частности - Турецкая Республика, как правопреемник Османской империи) за геноцид армян в 1915-

Поэтому независимо от того, является ли то или иное государство участником Конвенции и запрещают ли его законы совершение геноцида, лица, виновные в данном международном преступлении, подлежат привлечению к суду и наказанию. Как справедливо подчеркивается в Консультативном заключении Международного Суда ООН от 28 мая 1951 г. относительно оговорок в отношении Конвенции о предупреждении преступления геноцида и наказании за него, «принципы, положенные в основу этой Конвенции, являются общепризнанными и вследствие этого обязательны для всех государств даже при отсутствии каких-либо договорных связей».

Գրականության ցանկ

1. Наумов А.В., Кибальник А.Г., Орлов В.Н., Волосюк П.В. Международное уголовное право. М., 2004, с. 216.
2. Геноцид армян в Османской империи: Сборник документов и материалов. /Под ред. М.Г Нерсисяна. 2--е: доп. изд. Ереван, 1982, с. III.
3. Турецкая республика. М., 1975, с. 32.
4. Лихутин М. Русские в Азиатской Турции в 1854-1855 годах. Спб., 1863, с. 168.
5. Norman C. V. Armenia and the Campaign of 1877-1878. London, 1878, p. 299-300.
6. Архив внешней политики России (АВПР). Главный архив, д. 119. л. 48-49.
7. АВПР. Посольство в Константинополе, д. 3133, л. 27-28.
8. Геноцид армян в Османской империи: Сборник документов и материалов. /Под ред. М.Г Нерсисяна. 2--е: доп. изд. Ереван, 1982, с V.
9. Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году/ М., 1896, с. 329.
10. Подробно см., Киракосян Дж. С. Молодотурки перед судом истории. Ереван, 1986.
11. «Правда», 1912, № 76 // В книге «Геноцид Армян...», с. VI»,
12. Геноцид армян. Сборник материалов. Составитель, ответственный редактор-доктор исторический наук. Барсебян Лавренти. Ереван, 2005, с. 4 (на арм. яз.).
13. Мирагенц В. Документы армянской резни, част 1. Константинополь, 1920, с. 75 (на арм. яз.).
14. Российская газета. 1995. 17 апреля.
15. Карпец И. И. Преступления международного характера. М., 1979. С. 31-54
16. Международное публичное право. Учебник. /Под ред. К.А. Бекашева. М., 1998, с. 191-192.
17. Buzan B. People, States and Fear: The National Security Problem in International Relations North Carolina, 1983.

ARMENIAN GENOCIDE AS THE GRAVEST CRIME AGAINST HUMANITY AND HUMAN RIGHTS

¹Garnik Safaryan, ²Levon Harutyunyan

¹Doctor of Law, Professor YHU, ²PhD student of YHU

Based on the results of a comprehensive analysis of historical and legal facts, the authors justify the need to bring international responsibility for the Armenian Genocide, describing it as a grave crime against humanity, human rights, international law, and the rule of law.

Keywords. Genocide, human rights, international law, serious international crime, international legal responsibility.

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ
ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԴԵՄ ՈՒՂՂԱԾ ԾԱՆՐԱԳՈՒՅՆ
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

¹Գառնիկ Սաֆարյան, ²Լևոն Հարությունյան

¹իրավ.գիտ. դոկտոր, ԵՀՀ պրոֆեսոր, ²ԵՀՀ հայրորդ

Ամփոփագիր. պատմական և իրավաբանական փաստերի համակողմանի վերլուծությամբ առաջին աշխարհամարտի փարիներին օսմանյան թուրքիայում հայերի Կեղահանումներն ու ջարդերը որակելով որպես մարդկության, մարդու իրավունքների և միջազգային իրավունքի ու իրավակարգի դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն՝ ցեղասպանություն, հիմնավորվում է այդ ոճրագործությունների համար մեղավորներին միջազգային պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտությունը:

Բանալի բառեր. ցեղասպանություն, մարդու իրավունքներ, միջազգային իրավունք, միջազգային ծանրագույն հանցագործություն, միջազգային իրավական պատասխանատվություն:

Քննակում.

Մ.Աբրահամյան. Հետաքրքիր թեմա է և խիստ արդիական

Ն.Մարտիրոսյան. Ցեղասպանության կոնվենցիան արդյո՞ք տարածվում է հայոց ցեղասպանության վրա:

Գ. Սաֆարյան. Ինչպես նշեցի Հայոց ցեղասպանության վրա են տարածվում ոչ միայն իր ժամանակաշրջանի միջազգային իրավական ակտերը և սովորության իրավունքը, այլև արդի միջազգային իրավունքի ակտերը, միջազգային տրիբունալների որոշումները, այդ թվում 1948թ. Ցեղասպանության կոնվենցիան:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 1912- 1914թթ. ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ

Նարեկ Մարտիրոսյան

Երևանի «Հայբուսակ» համալսարան, Երևանի Պետական Համալսարան

Ամփոփագիր. 1908թ. երիտթուրքական հեղաշրջմանը հաջորդած շրջանում արևմտահայությունը շարունակում էր ենթարկվել բռնությունների, թալանի, կոտորածի, որոնք կրում էին համակարգված բնույթ: Տեսնելով, որ անհնար է հանսել իրենց իրավունքների պաշտպանությանը նույնիսկ գերագույն օրենսդիր մարմնում՝ օսմանյան խորհրդարանում, արևմտահայությունը շուտով դիմում է միջազգային հանրության օժանդակությանը: Կազմվում են բարենորոգումների չորս նախագծեր, որոնցից ձևավորվում է մեկը և հանձնվում Կ.Պոլսի ռուսական դեսպանությանը: Դեսպանատան թարգման Ա. Մանդելշտամի կատարած իրավական որոշ փոփոխություններից հետո այն հանձնվում է Բ. Դռանը: Տերությունների, ապա ռուս-գերմանական բանակցությունների արդյունքում այդ նախագիծը ենթարկվում է շոշափելի փոփոխությունների: Արդյունքում՝ 1914թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրով օսմանյան կառավարությունը պարտավորվում է իրագործել փոփոխումային փարբերակով ընդունված նախագիծը: Սակայն օգտվելով առաջին աշխարհամարտի բռնկումից՝ երիտթուրքական իշխանությունները հրաժարվում են մարդու հիմնարար իրավունքները պաշտպանող անգամ այս համեստ ծրագրից:

Բանալի բառեր. Արևմտյան Հայաստան, օսմանյան խորհրդարան, Հայկական հարց, Կ.Պոլսի դեսպանատնով, բարենորոգումների ծրագիր, մարդու հիմնարար իրավունքներ:

Ներածություն

XIX դարավերջին և XX դարասկզբին Արևմտյան Հայաստանում առկա էին ինքնորոշման, քաղաքացիական, սեփականության և այլ բնույթի բազմաթիվ իրավական խնդիրներ: Այս խնդիրներն ի հայտ էին եկել իրավահավասարության բացակայության և սուլթանական բռնապետության պայմաններում: Արևմտահայությունը ենթարկվում էր ունեզրկման, առևանգումների, ցեղասպանության, ապօրինի հարկահանության, մահմեդականների հետ բռնի համակեցության և այլ կամայականությունների: 1894-1896թթ. Համիդյան ջարդերի և դրանց հաջորդած շրջանում, արևմտահայերից շատերը կոտորվել էին, շատերն էլ արտագաղթել: Նրանց պատկանող անշարժ գույքը կամ կառավարության կողմից տրամադրվել էր մահմեդական ներգաղթյալներին կամ զավթվել էր տեղական թուրք և քուրդ պաշտոնյաների կողմից: 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո վերադառնալով հայրենիք՝ հայերը տեսնում են, որ իրենց հայրենի տները, հողերը և նույնիսկ գյուղերը բնակեցված են մահմեդականներով: Ավելին՝ պարզվում է, որ այս մահմեդականները նույնիսկ սեփականության կեղծ վկայականներ ունեն: Երիտթուրքերի հեղաշրջումից հետո Արև-

մտյան Հայաստանում հիմնականում պաշտոններին մնացել էին նախկին վարչակարգի ներկայացուցիչները, ուստի անհիմաստ էր նրանցից որևէ օրինական որոշում ակնկալելը: Ավելին, հենց այդ պաշտոնյաներն էին հարկային և կադաստրային կամայականությունների հեղինակները ուստի հայերին ոչինչ չէր մնում, քան իրենց իրավական հարցերի լուծումը որոնել օսմանյան խորհրդարանում:

Բարենորոգումների հարցի արգելակումը

1908թ. Հուլիսին տեղի ունեցած հեղաշրջումից հետո Օսմանյան կայսրությունում հաստատվեցին «սահմանադրական կարգեր», որը պատմության մեջ հայտնի է «սահմանադրական երկրորդ շրջան» անունով: Նույն թվականի աշնանը ձևավորվեց երկպալատ խորհրդարան, որի ստորին պալատում՝ երեսփոխանական ժողովում հայտնվեցին 12 հայ պատգամավորներ [1]: Թեև Միդհատ Փաշայի հեղինակած Սահմանադրության համաձայն Օսմանյան կայսրությունում հաստատվում էր օրենքի գերակայություն և կայսրության բոլոր քաղաքացիներն ստանում էին իրավահավասարություն, իշխանության եկած Երիտթուրքերը որդեգրեցին Ամբոլու Համիդի ցեղասպան քաղաքականությունը, ինչի առաջին դրսևորումը եղավ 1909թ. Կիլիկիահայերի կոտորածը, որին զոհ գնաց 30000 մարդ: Ավելին՝ սկսած 1909թ. ամռանից Արևմտյան Հայաստանում վերսկսեցին հայերի առևանգումները, թալանը, հողագրկումը, հարկային և այլ կամայականությունները: Թե՛ առաջին (1908-1912թթ.), թե՛ երկրորդ (1912թ.մայիս-հուլիս) գումարման խորհրդարաններում հայ պատգամավորները ամեն պատեհ առիթով բարձրացնում են այս խնդիրները, ներկայացնում են խնդրագրեր, հուշագրեր, մշակում են օրինագծեր և նույնիսկ բարենորոգման նախագծեր: Սակայն Երիտթուրքական իշխանությունները Սահմանադրության հռչակումից հետո՝ հինգ տարի շարունակ, ոչինչ չարեցին արևմտահայերի համար կենսական նշանակություն ունեցող խնդիրների լուծման ասպարեզում: Ստանալով թուրք և քուրդ տոհմիկ ազնվականության՝ էշրաֆների աջակցությունը, երիտթուրքերը վարում էին հայաբնակ վիլայեթները հայազրկելու ծրագրավորված քաղաքականություն: Երիտթուրքերը տապալեցին նույնիսկ Սահմանադրության գլխավոր դրույթներից մի քանիսը, ինչպիսիք էին՝ օրենսդիր և գործադիր իշխանությունների տարանջատման սկզբունքը և ընտրական օրենքը: Արևմտահայությունը, տեսնելով որ նույնիսկ սահմանադրական կարգը չի պաշտպանում իր հիմնարար իրավունքները, շուտով դիմում է միջազգային հանրության օժանդակությանը:

Հայկական հարցի վերաբացման նախադրյալները և նախապատրաստական աշխատանքները

1912թ. հունիս-հուլիս ամիսներին Օսմանյան կայսրությունում տեղի է ունենում հեղաշրջում, իշխանության է գալիս «Հյուրիեթ վե իթիլաֆ» («Ազատու-

թյուն և համաձայնություն») կուսակցությունը, որը 1912 հուլիսին անժամկետ լուծարում է երկրորդ գումարման խորհրդարանը՝ պատճառաբանելով Բալկանյան պատերազմի բռնկումով: Խորհրդարանի բացակայության և կառավարության անգործության պայմաններում արևմտահայությանն այլ ելք չէր մնում, քան դիմել Մեծ տերություններին՝ Հայկական հարցի լուծման համար:

Իթիլաֆի իշխանության գալուն և խորհրդարանի լուծարմանը զուգահեռ, Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում՝ հատկապես Վանում, նոր թափ է տրվում հայության սպանություններին ու թալանին: Վանի, Բաղեշի, Մուշի և Սեբաստիայի առաջնորդարանները նամակներ են ուղարկում Կ.Պոլսի պարտրիարքին՝ ներկայացնելով այդ նահանգներում կատարված աղետալի իրադարձությունները: 1912թ. հուլիսի 19-ին Աղթամարի կաթողիկոսությունից հեռագիր է ստացվում պատրիարքարան, Բաղեշում, Խիզանում և Շատախում վեց հայերի սպանության մասին [2]: Վանից ևս մի քանի հեռագրեր նման բովանդակությամբ պատրիարքարանը ստանում է դրան հաջորդած ժամանակաշրջանում: Այդպիսի մի հեռագիր էլ ստացվում է Մուշից սեպտեմբերի 1--ին, որում նշվում է նաև, որ կառավարությունը ոչինչ չի ձեռնարկում [3]:

Այդ ջարդերը տագնապել էին հայությանը: Առավել վտանգավոր էր այն, որ այս անգամ դրանք կրում էին ծավալուն և շարունակական բնույթ:

1912թ. աշնան սկզբին Օսմանյան տերության արտաքին քաղաքական դրությունը ճգնաժամային էր: Իտալա-թուրքական պատերազմը դեռ չավարտված պետությունը ներքաշվեց նոր՝ առավել վտանգավոր Բալկանյան պատերազմի մեջ: Իթիլաֆական իշխանությունը, որ Օսմանյան կայսրությունում տեղեկ ընդամենը մի քանի ամիս, ոչ միայն չկարողացավ նվազագույնի հասցնել պետության տարածքային կորուստները, այլև չիրականացրեց իր իսկ խոստացած բարեփոխումները: Այս քաղաքական ուժը նույնպես ականջալուր չեղավ հայության բողոքի ձայնին: Արդյունքում՝ Հայկական հարցը, որպես Արևելյան հարցի շարունակություն, վերածվելով թուրք-հայկական հակամարտության, դարձավ Օսմանյան կայսրության ամրությունը ստուգող ահեղ փորձության մի մասնիկ [4]:

1912թ. սեպտեմբերի 26-ին Ալեքսանդրապոլում տեղի ունեցած համաքաղաքային ժողովը դիմում է Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցին, որպեսզի վերջինս միջնորդի ռուսաց կայսր Նիկոլայ Երկրորդի առջև արևմտահայերին աջակցելու խնդրանքով [5]:

Հոկտեմբերի 2-ին կաթողիկոսը կոնդակ է ստորագրում, որով Մեսրոպ Եպիսկոպոս Տեր-Մովսեսյանին հրահանգում է մեկնել Պետերբուրգ և ռուսական իշխանություններին համոզել ստանձնելու հայերի հովանավորությունը: Միաժամանակ, ընդառաջ գնալով հայ ազգային գործիչների խնդրանքին՝ հայոց հայրապետը մեկ այլ կոնդակով եգիպտահայ ազգային գործիչ Պողոս Նուբար փաշային նշանակում է իր ներկայացուցիչը և հանձնարարում պատվիրակություն կազմել եվրոպական տերություններին Հայկական հարցը ներկա-

յացնելու համար:

Տեր-Մովսեսյանը իր հետ Պետերբուրգ է տանում Ամենայն հայոց կաթողիկոսի նամակը և Կ. Պոլսի պատրիարք Հովհ. Արշարունու գրությունը՝ ուղղված Նիկոլայ Երկրորդ կայսերը, որոնք հոկտեմբերի 9-ին հանձնում է Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին [6]:

Վորոնցով-Դաշկովը դրանք անմիջապես հանձնում է նախարարների խորհրդի նախագահ Վ. Ն. Կոկովցովին, որը հաջորդ օրը պետք է տեսակցություն ունենար կայսեր հետ: Վ. Կոկովցովի հանդիպումը կայսեր հետ հետաձգվում է և Վորոնցով-Դաշկովը առաջարկում է Տեր-Մովսեսյանին հանդիպել արտգործնախարար Ս. Դ. Սազոնովի հետ: Հաջորդ օրը փոխարքան հայանպաստ բովանդակությամբ նամակ է գրում և փոխանցում կայսերը:

1912թ. դեկտեմբերի 22-ին կաթողիկոս Գևորգ Ե-ին ուղղված նամակում Կովկասի փոխարքան տեղեկացնում է, որ ռուսական կառավարությունը արդեն առաջարկություն է արել Թուրքիային բարենորոգումներ իրականացնելու Արևմտյան Հայաստանում, միաժամանակ նշելով վերջին տարիներին Արևմտյան Հայաստանում հայերի դրության վատթարացման մասին [7]:

Բարենորոգումների նախագծի կազմումը և բանակցությունները ձախողելու թուրքական իշխանությունների առաջին քայլերը

Թեև Հայկական հարցը ռուսական իշխանություններին ներկայացրին հայոց հոգևեր գլուխները, սակայն այդ հարցով խիստ անհանգիստ և մտահոգ էին նաև արևմտահայ մտավորականությունն ու հասարակական-քաղաքական գործիչները: Միջազգային հարաբերություններում Հայկական հարցի վերաբացման հեռանկարը հատկապես ոգևորում էր Օսմանյան խորհրդարանի հայազգի երեսփոխաններին՝ հատկապես Գրիգոր Զոհրապին:

Օսմանյան խորհրդարանի ամենակարկառուն հռետորներից մեկը՝ Գրիգոր Զոհրապը, 1908թ.-ի հեղաշրջումից հետո, մինչև հայկական բարենորոգումների հարցով ռուսական իշխանություններին վեհափառի դիմելը, բացառապես գործել է Օսմանյան կայսրության օրենքների և նրա պետական շահերի պաշտպանության դիրքերից: Շատ հաճախ նա կարողանում էր իր գրագետ և համոզիչ ելույթներով, խորաթափանց ու հեռանկարային ծրագրերով շահել օսմանյան բազմազգ, բազմակուսակցական և բազմախավ խորհրդարանի քվեների մեծամասնությունը:

Սակայն այժմ, երբ չկար խորհրդարան, իսկ կառավարությունը անգործության էր մատնված, ոչինչ չէր մնում արևմտահայ մտավորականության այս տաղանդավոր ներկայացուցչին, քան լծվել ռուսական և եվրոպական արտաքին գերատեսչություններին Հայկական հարցը լավագույնս ներկայացնելու և հայ ժողովրդի շահերը պաշտպանելու հայրենանվեր գործին:

Գրիգոր Զոհրապը հստակորեն տեսնում էր, որ արևմտահայությունն ու հայկական լեռնաշխարհը ռազմավարական դեր են խաղում ցարիզմի հարավային սահմանների պաշտպանության գործում: Նա համոզված էր, որ

Հայկական հարցի վերաբերման գործում արևմտահայության հիմնական հենարանը Ռուսաստանն է: Այդ իսկ պատճառով Ձոհրապը 1912-14թթ.-ին բազմիցս հանդիպումներ է ունենում Կ.Պոլսի ռուսաց դեսպան Մ. Գիրսի հետ:

Հայկական հարցը միջազգային հարթակում քննարկման առարկա դարձնելու հարցում կարևոր դեր են ունեցան հայոց ազգային ժողովը և Կ.Պոլսի հայոց պատրիարքարանը: Վերջինս չի բավարարվում ռուսաց կայսերն ուղղած Հովհ. Արշարունու գրությունով: 1912թ. դեկտեմբերի 21-ին պատրիարքարանի խառը ժողովն ընտրում է քաղաքական մի մարմին, որն ստանձնում է արտաքին ուժերի հետ բանակցելու, բարենորոգումների ծրագիր մշակելու և դրա իրագործմանը հետամուտ լինելու իրավասություններ [8]: Այս մարմինն ստանում է «Ապահովության հանձնաժողով» անվանումը: Հանձնաժողովի նախագահն էր Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանը: Կրոնական ժողովի անունից անդամակցում է Գրիգոր վրդ. Պալաքյանը, իսկ քաղաքական ժողովի կողմից ընտրվում են Ստեփան Գարայանը, Ոսկան Մարտիկյանը, Լևոն Տեմիրճիբաշյանը, Օսմանյան խորհրդարանի նախկին երեսփոխաններ Համբարձում Պոյաճյանը (Մեծն Մուրադ) և Վահան Փափազյանը (Կոմս) [9]: Վերջինս ստանձնում է հանձնաժողովի քարտուղարի պաշտոնը:

«Ապահովության հանձնաժողովին» հաջողվում է մշտական կանոնավոր կապ պահպանել Էջմիածնի, Թիֆլիսի, Մոսկվայի, Պետերբուրգի, Փարիզի և Լոնդոնի հայ հասարակական միությունների և առանձին գործիչների հետ՝ ապահովելով բոլոր ուժերի համագործակցությունը [10]:

Օսմանյան կայսրության հետ ապագա բանակցություններում հայկական բարենորոգումների հարցը բարձրացնելիս անհրաժեշտ էր ունենալ հստակ ծրագիր: Սկզբնական շրջանում կազմվում են 4 տարբեր ծրագրեր (Գևորգ Ե կաթողիկոսի, Մոսկվայի և Պետերբուրգի հայ մտավորականության, Պողոս Նուբար փաշայի և պատրիարքարանի): Այնուհետև պատրիարքարանի «Ապահովության հանձնաժողովի» և ազգային պատվիրակության համատեղ բանակցությունների և քննարկումների արդյունքում 1913թ. ապրիլին Հովհ. Արշարունին Կ.Պոլսի ռուսական դեսպանատան թարգման Անդրեյ Մանդելշտամին է հանձնում հայկական բարենորոգումների միակ և ամբողջական ծրագիրը [11]: Ա. Մանդելշտամը ծրագիրը ենթարկում է իրավական ձևակերպումների, որից հետո հանձնում է Կ.Պոլսի վեց մեծ տերությունների դեսպանատներին՝ քննարկման համար:

Ընթացող Բալկանյան պատերազմը և Հայկական հարցի վերաբացումը թուրք կառավարող շրջաններին հարկադրում էր որոշակի քայլեր ձեռնարկել արևմտահայ բնակչության տարրական կարիքները հոգալու համար: 1912թ. հոկտեմբերի 18-ին կազմվում է նոր կառավարություն իթիլաֆական Քյամիլ փաշայի վարչապետությամբ: Նոր կառավարությունը Հայկական հարցում մեծ տերությունների միջամտությունը կանխելու նպատակով սկսեց քննարկել հայկական չորս վիլայեթներում՝ Վան, Խարբերդ, Բիթլիս և Դիարբեքիր, բարենորոգումներ:

րոգումներ անցկացնելու մի նախագիծ, որի հեղինակը ներքին գործերի նախարար Ռեշիդ բեյն էր: Թուրքական նախագծի ի հայտ գալը արևմտահայ հասարակական քաղաքական շրջանների կողմից ընդունվեց ակնհայտ սառնությամբ, քանզի դրանում բացակայում էր գլխավորը՝ բարենորոգումների նկատմամբ վերահսկողությունը: Դեկտեմբերի 8-ի քննարկմանը մասնակցեցին նաև հայազգի անհատ գործիչներ, որոնք արևմտահայ ժողովրդին ներկայացնելու լիազորություններ չունեին: Հրավիրյալների թվում էր նաև օսմանյան խորհրդարանի նախկին պատգամավոր Նազարեթ Տաղավարյանը, ով ոչ միայն քննադատության ենթարկեց Ռեշիդ բեյի նախագիծը, այլև դեկտեմբերի 11-ի երկրորդ քննարկման ժամանակ ներկայացրեց հայկական բարենորոգումների իր հեղինակած նախագիծը [12]: Իթիլաֆական կառավարությունը մերժեց Տաղավարյանի նախագիծը քննարկելու առաջարկը, իսկ որոշ ժամանակ անց մոռացության մատնեց Ռեշիդ բեյի նախագիծն իրագործելու խոստումը:

1913թ. հունվարի 10-ին վերադառնալով իշխանության ղեկին՝ երիտթուրքերը սկզբում փորձեցին մոռացության մատնել հայկական բարենորոգումների խնդիրը, իսկ այնուհետև, հաշվի առնելով ռուսական դիվանագիտության ակտիվությունը, ստիպված էին որոշակի քայլեր ձեռնարկել:

Հայկական հարցի միջազգայնացումը ձախողելու նպատակով նրանք հայազգի երեսփոխաններ Գ. Զոհրապի և Պ. Հալաճյանի միջոցով փորձում են վերականգնել նախկին հարաբերությունները դաշնակցության հետ: Իթթիհատից բանակցություններին մասնակցում են Խալիլ բեյը, Թալեաթը և Միդիատ Շյուքրին: Դաշնակցությունը ներկայացնում էին Խաչատուր Մալումյանը (Ակնունի), Օսմանյան խորհրդարանի նախկին հայ պատգամավորներ Գարեգին Փաստրմաջյանը (Արմեն Գարո) և Հովհաննես Սերենկուլյանը (Վարդգես): Իթթիհատականները ներկայացնում են չորս պահանջ.

ա) չօգտվել նրանից, որ Բալկանյան պատերազմի արդյունքում Թուրքիան հայտնվել է նեղ դրության մեջ,

բ) չդիմել արտաքին ուժերին՝ հատկապես Ռուսաստանին,

գ) համաձայնության գալ իրենց հետ և անաղմուկ առաջ տանել բարենորոգումների գործը,

դ) մերժել օտար պետությունների միջամտությունը «ներքին ընտանեկան վեճերին»[13]:

Դաշնակցական գործիչները մերժում են իթթիհատի պահանջները, քանի որ իթթիհատականների պահանջներն ունեին մեկ ակնհայտ նպատակ՝ վիժեցնել հայկական բարենորոգումների խնդիրը:

Տեսնելով, որ այս հարցը չի կարգավորվում իթթիհատ-դաշնակցություն հարաբերությունների շրջանակներում, իթթիհատականները դիմում են հին և փորձված մեթոդին՝ հայտարարում են ամբողջ կայսրության համար բարենորոգումներ իրականացնելու ցանկության մասին: Մարտի 13-ին հրապարակվում է «Վիլայեթների կառավարման ժամանակավոր օրենք» օրինագիծը, որը

հայկական բարենորոգումները փակուղու առաջ կանգնեցնելու ակնհայտ փորձ էր: Օսմանյան խորհրդարանի հայազգի պատգամավորները հանդես եկան այդ օրինագծի խիստ քննադատությամբ և մատնացույց արեցին իթեհիատի իրական նպատակները: Գրիգոր Զոհրապի գնահատմամբ, այդ օրենքի իրագործման դեպքում «հայ տարրը զրկված պիտի ըլլա որևէ ներկայացուցչութենե, բացի պարագայեն, որ կառավարության բարյացակամությունը ուզե պարգևել, որպես շնորհ» [14]:

Մեծ տերությունների բանակցությունները և նախագծի փոփոխությունը

1913թ. հունիսի 14-ին վեց տերությունների Կ.Պոլսի դեսպանատների ներկայացուցիչներից կազմվում է հանձնախումբ Ա.Մանդելշտամի նախագիծը քննելու համար [15]: Նախքան կրացվեր Կ.Պոլսի դեսպանաժողովը, Օսմանյան կայսրության մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան հատուկ շրջաբերականով դիմում է վեց տերությունների Կ.Պոլսի դեսպաններին, որտեղ հայտնում էր, որ կայսերական կառավարությունն արդեն ավարտել է ընդհանուր բարենորոգումների մշակումը, ուստի ձեռնամուխ լինելով դրանց իրագործմանը, տերություններից խնդրում է նյութական ու բարոյական օժանդակություն ցույց տալ [16]: Հունիսի 19-ին երիտթուրքերը Կ.Պոլսի դեսպանություններին հանձնեցին Օսմանյան կայսրության ընդհանուր բարենորոգումների վերաբերյալ իրենց նախագիծը՝ ամփոփված «Շրջաբերական հեռագրում», 1913թ. մարտի 18-ի «Վիլայեթների կառավարման ժամանակավոր օրենքի» լրացուցիչ հոդվածներում և գլխավոր տեսուչների իրավասություններին վերաբերող հրահանգներում:

Ա. Մանդելշտամի նախագծի քննարկումները տեղի են ունենում հունիսի 20-ից հուլիսի 11-ը՝ Կ.Պոլսի Ենի-Քյոյ թաղամասում գտնվող ավստրո-հունգարական դեսպանատանը գումարված տերությունների ներկայացուցիչների կոնֆերանսում: Ռուսական կողմը պնդում էր առանց որևէ փոփոխությունների իր նախագծի հաստատման վրա, մինչդեռ գերմանական կողմը պաշտպանում էր օսմանյան կառավարության նախագիծը [17]: Ենի-Քյոյում Եռյակ Դաշինքի՝ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի ջանքերի շնորհիվ ռուսական նախագիծը մերժվեց: Երիտթուրքական կառավարությունն ամեն ինչ արեց հայկական բարենորոգումների գործը տապալելու համար:

Ենի-Քյոյի բանակցություններից հետո, 1913թ. ամռանն ընթանում են ռուս-գերմանական բանակցությունները, որոնց ակտիվորեն ներգրավվեց նաև Գրիգոր Զոհրապը: Վերջինս անգնահատելի ավանդ ունեցավ Պետերբուրգի և Բեռլինի միջև հայկական բարենորոգումների հարցի շուրջ համաձայնություն կայացնելու համար: Զոհրապը նշանավոր արևելագետ, դոկտոր Յոհաննես Լեփսիուսի միջոցով, պատրիարքարանի աջակցությամբ ուղղակի բանակցություններ սկսեց Կ.Պոլսի գերմանական դեսպանատան հետ՝ հայկական բարե-

նորոգումների վերաբերյալ ռուս-գերմանական փոխզիջումային տարբերակ գտնելու համար [18]: Արդեն օգոստոսի սկզբին Լեփսիուսը Ջոհրապին տեղեկացնում է, որ գերմանական կողմը ի տարբերություն մեկ հայկական նահանգ ստեղծելու ռուսական պահանջի, առաջարկում է Արևմտյան Հայաստանը բաժանել երկու սեկտորների, որոնց գլուխ կանգնելու էին տերությունների համաձայնությամբ նշանակված եվրոպացի վերատեսուչները: Միաժամանակ գերմանական կառավարությունն ընդունում էր սեկտորների՝ ինչպես գլխավոր խորհուրդներում, այնպես էլ վարչական ու դատական մարմիններում քրիստոնյաների ու մահմեդականների միջև հավասարության սկզբունքի կիրառման անհրաժեշտությունը:

Ուշագրավ է, որ գերմանական արտաքին գերատեսչությունը իր՝ փոխզիջման գնալու պատրաստակամության մասին առաջինը հայտնում է ոչ թե ռուսական կողմին, այլ Գրիգոր Ջոհրապին: Այս փաստը հաստատվում է նաև Կ.Պոլսի ռուսական դեսպան Մ. Գիրսի՝ օգոստոսի 3-ին Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս. Սազոնովին ուղղված «գաղտնի» վերտառությամբ հեռագրով, որտեղ դիվանագետը նշում է, որ գերմանական դիվանագիտությունը հայկական բարենորոգումների հարցում իր փոխզիջումային տարբերակի մասին հայտնել է Գրիգոր Ջոհրապին և որ ինքն էլ այդ մասին իմացել է հենց Ջոհրապից [19]:

1913թ. ամռանն ընթացող ռուս-գերմանական բանակցությունների ժամանակ իթթիհատականները փորձում են վիժեցնել հնարավոր համաձայնությունը: Այդ նպատակով ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը, Հանս Վանգեն-հայմի զինվորական կցորդի ուղղորդմամբ, փորձում է բանակցություններ սկսել հայկական կողմի հետ: Հանդիպումը տեղի է ունենում Ջոհրապի տանը: Իթթիհատականներից մասնակցում են Թալեաթ բեյը, Խալիլ և Ֆեհմի էֆենդիները, իսկ հայկական կողմից՝ Գ.Ջոհրապը, Հ.Շահիրիկյանը և Վարդգեսը [20]: Երիտթուրքերը փորձում են հանդիպմանը պաշտոնական տեսք տալ և տպավորություն ստեղծել, թե հայերի հետ համաձայնություն են կայացնում, ուստի ռուս-գերմանական փոխզիջումային տարբերակն ավելորդ է: Ջոհրապը և հանդիպման մյուս հայ ներկայացուցիչները ճիշտ կռահեցին իթթիհատականների հեռագնա մտադրությունը և անորոշ ժամանակով հետաձգեցին կրկին տեսակցելու և արդեն պաշտոնապես բանակցելու Թալեաթի առաջարկը [21]: Բացի այդ, 1913թ. օգոստոսին կայացած ՀՅԴ 7-րդ ընդհանուր ժողովը որոշում է ընդունում Հայկական հարցի լուծման գործում այլևս հույսեր չկապել իթթիհատի հետ [22]: Այսպես ավարտվեց երիտթուրքերի և հայկական կողմի միջև բանակցությունների առաջին փուլը:

Երկրորդ փուլը սկսվեց Փարիզ մեկնած օսմանյան խորհրդարանի նախկին փոխնախագահ Պետրոս Հալաճյանի Կ.Պոլսի վերադառնալուց հետո: Սեպտեմբերի սկզբին Թալեաթը ցանկություն է հայտնում Հայկական հարցի շուրջ բանակցել Հալաճյանի հետ և նրան տալ միջնորդի կարգավիճակ: Թա-

լեաթի հետ բանակցելուց առաջ Հալաճյանը դիմում է «Ապահովության հանձնաժողովի» երկու անդամների՝ նրանց կարծիքը իմանալու համար: Երկու գործիչներն էլ բացասական պատասխան են տալիս՝ համարելով, որ դա խիստ վտանգավոր է [23]: Չնայած բացասական պատասխանին, Պ. Հալաճյանը երկու հանդիպում է ունենում Թալեաթի հետ, որոնք ևս ավարտվում են անարդյունք:

Երիտթուրքերի և հայկական կողմի միջև ընթացող բանակցությունների ժամանակ Կ.Պոլսի գերմանական դեսպան Հ. Վանգենհայնը անսպասելիորեն հրաժարվեց Մանդեյլտամի նախագծի կապակցությամբ Լեփսիուսի միջոցով կատարված բոլոր զիջումներից և առաջարկեց բավարարվել թուրքական ծրագրով: Գերմանական դիվանագիտության այս առաջարկը նպատակ ուներ հայկական շրջաններին ցույց տալ, որ ռուսական ծրագիրը հիմնովին անընդունելի է, և որ նրանց մնում է միայն մեկ ելք՝ համաձայնության գալ թուրքական կառավարության հետ:

Գերմանական կառավարության անսպասելի շրջադարձը ուղղակի շժմեցրեց հայկական կողմին: Պատրիարքարանը, իրեն խաբված զգալով, օգոստոսի 29-ին մեծ տերությունների Կ.Պոլսի դեսպաններին հանձնեց հատուկ հուշագիր: Նրանում առաջադրված էին հայկական բարենորոգումների հինգ ծրագրային պահանջներ.

1. Հայկական վեց վիլայեթների միավորումը եվրոպացի գեներալ նահանգապետի գործադիր իշխանությամբ,
2. Գեներալ նահանգապետի նշանակումը մեծ տերությունների համաձայնությամբ,
3. Մարզի բոլոր վարչական և դատական պաշտոնյաներին նշանակելու և հեռացնելու գեներալ-նահանգապետի բացառիկ իրավունքը,
4. Մահմեդականների և քրիստոնյաների միջև հավասար ներկայացուցչության սկզբունքի կիրառումը,
5. Եվրոպական հսկողության հաստատումը:

Պատրիարքարանը գտնում էր որ այս պահանջները ամեն դեպքում պետք է անխախտ մնային, քանի որ դրանք հայկական բարենորոգումների անկյունաքարերն էին [24]:

Օգոստոսի վերջերին, երբ հայկական շրջանները ընդհատեցին երիտթուրքերի հետ բանակցությունները, գերմանական կառավարությունը ստիպված եղավ վերանայել իր մարտավարությունը: Հայկական բարենորոգումների հարցում գերմանական դիրքորոշման փոփոխության մասին Սվազի հայ երեսփոխան Կարապետ Փաշայանը հայտնում է Գրիգոր Զոհրապին՝ նշելով, որ Բեռլինից ստացված իր հեռագիրը շատ գոհացուցիչ է [25]:

Օգոստոսի 28-ին պետքարտուղար ֆոն Յոզովը հայկական բարենորոգումներին նվիրված հուշագրով դիմեց ռուսական կառավարությանը, պատրաստակամություն հայտնելով գտնել միջոց, որը կբավարարեր բոլոր տերություններին:

րին: Սեպտեմբերի սկզբներին Մ. Գիրսի և Հ.Վանգենհայմի միջև ընթանում են բանակցություններ, որոնցում ռուսական կողմը ստիպված համակերպվում է սեկտորների բաժանումն ըստ թուրքական ծրագրի իրականացնելու հետ: Իր հերթին, գերմանական կողմը զիջում է գլխավոր տեսուչներին մեծ տերությունների համաձայնությամբ նշանակելու և սեկտորներում հավասար ներկայացուցչության սկզբունք կիրառելու հարցում: Ի վերջո՝ սեպտեմբերի 10-ին, փոխզիջումների շնորհիվ ռուսական և գերմանական դեսպանների միջև կայանում է համաձայնություն հայկական բարենորոգումների 6 կետերից բաղկացած ծրագրի շուրջ: Սեպտեմբերի վերջերին Մ. Գիրսը և Հ.Վանգենհայմը հայկական բարենորոգումների ռուս-գերմանական ծրագիրը ներկայացնում են երիտթուրքական կառավարությանը:

Բանակցությունները տապալելու իթթիհապի վերջին փորձը և Ռուսական կողմի քայլերը

1913թ. հոկտեմբերի 13-ին Օսմանյան մեծ վեզիրը Կ.Պոլսի ռուսական դեսպանությանը հանձնեց հատուկ գրություն, որում հայտնելով ամբողջ կայսրությունում բարենորոգումներ անցկացնելու իր հաստատ մտադրության մասին, Բ.Դուռը պարտավորվում էր անհապաղ գործադրել այդ առթիվ իր հրապարակած բոլոր օրենքները [26]:

Վարչապետի գրությունը անմիջական պատասխան չէր տալիս ռուս-գերմանական ծրագրի պահանջներին: Ընդհակառակը, խուսափելով կոնկրետ հարցերի քննարկումից, երիտթուրքական կառավարությունը կրկին ձգտում էր կեղծ խոստումներով խուսափել հայկական բարենորոգումների իրագործումից: Ինչպես պարզվեց հոկտեմբերի 13-ի Մ. Գիրսի և Սայիդ Հալիմի հանդիպման ժամանակ, թուրքական կառավարությունը, ի տարբերություն ռուս-գերմանական ծրագրի, երկու հայկական սեկտորների համար պահանջում էր ոչ թե եվրոպացի գլխավոր տեսուչներ, այլ խորհրդականներ թուրք տեսուչների համար: Իթթիհատականները հայտարարեցին, որ իրենք մտադիր են անհապաղ նշանակել թուրքահպատակ գլխավոր տեսուչներ, իսկ հետո նրանց համար մեծ տերություններից խնդրել եվրոպացի խորհրդականներ: Նույնիսկ նշվեց տեսուչների հավանական թեկնածուների անունները, որոնցից մեկը Օսմանյան խորհրդարանի նախկին փոխնախագահ Պ. Հալաճյանն էր: Այդ կերպ երիտթուրքերը ցանկանում էին ռուսական կառավարությանը կանգնեցնել կատարված իրողության առջև և հարկադրել նրան համակերպվելու եվրոպացի խորհրդականների նշանակման հետ:

1913թ. աշնանը Գերմանիան դուրս է գալիս բանակցային գործընթացից, ինչը պայմանավորված էր գերմանացի զորավար Լիման ֆոն Սանդերսի՝ Օսմանյան կայսրությունում ռազմական առաքելության հետ: 1913թ. վերջերին ռուսական կառավարության համար պարզ դարձավ, որ երիտթուրքական կառավարությունն առանց վճռական ներգործությունների չի ընդունի հայկա-

կան բարենորոգումները: Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս.Դ. Սազոնովը վարչապետ Վ. Կոկովցովին առաջարկում է ռազմական բնույթի միջոցառումներ իրականացնել, ինչպես, օրինակ, Կովկասյան սահմանին ռազմական խոշոր ուժերի կենտրոնացումը: Ռազմական բնույթի միջոցառումներին զուգընթաց, ռուսական կառավարությունն անմիջականորեն աջակցեց Բ.Դոան վրա ֆինանսական ճնշում գործադրելու Պողոս Նուբար փաշայի առաջարկի իրականացմանը:

Ռազմական և ֆինանսական բնույթի ճնշումները ժամանակավոր բնույթ էին կրելու, ուստի ռուսական դիվանագիտությունը շտապեց արագացնել համաձայնագրի կնքումը: Արդյունքում՝ 1914թ. հունվարի 26-ին, ռուսական հավատարմատար Կ. Գուլկևիչը և Օսմանյան կայսրության մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշան ստորագրեցին հայկական բարենորոգումների ռուս-թուրքական համաձայնագիրը:

1914թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրով նախատեսվում էր Արևմտյան Հայաստանը բաժանել երկու սեկտորների: Սեկտորներից յուրաքանչյուրի գլուխ նշանակվում էր եվրոպացի ընդհանուր տեսուչ: Տեսուչներին առաջարկում էին Մեծ տերությունները և հաստատում էր Բ.Դուռը՝ 10 տարով: Տեսուչներին էին ենթարկվելու վարչական, դատական, ոստիկանական և անհրաժեշտության դեպքում նույնիսկ ռազմական ուժերը: Հողային վճիռները որոշվելու էին տեսուչների անմիջական վերասիկողությամբ: Դպրոցները պահվելու էին ինչպես վիլայեթի ընդհանուր բյուջեի, այնպես էլ հավատակիցների հանգանակությունների հաշվին: Խաղաղ ժամանակ յուրաքանչյուր օսմանահպատակ իր զինվորական ծառայությունը իրականացնելու էր այն զինվորական շրջանում, որտեղ ապրում էր: Համիդիե գնդերը չէին վերացվելու, բայց վերածվելու էին պահեստային հեծելազորի: Վերակազմավորվում էր վարչական մարմինների աշխատանքը: Վարչական մարմիններում աշխատելու էին հավասար թվով մահմեդականներ և ոչ մահմեդականներ [27]: Տեսուչներն ընտրվում են չեզոք երկրներից: Կ.Պոլսում Ավստրո-Հունգարիայի դեսպան Պալավիչինին մարտի 24-ին Բ.Դոանն է ներկայացնում 5 թեկնածուների ցուցակ: Երկար քննարկումներից հետո՝ ապրիլի 2-ին, Բ.Դուռն ընտրում է հուլանդացի Լուիս Վեստենենկին և նորվեգացի Նիկոլաս Հոֆֆին [28]:

Հայկական բարենորոգումների հունվարի 26-ի համաձայնագիրը թեև իր արմատականությամբ զիջում էր Մանդեյլտամի նախագծին, առավել ևս պատրիարքարանի ծրագրին, այսուհանդերձ մեկ քայլ առաջ էր թե՛ Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածից և թե՛ Մայիսյան ծրագրից, քանի որ Օսմանյան կառավարությունը հենց ռուսական կառավարության առջև էր պարտավորվում իրականացնել բարենորոգումներ:

Հայկական բարենորոգումների հունվարի 26-ի համաձայնագիրը, չնայած իր թերություններին, անկասկած հաջողություն էր արևմտահայության համար, քանի որ որոշ երաշխիքներ էր տալիս նրա կյանքի, հիմնարար իրավունքների

իրացման համար:

Տեսուչների ժամանումը և երիտթուրքերի գործողությունները

Հայկական բարենորոգումների վերաբերյալ ռուս-թուրքական համաձայնագիրը և եվրոպացի տեսուչների նշանակումը աննկարագրելի կերպով ոգևորել էր հայկական շրջաններին: Հայերի ոգևորությունն ակնհայտ երևում է Կ.Պոլսի հայկական բոլոր եկեղեցիներում ընթերցված պատրիարք Զավեն Եղիայանի հունիսի 30-ի կոնդակից, որտեղ պատրիարքը կոչ էր անում համատեղ աշխատանքով լծվել արևմտահայության տնտեսական ու կրթական վիճակի բարգավաճմանը: Պատրիարքարանը նաև կազմում է տեսուչների իրավունքներին և պարտականություններին վերաբերող նախագիծ՝ հիմնված հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրի վրա, որը, սակայն, մերժվում է թե՛ տեսուչների և թե՛ երիտթուրքական կառավարության կողմից:

Բարենորոգումների գործադրմանն օժանդակելու տրամադրությունները էլ ավելի ուժեղացան, երբ Կ.Պոլսի ժամանեցին հայկական վիլայեթների գլխավոր տեսուչներ հոլանդացի Վեստենենկը և նորվեգացի Հոֆֆը: Նրանց նստավայրերում՝ Էրզրումում ու Վանում, հայերը տոնական պատրաստություններ էին տեսնում՝ շքեղ ընդունելություն կազմակերպելու համար:

1914թ. մայիսի 1-ից իր աշխատանքներն էր սկսել օսմանյան նորընտիր խորհրդարանը [29]: Այս խորհրդարանն իր առաջին նստաշրջանում զբաղվում է Բալկանյան պատերազմի ժամանակ ընդունած, հիմնականում ֆինանսական հարցերին վերաբերող, «ժամանակավոր օրենքների» պարտադիր, մեկ ընթերցումով հաստատման անդեմ աշխատանքով [30]:

Չնայած հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրի կնքմանը, երիտթուրքական կառավարությունը շարունակում է խոչընդոտներ ստեղծել բարենորոգումների իրականացման ճանապարհին: Երիտթուրքական կառավարությունը ռուս-թուրքական համաձայնագրի կնքումից հետո ձեռնամուխ է լինում Արևմտյան Հայաստանում թափուր պաշտոնները հապճեպ լրացնելուն: Հիմնականում այդ պաշտոններին նշանակվում են Մակեդոնիայից բերված մահմեդական պաշտոնյաները: Թուրքական դատարանները առանց ձգձգումների և որպես կանոն՝ հօգուտ մահմեդականների, շտապ ավարտում են հողային վեճերի հետ կապված հայցերը: Նոր թափ է տրվում Բալկանյան թերակղզուց մուհաջիրների վերաբնակեցմանը Արևմտյան Հայաստանում: Իթթիհատի դեկավարները ծրագրում են թշնամական ցույցեր կազմակերպել Ն. Հոֆֆի և Լ. Վեստենենկի դեմ: 1914թ. մայիսի 10-ին մի կողմից ներքին գործերի նախարար Թալեաթի, իսկ մյուս կողմից եվրոպացի տեսուչներ Հոֆֆի ու Վեստենենկի միջև կնքվում է համաձայնագիր, որը թեև հիմնված էր հունվարի 26-ի պայմանագրի վրա, սակայն իրականում կրճատում էր տեսուչների իրավասությունները [31]: Եթե ռուս-թուրքական համաձայնագրով տեսուչների պաշտոնները գրեթե հավասարեցված էր նախարարին, ապա մայիսի 10-ի հրահանգներով

նրանք վերաձվում էին նախարարի ենթակաների: Նրանք նույնիսկ չէին կարող աշխատանքից ազատել մյուսասերիֆներին, գայմագամներին, ուսուցիչներին և քննիչներին [32]: Այդքանով հանդերձ, Ն. Հոֆֆը մեկնում է Վան և ձևավորում է իր աշխատակազմը:

Երիտթուրքերի անվերջ ստորացումների և արհամարհանքից հետո եվրոպացի տեսուչները ազատվեցին աշխատանքից և 1914թ. ամռանը հեռացան Օսմանյան կայսրությունից: Հուլիսի 24-ին Ն. Հոֆֆը ռուսական նավով հեռանում է Կ.Պոլսից: Գլխավոր տեսուչին ճանապարհելու չի գնում և ոչ մի թուրք պաշտոնյա: Արդյունքում երիտթուրքերին հաջողվում է ևս մեկ անգամ ձախողել բարենորոգումների իրագործումը:

Եզրակացություն

Այսպիսով՝ դեռևս XIX դարավերջից Օսմանյան կայսրությունում պետական մակարդակով սկիզբ առած հակահայկական քաղաքականությունը շարունակվում էր նաև սահմանարդական կարգերի հաստատումից հետո: Երիտթուրքական հեղաշրջումից չանցած մեկ տարի Արևմտյան Հայաստանում շարունակվում և գնալով նոր թափ են ստանում կականց և աղջիկների առևանգումները, ունեզրկումը, թալանը, հարկային և այլ կամայականությունները: Օսմանյան կայսրությունում հաստատված «սահամնադրական կարգերը» փաստացի չէին ապահովում մարդու հիմնարար իրավունքների իրացման ամենաչնչին պայմանները: 1912-1914թթ. Բարենորոգումների նախագծերը միտված էին Արևմտյան Հայաստանում իրավահավասարության հաստատմանը, ինչը պետք է տեղի ունեցած լիներ Սահամնադրության հռչակումով:

1914թ. Հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրով ընդունված բարենորոգումների ծրագիրն իր բոլոր թերություններով հանդերձ հնարավորություն էր ընձեռելու արևմտահայությանը իրացնելու իրենց հիմնարար իրավունքները:

Հաստատվում էր Արևմտյան Հայաստանում կրոնական և ազգային իրավահավասարությունը: Ապահովվում էր արևմտահայերի ազատ տեղաշարժի իրավունքը: Պաշտպանվում էր արևմտահայության սեփականության իրավունքը: Ամրագրվում էր արևմտահայության կրթության և երկրի կառավարմանը մասնակցելու բնական իրավունքը: Բարենորոգումների իրականացման վրա հաստատվում էր Մեծ տերությունների, տվյալ դեպքում՝ Ռուսաստանի վերահսկողությունը, ինչը դիտարկվում էր որպես երաշխիք:

Երիտթուրքական իշխանությունները ջանք չխնայեցին արևմտահայության գոյատևման համար անգամ այս տարրական պայմանները ապահովող ծրագիրը ձախողելու համար:

Գրականության ցանկ

1. K u r a n. Osmanleimparatorluğunda inkilâp hareketler ve milli mücadele. İstanbul, 1956, p 477:

ԵՀՀ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ 2022

- 2-3. Геноцид армян в Османской империи, сборник документов и материалов под редакцией М.Г. Нерсисяна, Ереван 1983, с. 228.
4. Дадрян В., История армянского геноцида, этнический конфликт от Балкан до Анатолии и Кавказа, Ереван 2007, с 237.
- 5-6. Սիմոնյան Հր., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք V, Երևան 2013, էջ 15:
7. Վիրաբյան Ա., Համահայկական խորհրդակցություններ(1912-1920թթ), փաստաթղթերի ժողովածու, Հայաստանի ազգային արխիվ, Երևան 2004, N 5, էջ 2-13:
- 8-10. Փափազյան Վ., Իմ հուշերը, Բ հատոր, Բեյրութ 1952թ., էջ 184:
11. Շարության Ա.Ս., Գրիգոր Զոհրապի կյանքի և գործունեության տարեգրություն, էջ 393
- 12-13. Բյուզանդիոն, 12.12.1912թ.:
14. Զոհրապ Գ., Սեբաստիայի նահանգը տնտեսական ու ազգագրական տեսակետից և հայերի դրությունը, Հայկական հարցը փաստաթղթերու լույսին տակ, Երևան 2013, էջ 45-46:
15. Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք V, էջ 540:
16. АВПР, ф. «Посольство в Константинополе», оп. 517/2, д. 3728, л. 105.
17. Записки Джемал-Паши, 1913-1919 г.г., Тифлис, 1923, с.227.
18. Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ֆ. Գրիգոր Զոհրապ, գ. 73, թ. 1-2:
19. АВПРИ, ф. «Канцелярия МИД», оп.470, д.115, л.98:
20. Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, Գիրք V, էջ 567:
21. ՀՀԱԱ, Ֆ. 57, ց. 5, գ. 49, թ. 14-16:
22. Փամպուրեան Ե., Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Ժ հատոր, էջ 29:
23. Սիմոնյան Հ., նշվ. աշխ. էջ 568:
24. АВПР, ф. «Канцелярия МИД», оп. 470, д. 115, л. 147.
25. Շարության Ա.Ս., նշվ. աշխ., էջ 407:
26. Կիրակոսյան Զ.Ս., Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Երևան 1972, էջ 291:
- 27-28. Սիմոնյան Հ., նշվ. աշխ., էջ 865:
29. Դաշինք, 3.05.1914:
30. Meclisi Mebusan Zabit Ceridesi, i:1, 1 Mayıs 1330 (1914), d:3, c:1, içtima senei:1, s
31. Շարության Ա.Ս., Գրիգոր Զոհրապի կյանքի և գործունեության տարեգրություն, էջ 178:
32. «Արարատ», օգոստոս 1914թ., էջ 697-706:

ПРОБЛЕМЫ РЕАЛИЗАЦИИ ПРАВ ЧЕЛОВЕКА В ЗАПАДНОЙ АРМЕНИИ В ПРОГРАММЕ РЕФОРМ 1912-1914 гг.

Нарек Мартиросян

*Ереванский Государственный Университет,
Ереванский университет «Айбусак»*

В период после младотурецкого переворота 1908 г. армяне продолжали подвергаться систематическому насилию, грабежам и резне. Видя, что невозможно защитить свои права даже в высшем законодательном органе – в Османском парламенте, западные армяне вскоре обратились за помощью к международному сообществу. Были разработаны четыре программы реформ, из которых был сформирован лишь один и передан в посольство Российской империи в Константинополе. После некоторых юридических изменений, внесенных переводчиком посольства России А.Мандельштамом, проект был передан Порте. В результате переговоров между Великими державами, а затем России-Германии, этот проект претерпевал ощутимые изменения. Согласно российско-турецкому соглашению от 26 января 1914 года правительство Османской империи обязалось реализовать проект, принятый в качестве компромисса. Однако, воспользовавшись началом Первой мировой войны, младотурецкие власти отказались даже от этой скромной программы по защите основных прав человека.

Ключевые слова: *Западная Армения, османский парламент, Армянский вопрос, Великие державы, переговоры послов в Константинополе, программа реформ, основные права человека.*

PROBLEMS AIMED AT THE REALIZATION OF HUMAN RIGHTS IN WESTERN ARMENIA IN THE 1912-1914 PROGRAM OF REFORMS.

Martirosyan Narek

Yerevan State University, Yerevan “Haybusak” University

After the Young Turk coup in 1908, Western Armenians continued to be systematically violated, looted and massacred. Seeing that it is impossible to protect their rights even in the supreme legislative body - the Ottoman Parliament, Western Armenians soon turned to the international community for help. There were created four reform programs one of which was formed and handed over to the Russian Embassy in Constantinople. After some legal changes made by Embassy translator A.Mandelstam, it was handed over to the Ottoman government. During the Powers and then Russian-German negotiations, this program undergoes tangible changes. Finally, in the Russian-Turkish agreement of January 26, 1914, the Ottoman government undertook to implement the program adopted as a compromise. However, taking advantage of the outbreak of World War I, Young Turk authorities abandoned even the modest program that defends fundamental human rights.

Keywords: *Western Armenia, Ottoman parliament, Armenian issue, Great powers, negotiations of ambassadors to Constantinople, reform program, fundamental human rights.*

Քննակում.

Գ. Սաֆարյան - նախ՝ զեկույցը շատ հետաքրքիր էր ու բովանդակալից: Սակայն ունեմ Կարևոր նկատառում, որը հանգում է հետևյալին:

Օսմանյան կայսրությունում, ինչպես նաև Աթաթուրքի հիմնադրած Հանրապետությունում և Էրդողանի կառավարման օրոք՝ Թուրքիայում երբեք չի եղել սահմանադրական կարգեր և մարդու իրավունքների հարգալից վերաբերմունք: Եզրույթների հետ, հատկապես գիտական զեկույցներում, անհրաժեշտ է շատ ուշադիր և զգույշ լինել:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՖՂԱՆՍՏԱՆՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Գուրգեն Մուրադյան

Երևանի Պեդագոգական Համալսարան
Երևանի մշակույթի և արվեստի պեդագոգական քոլեջ

Ամփոփագիր. քննարկվում է աֆղանական ներկայիս ճգնաժամի ակունքները՝ փորձելով ներկայացնել Աֆղանստանում մարդու իրավունքների խախտման հիմնական պատճառները: Մեր օրերում Աֆղանստանի առջև ծառայած խնդիրները մեծ մասամբ բխում են երկրի աշխարհագրական դիրքից և փոթորկուն պայմանությունից: Այդ գործոնները պայմանավորել են թույլ պեդագոգական առաջացումը, որի ներքին գործերին առանց որևէ բարդությունների խառնվում էին զանազան գերտերություններ: Ներքաղաքական ընդդիմադիր ուժերի ֆինանսավորման և օժանդակության գործում մեծ ավանդ ունի Պակիստանի քաղաքական ղեկավարությունը, որն օգնում էր Թալիբանին: Միաժամանակ իսլամի քաղաքական ազդեցության նվազեցման պարագայում է միայն հնարավոր հասնել էական հաջողությունների: Հակառակ դեպքում երկրի զարգացումը գտնվում է փակուղում:

Բանալի բառեր. Աֆղանական կոնֆլիկտ, Թալիբան, Խորհրդա-աֆղանական պայտերագմ, մարդու իրավունքներ, թմրաբիզնես

Շուրջ մեկ դար է ինչ Աֆղանական ճգնաժամը գտնվում է պատմաբանների, քաղաքագետների և զանազան միջազգային կառույցների ուշադրության կենտրոնում: Միջինասիական այս երկրի պատմությունը դեռևս հին ժամանակներից առնչվել է զանազան գերտերությունների աշխարհաքաղաքական հետաքրքրությունների շրջանակին:

Աֆղանստանի աշխարհագրական դիրքը և էթնոլեզվական խայտաբղետությունը էականորեն խանգարում են միասնական պետության և էթնոսի ձևավորմանը: Լեռնային կտրտված տեղանքը, բաց ծով ելք չունենալը, ինչպես նաև իսլամադավան երկրներով շրջապատված լինելը էականորեն նպաստում է աֆղանական հասարակության գիտակցության ցածր մակարդակի պահպանմանը [1]: Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության տվյալներով Աֆղանստանը կյանքի անբարենապաստ պայմանների և մահացության բարձր մակարդակով զիջում է միայն աֆրիկյան երկրներին [2]: Սա խոսում է բավականին խորը արմատների ունեցող կոնֆլիկտի մասին, որի հիմքերը գալիս են դեռևս 19-րդ դարից:

Մեր առջև խնդիր ենք դրել պարզել 20-րդ դարում աֆղանական պետականակերտման ձախողման պատճառները, ինչպես նաև վերլուծել մարդու իրավունքների արդի վիճակը այդ երկրում, փորձելով նշմարել տիրող ճգնաժամի լուծման ուղիները:

Աֆղանական ճգնաժամը աշխարհաքաղաքական

մրցակցության ոլորտում

Ամբողջ 19-րդ դարում բրիտանական և ռուսական կայսրությունները վարել են իրենց «Մեծ խաղը»՝ փորձելով գերիշխանություն հաստատել Միջին Ասիայում և Հեռավոր Արևելքում [3]:

Առաջին աշխարհամարտի ավարտը և Աֆղանական թագավորության վերականգնումը հույս ներշնչեցին նորանոր վերափոխումների համար: Իշխանության եկած երիտասարդ Ամանուլլա խանի առաջին քայլերը իսկապես խոստումնալից էին: Արևմտյան արժեհամակարգի և Երիտասարդ աֆղանական շարժման կրող Ամանուլլա խանը փորձեց մոդեռնիզացնել երկիրը՝ իսլամի ավանդական արժեքները փոխլրացնելով ժամանակի նվաճումներով:

Մասնավորապես 1920 թ. սեպտեմբերի 18-ին մայրաքաղաք Քաբուլում գործարկվեց առաջին ռադիոկայանը, որն ՌԽՍՖՀ նվերն էր աֆղաններին: Տարվա ավարտին բացվեց առաջին կանացի դպրոցը՝ գիմնազիայի կարգավիճակով: Հաբիբիա քոլեջի ուսանողները ֆրանսիական կառավարության միջոցներով ուղարկվեցին Փարիզ՝ զանազան գիտակարգեր ուսանելու: «Իստեկլալ» քոլեջում դասավանդումը սկսեց իրականացվել ֆրանսերենով: Դա ռաջին անգամն էր երբ պետության տարածքում դասավանդումը իրականացվում էր օտար լեզվով [4]:

Հիմնադիր խորհրդարանական ժողովի՝ «Լոյա ջիգրայի» ժամանակ Ամանուլլան հայտարարում է, որ նշանակովի Պետական խորհրդի 1000 պատվիրակին փոխարինելու է ընտրովի խորհրդարանը (Ժողովրդական ժողով) 150 պատգամավորներով:

Սահմանվում է միասնական հարկային համակարգ՝ եկամուտի 25%-ի չափով, որն եկավ փոխարինելու բնամթերքով հարկին: Դրան գումարած, առաջին անգամ սահմանվում է պատիժ մաքսանենգ քաղաքացիների և կոռումպացված մաքսային աշխատողների կատարած հանցանքների համար :

Առանձնակի ուշադրության արժանացան կանանց իրավունքները: Բացվեցին մանկական և կանացի հիվանդանոցներ: Առաջին անգամ քրեական օրենսգրքում տեղ գտան կանանց իրավունքների հիմնահարցերի վերաբերյալ դրույթներ: 1928 թ. հոկտեմբերի 2-ին Պետական խորհրդի նիստի ժամանակ Ամանուլլան հանեց թագուհի Սուրայայի գլխի չադրան և առաջարկեց բոլորին հետևել նրա օրինակին [5]:

Այս քայլերը աֆղանական պահպանողական ուժերի և հոգևոր առաջնորդների կոշտ քննադատությանը արժանացան: Սկսված քաղաքացիական պատերազմի արդյունքում Ամանուլլա խանը վտարվեց երկրից, իսկ Աֆղանստանը շուրջ 40 տարի նորից ընկղմվեց ներքաղաքական ճգնաժամի մեջ:

1970-ական թվականներին աֆղանական ներքաղաքական ճգնաժամը հասավ իր գագաթնակետին: 1973 թ. արքա Մուհամմեդ Զահիր Շահի ազգական

արքայազն Մուհամմեդ Դաուդը բռնազավթում է իշխանությունը և Աֆղանստանը հայտարարում հանրապետություն [6]:

Հանրապետության հռչակումը ավելի սրեց հիմնական էթնիկ հանրությունների՝ փուշտունների, տաջիկների, ուզբեկների և այլոց միջև առկա լարվածությունը:

Արդյունքում Դաուդին չհաջողվեց իրականացնել որևէ բարեփոխում, որը կկարգավորեր ներքին և տնտեսական հիմնախնդիրները: Կյանքի տարրական պայմանների բարելավում ընդհանրապես չարձանագրվեց: Չնայած ներքին խաղաղ տարիներին, Դաուդի կառավարումը դարձավ քաղաքացիական պատերազմի նախակարապետը:

1978թ. Սաուդյան հեղափոխությունը հերթական քաղաքական հեղաշրջումն էր, որին սակայն ԽՍՀՄ-ը անտարբեր չմնաց: Խորհրդային մասնագետները նախկինում էլ ամեն կերպ օժանդակել են աֆղանական հասարակության կյանքի բարելավմանը՝ իհարկե առաջնահերթ նպատակ ունենալով տարածաշրջանում քաղաքական ազդեցություն պահել:

1979 թ. խորհրդային զորքերը մուտք գործեցին Աֆղանստան և գրավեցին Հաֆիզուլլա Ամինի պալատը: Խորհրդային ղեկավարությունը կարծում էր, որ շատ արագ կարող է հավասարակշռություն հաստատել երկրում, սակայն խորհրդային զորքերի հրամանատարությունը չարաչար սխալվեց [7]:

10 տարի տևած ռազմական գործողությունների արդյունքում խորհրդային ուժերից զոհվեցին շուրջ 15 հազար զինծառայողներ, ավելի քան 6 հազար մարդ հաշմանդություն ձեռք բերեց, իսկ 200 զինծառայող էլ մինչ օրս անհետ կորած է համարվում:

Մուջահեդների դաշտային հրամանատարները կողմ էին իսլամական արմատականությանը և բնականաբար պահպանողական հայացքներ ունեին: Հենց այս ժամանակ էլ խորացավ մարդկանց իրավունքների ոտնահարումը: Աֆղանական պատերազմը մեծ արձագանք ստացավ նաև մամուլում և արվեստի տարբեր ոլորտներում: Մի շարք գրողների ստեղծագործություններ համաշխարհային հռչակ ձեռք բերեցին: Այս առումով աչքի են ընկնում գրականության ասպարեզում նորբլյան մրցանակակիր Սվետլանա Ալեքսիևիչի [8] և աֆղանական ծագումով ամերիկացի գրող Խալեդ Հոսեյնիի [9] ստեղծագործությունները:

Խորհրդային զորքերի դուրս բերումը նոր հնարավորություն ընձեռեց աֆղան ժողովրդին համերաշխության և խաղաղության հաստատման համար:

Աֆղանական ճգնաժամի կերպափոխումը և Թալիբանի իշխանության բռնազավթումը

Նախագահ Մուհամմադ Նաջիբուլլայի կողմից որդեգրվեց ազգային համերաշխության քաղաքականություն: Նա հույս ուներ համերաշխության հաստատման, սակայն դեպքերը զարգացումը լրիվ հակառակն ապացուցեցին:

1992 թ. Նաջիբուլլան հեռացվեց իշխանությունից և Թալիբան ծայրահեղական շարժման ներկայացուցիչները ամեն կերպ փորձեցին զավթել իշխանությունը: Նրանց դեմ մարտնչում էին մոջահիդների դաշտային հրամանատարները: 1996 թ. թալիբները գրավեցին մայրաքաղաք Քաբուլը և մտցրեցին շարիաթի իրավունքը: Նախագահ Նաջիբուլլան սպանվեց, իսկ դաշտային հրամանատար ու աֆղանական նշանավոր պետական գործիչ Ահմադ Շահ Մասուդը կոչ արեց արևմտյան ուժերին՝ աջակցել իրենց Թալիբանի դեմ պայքարում [10]:

1996-2001թթ. համարվում են աֆղանական հասարակության ամենածանր տարիները: Արևմտյան հասարակությունը շեշտակի զարգացմանը աֆղանցիները պատասխանում էին եղբայրասպան կոիվներով և արյունահեղ ահաբեկչություններով: Առաջատար դիրքերում էր հանդես գալիս Ալ-Քաիդա ահաբեկչական կազմակերպությունը:

Վերջինիս ղեկավարն էր Ուսամա բեն Լադենը, ով հայտնի էր արմատամետ հայացքներով: Նա պատասպարվեց թալիբների մոտ և սկսեց պայքար մղել Ահմադ Շահ Մասուդի ղեկավարած Հյուսիսային պլանսի դեմ: 2001 թ. սեպտեմբերին Բեն Լադենի ղեկավարած ահաբեկիչները իրականացրին Ահմադ Շահ Մասուդի սպանությունը, ինչին հաջորդեց Առևտրի համաշխարհային կազմակերպության երկնաքերերի կործանումը [11]:

Այդ տարիներին նախքան ԱՄՆ զորքերի ներխուժումը Աֆղանստանի ներսում բավականին շատ խնդիրներ կային:

1997 թ. ՄԱԿ-ի տվյալներով Թալիբանը իր ձեռքում արագորեն կենտրոնացրեց աֆղանական ափիոնի և հերոինի արտադրության 96%-ը:

Դրան գումարած 2000-ական թվականներին էականորեն ավելացան երեխաների հանդեպ իրականացված բռնությունները: 2007 թ. գնդակահարվել է դպրոցական երեխան անգլերեն սովորելու համար: 2010 թ. յոթնամյա պատանին մահապատժի է ենթարկվել լրտեսության մեղադրանքով: 2011 թ. կախաղան է բարձրացվել ութնամյա փոքրիկը, ում հայրը ծառայել է ոստիկանական ուժերում և հրաժարվել էր անդամակցել Թալիբանին [12]:

Հատուկ հրամաններով արգելվել են հեռուստատեսությունը, երաժշտությունը, երաժշտական գործիքները, կերպարվեստը, ակրոիդը, համակարգիչը, համացանցը, շախմատը ինչպես նաև կենցաղային ամենօրյա օգտագործման իրեր ու սովորույթներ [13]:

Վախի մթնոլորտում գտնվող հասարակությունը անհասկանալի իրավիճակում էր երրորդ հազարամյակի առաջին 20 տարիներին: Քաբուլում առանձնակի կարևորվում էր ամերիկյան կոնտինգենտը և իհարկե խաղաղապահ ուժերի իրականացրած առաքելությունը: 2010 թ. սկսած Աֆղանստանում խաղաղապահ առաքելություն է իրականացրել նաև հայկական զինված ուժերի ստորաբաժանումը՝ պահպանելով հասարակական կարգը և ռազմավարական կառույցների անվտանգությունը [14]:

2021 թ. ամերիկյան զորամիավորումների հեռանալուց հետո՝ թալիբները արագորեն գրավեցին մայրքաղաք Քաբուլը և իրենց իշխանությունը կրկին վերականգնեցին երկրի հիմնական մասում: Արդյունքում աֆղանցի կանայք ստիպված եղան փարանջա կրել և փողոց դուրս գալ տղամարդկանց ուղեկցությամբ: Նրանք ստիպված թողեցին իրենց առօրյա զբաղմունքը, քանի որ վախեցան բռնությունից և հալածանքներից: Չնայած անթիվ վտանգներին՝ կանայք և իրավապաշտպանները ամենօրյա բողոքի ակցիաներ են իրականացնում: 2021 թ. օգոստոսից պարբերաբար լուրեր են ստացվում իրավապաշտպանների նկատմամբ իրականացված հարձակումների մասին [15]:

Վաշինգտոնը սառեցրել է Աֆղանստանի Կենտրոնական բանկի ակտիվները՝ շուրջ 9 միլիարդ ԱՄՆ դոլլար, և արգելում է տնօրինել Արժույթի միջազգային հիմնադրամի 450 միլիոն \$ գումարը: Համաշխարհային բանկը նույնպես դադարեցրել է Աֆղանստանի օժանդակությունը:

Վերոնշյալ և նմանատիպ այլ գործոնների պատճառով աֆղանական ճգնաժամի լուծման միջոցները փակուղում են: Մոտակա ապագայում դրական որևիցե տեղաշարժ չի նշմարվում:

Նախորդ դարի ընթացքում աշխարհագրական անբարենպաստ դիրքը, քաղաքական անորոշությունը և էթնիկ բազմազանությունը Աֆղանստանում հանգեցրեց աղքատության աճի և շեշտակի ինֆլյացիայի: Դա էական ազդեցություն ունեցաքվ մարդու իրավունքների և կոռուպցիայի արմատների խորացման համար:

Տնտեսական հիմնախնդիրները գնալով վերաճեցին ճգնաժամի: Մարդիկ փորձում են վաճառել իրենց ունեցվածքը և փախչել երկրից՝ հերթ կանգնելով բանկերի առաջ, որոնք ամեն անգամ ավելի քիչ կանխիկ միջոցներ են տրամադրում: Թալիբանի նոր կառավարությունը զուրկ է անհրաժեշտ տնտեսական և հումանիտար ռեսուրսներից, որն հնարավորություն կտա հաղաթահարել ճգնաժամը:

Այն ամբողջ կրթական և դաստիարակչական ծրագրերը, որոնք նախորդ 20 տարվա ընթացքում Աֆղանստանում իրականացրել են միջազգային հանրության և աֆղանական իրավապաշտպան կառույցների ներկայացուցիչները, կանանց խմբերը և հասարակական կազմակերպությունները, ներկայումս էական վտանգի առաջ են հայտնվել:

Աֆղանական ճգնաժամի լուծումը պահանջում է տևական գործընթաց: Կարևորվում է հասարակության կրթական մակարդակի և արժեհամակարգի փոփոխությունը:

Գրականության ցանկ

1. Мейли У., Афганистан с точки зрения истории и географии// Международный журнал Красного креста, Избранные статьи из номеров 880–881, декабрь 2010 г. – март 2011 г., с. 14-20.

2. ВОЗ, //http://www.who.int/mediacentre/news/releases/2007/pr30/ru/index.html
3. Хопкирк П., Большая Игра против России. Азиатский синдром, М., 2004.
4. Бойко В., Афганистан на начальном этапе независимого развития (1920-е годы)// Афганистан и безопасность Центральной Азии. Вып. 1/ под ред. А. А. Князева. Бишкек-2004.
5. Шумов С. А., Андреев А. Р., История Афганистана. Москва, 2002, с. 215.
6. Lee Johnatan, Afghanistan: A History from 1260 to the Present: A History from 1260 to the Present Day, Reaktion Books; Revised edition, 2021, p. 405.
7. Fremont-Barnes G., The Soviet–Afghan War 1979–89 (Essential Histories), Osprey Publishing, 2012, p. 26.
8. Ալեքսիսիս Ս., Ֆինկե տղաները, Երևան, 2017:
9. Հոսեյնի Խ., Օղապարուկ թոցնողը, Երևան, 2017:
10. Grad M., Massoud: An Intimate Portrait of the Legendary Afghan Leader, Webster University Press, 2009, p. 255.
11. Գրիգորյան Ս., Իսլամական պետություն ակունքներից մինչև խալիֆայության հռչակում, Երևան, 2016, էջ 36-50:
12. «Талибан» празднует, люди бегут, США разводят руками: <https://112ua.tv/glavnye-novosti/taliban-prazdnuet-lyudi-begut-ssha-razvodyat-rukami-polnyy-gid-po-situacii-v-afganistane-588062.html>
13. Waldman A., A Nation Challenged: The Law; No TV, no Chess, No Kites: Taliban's Code, from A to Z // New York Times, 21.11.2001
14. //www.mil.am/en/pages/37
15. Մայր Աֆղանստան <https://auroraprize.com/hy/mother-afghanistan>

ОСНОВНЫЕ ПРИЧИНЫ НАРУШЕНИЯ ПРАВ ЧЕЛОВЕКА В СОВРЕМЕННОМ АФГАНИСТАНЕ

Гурген Мурадян

Ереванский Государственный Университет

Ереванский государственный колледж культуры и искусств

Политическая неопределенность и национальная многоликость в стране сопровождается ростом бедности и стремительной инфляцией, которая бьет по карману миллионов рядовых афганцев.

Экономические проблемы стремительно перерастают в кризис. Люди пытаются продать имущество и бегут из страны, стоят в очередях перед банками, которые выдают клиентам всё меньше наличных.

У нового правительства «Талибана» будет крайне мало ресурсов для борьбы с экономическим и гуманитарным кризисом. Вашингтон заморозил активы Центрального банка Афганистана на сумму более девяти миллиардов долларов и отказывается талибам в доступе к финансированию МВФ более чем на 450 миллионов долларов. Всемирный банк также приостановил помощь Афганистану.

Та работа, которую в последние 20 лет проводили представители Исламской Республики Афганистан и международного сообщества в партнерстве с афганскими правозащитниками, женскими группами, гражданскими организациями

и афганским народом, находится под серьезной угрозой.

Ключевые слова: афганский конфликт, Талибан, Советско-афганская война, права человека, наркотрафик.

MAIN CAUSES OF HUMAN RIGHTS VIOLATIONS IN MODERN AFGHANISTAN

Gurgen Muradyan

Yerevan State University, Yerevan State College of Culture and Arts

Political uncertainty and national diversity in the country are accompanied by rising poverty and rapid inflation, which hits the pockets of millions of ordinary Afghans. Economic problems are rapidly escalating into a crisis. People try to sell their property and flee the country, standing in lines in front of banks, which give out less and less cash to customers.

The new Taliban government has very few resources to deal with the economic and humanitarian crisis. Washington has frozen assets of the Central Bank of Afghanistan worth more than \$ 9 billion and is denying the Taliban access to more than \$450 million in IMF funding. The World Bank has also suspended aid to Afghanistan.

The work that representatives of the Islamic Republic of Afghanistan and the international community have carried out in partnership with Afghan human rights defenders, women's groups, civil society organizations, and the Afghan people over the past 20 years is under serious threat.

Keywords: *Afghan conflict, Taliban, Soviet-Afghan war, human rights, drug trafficking*

Քննակում.

Ելույթներ.

Գ. Սաֆարյան. -Աֆղանական կոնֆլիկտը բարդ, բազմաշերտ, կրոնա-խառն, տարբեր քաղաքական, էթնիկական, սոցիալական բնույթ ունի և որի բուն մեղավորը՝ ինքը աֆղան ժողովուրդն է, և ինքն էլ պետք է լուծի իր խնդիրները...

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՀԱՅՈՑ ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԵՐՈՒՄ

Մկրտիչ Մուրադյան

Երևանի Հայրուսակ համալսարան

Ամփոփագիր. քննության է առնում միջնադարյան Հայաստանում կիրառված Դատաստանագրքերը՝ փորձելով վերլուծել մարդու իրավունքների հիմնախնդիրների ներկայացումը վերոնշյալ իրավական կոթողներում: Ներկայացնելով իրավունքի աղբյուրների տիպաբանությունը՝ հեղինակը ներկայացնում է Դատաստանագրքերը որպես իրավունքի գրավոր աղբյուրներ:

Քննելով Դավիթ Ավակատրդու Կանոնները՝ վերլուծվում են ամուսնության, ընտանեկան իրավունքի հիմնահարցերը կանոնական իրավունքի տեսանկյունից: Մխիթար Գոշի Դատաստանագրքի հիմնարար վերլուծության շնորհիվ ներկայացվում են ինչպես Դատաստանագրքի կիրառական նշանակությունը պատմական Հայաստանում, այնպես էլ վերջինիս օգտագործումը հայկական գաղթօջախներում: Սմբար Գունդսպարի հայացքների վերլուծությունը կարևորվում է Կիլիկյան Հայաստանի ներքաղաքական զարգացումների և իրավական համակարգի մեկնության համար: Մարդու իրավունքների հիմնախնդիրները ներկայացնելիս՝ Սմբարը Գոշի նման առաջ է քաշում մարդասիրական գաղափարներ:

Բանալի բառեր. Իրավունքի աղբյուրներ, դատաստանագրքեր, Մխիթար Գոշ, մարդու իրավունքներ, ավադատիրական իրավունք

Հայ ժողովուրդը, լինելով աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկը, ունի իր պատմական, ինչպես նաև իրավական զարգացման առանձնահատկությունները: Այս առումով հայ իրավական հուշարձաններում կարելի է տեսնել իրավաքաղաքական մտքի և մարդու իրավունքների վերաբերյալ հետաքրքիր և արժեքավոր նորմեր, որոնք ժամանակին կոչված են եղել պաշտպանել մարդու անվտանգությունը, նրա ինքնիշխան կամքը, պատիվը և արժանապատվությունը:

Իրավական հուշարձան ասելով՝ հասկանում ենք կանոնական և աշխարհիկ օրենքների համակարգված ժողովածուները: Հայ իրավական հուշարձանները մի շարք պատճառներով և համաշխարհային իրավաքաղաքական մտքի և մարդու իրավունքների զարգացման պատմության հարցում չեն ունեցել այն ազդեցությունը, ինչպես օրինակ ունեցել են անգլիական [1], ֆրանսիական [2] և ամերիկյան [3] հուշարձանները: Սակայն, չնայած սրան հայ իրավա-քաղաքական միտքը միշտ էլ ստեղծել է իրավական հուշարձաններ, այսինքն իրավունքի աղբյուրներ, որոնք նույնպես պարունակում են մարդու իրավունքների վերաբերյալ իրավական նորմեր, և արժանի տեղ են զբաղեցնում համաշխարհային իրավաքաղաքական մտքի պատմության մեջ:

Հայոց ազգային օրենսդրություն (իրավական համակարգը) զարգացել է երկու հիմնական ուղղություններով՝ կանոնական իրավունքի և աշխարհիկ

իրավունքի ձևերով: Հայ կանոնական իրավունքի ձևավորումը սկսվել 4-րդ դարից, երբ քրիստոնեությունը Հայաստանում ճանաչվեց պետական կրոն: Այստեղից էլ աշխարհիկ օրենսդրությանը զուգահեռ ձևավորվեց նաև կրոնական (եկեղեցիական) իրավունքը հիմնականում եկեղեցական գործիչների իրավաստեղծ գործունեության շնորհիվ: Եկեղեցական գործիչների աշխատանքները վերլուծելիս նկատվում է մի հիմնական գաղափար. մարդու բնական և անբաժանելի հատկանիշներից է կամքի ազատությունը, անձնիշխանությունը:

Հայ իրավաբաղաքական մտքի հուշարձաններում ոչ միայն տեղ են գտել պետության և իրավունքին վերաբերող դրույթներ, այլև տեղ են գտել մարդու և քաղաքացու իրավունքներին ու ազատություններին վերաբերող նորմեր, որոնք իրենց իրավական նշանակությամբ դարձել են իրավունքի աղբյուրներ:

Ընդհանրապես իրավունքի աղբյուրի, այդ թվում հին միջնադարյան աղբյուրի հասկացության հիմնահարցը իրավագիտության ամենակնճռոտ հարցերից է, որի հետազոտությունը ունի ինչպես պատմաճանաչողական, այնպես էլ գիտատեսական նշանակություն:

Այս կապակցությամբ դեռևս խորհրդային շրջանի հայտնի իրավաբան-գիտնական Ս.Ֆ. Քեչեկյանը նշել է, որ «Իրավունքի աղբյուրի հարցը իրավունքի տեսության ամենաչարզաբանվածներից մեկն է» [4]:

Իրավաբանական գրականության մեջ «իրավունքի աղբյուր» արտահայտությունը օգտագործվում է երկու տարբեր նշանակությամբ՝ «իրավունքի նյութական աղբյուր» (իրավունքի աղբյուր նյութական իմաստով) և «իրավունքի ձևական աղբյուր» (իրավունքի ձևական իմաստով):

Ընդ որում, «իրավունքի նյութական աղբյուր» ասելով՝ նկատի է առնվում իրավունքի կազմավորման պատճառները, այսինքն՝ այն ամենը, որը համապատասխան մոտեցման համաձայն ծնում (ձևավորում) է պոզիտիվ իրավունքը՝ այս կամ այն նյութական կամ հոգևոր գործոնները, հասարակական հարաբերություններում, մարդու բնությունը, իրերի բնությունը, աստվածային կամ մարդկային բանականությունը, Աստծո կամ օրենսդրի կամքը և այլն:

«Իրավունքի ձևական աղբյուրը» նկատի է առնվում գործող իրավունքի դրույթների «բովանդակության» արտաքին դրսևորման ձևը [5]:

Իրավունքի աղբյուրի հարցը գտնվում է իրավաբան-գիտնականների ուշադրության կենտրոնում, և նրա սահմանման վերաբերյալ կան տարբեր տեսակետներ: Այդ խնդրին անդրադարձել են Գ. Ֆ. Շեշենևիչը [6], Վ.Ի. Սերգևիչը [7], Վ. Ն. Խրոպանյուկը [8], Գ. Ն. Սաֆարյանը [9], Վ. Ս. Ներսեսյանցը [10], Մ. Ի. Մարչենկոն [11], Ս. Լ. Չիվալը [12], Ռ. Կրոսսը [13], և այլք:

Իրավունքի արդի տեսության համաձայն «Իրավունքի աղբյուրները կամ ձևերը իրավական նորմերի պաշտոնական արտահայտման և ամրապնդման ձևերն են, որոնք գործում են տվյալ պետությունում» [14]:

Իրավունքի հիմնական աղբյուրներն են՝

- Իրավական սովորույթը,
- Իրավական նախադեպը,
- Նորմատիվ իրավական ակտը,
- Նորմատիվ իրավական պայմանագիրը,
- Իրավունքի հիմնական սկզբունքները,
- Իրավական դոկտրինը
- Սուրբ գրքերը:

Իրավունքի ամենասկզբնական ու ամենահին աղբյուրը եղել է սովորույթը, իսկ սրա գործող հետևանքը՝ սովորութային իրավունքը: Սակայն ամեն մի սովորույթ չի կարող իրավունքի աղբյուր լինել, այլ միայն այն սովորույթները, որոնք հասարակական համակեցության մեջ գործադրվում և պահպանվում են իբրև համապարտադիր նշանակություն ունեցող վարքագծի կանոն:

Իրավական սովորույթը պետության կողմից վավերացված վարքի կանոն է, որը դադարել է նախկինում մարդկանց որոշակի գործողությունների տևական կրկնողության հետևանքով, որի շնորհիվ ամրապնդվել է որպես կայուն նորմ: Սովորութային իրավունքի նորմերը դեռևս օրենքներ չեն և նրանք օրենք են դառնում, երբ պետությունը իրավաբանորեն ամրագրում է դրանք [15]: Հիրավի, հնագույն ժամանակաշրջանի պետությունների օրենսդրական ժողովածուները որպես կանոն կազմված են սովորութային իրավունքի փոխառումներից: Մասնավորապես այդպիսիք են, հնադարյան Բաբելոնի Համմուրապիի օրենքները, Հռոմի 12 տախտակները, հին Հունաստանի Սոլոնի օրենքները, հին Հնդկաստանի Մանուի օրենքները, Ռուսական պրավդան, Մ. Գոշի Հայոց դատաստանագիրքը և այլն:

Ներկայումս սովորույթները որպես իրավունքի աղբյուրներ տեղ են գտել միջազգային, քաղաքացիական և իրավունքի այլ ճյուղերում: Ժամանակակից պայմաններում սովորույթը զգալի չափով կորցրել է իրավունքի աղբյուրի իր դերը, բայց դեռևս սովորույթները մնում են իրավունքի աղբյուր: Սովորութային իրավունքը հայ աշխարհիկ օրենսդրության աղբյուրներից մեկն է:

Իրավաբանական նախադեպը ժամանակակից աշխարհում առավել տարածված իրավունքի աղբյուր է: Իրավաբանական նախադեպ ասելով հասկացվում է կոնկրետ գործի վերաբերյալ դատական կամ վարչական որոշումը, որին պետությունը տալիս է համապարտադիր նշանակություն:

Իրավաբանական նախադեպի էությունն այն է, որ կոնկրետ գործի վերաբերյալ պետական մարմնի նախկինում կայացրած որոշումը իրավական նորմի ուժ է ստանում նաև հետագա նմանատիպ գործեր քննելիս: Նախադեպային իրավունքի հայրենիքը Անգլիան է:

20-րդ դարի կեսերից նախադեպը, որպես իրավունքի աղբյուր սկսվեց կիրառվել նաև մայրցամաքային իրավական ընտանիքում և աստիճանաբար ճանապարհ է հարթում ազգային իրավական համակարգերում [16]:

Իրավունքի աղբյուրների ամենահիմնական և կատարյալ ձևերից է նորմատիվ – իրավական ակտը: Որպես նորմատիվ-իրավական ակտ հասկանում ենք սահմանված կարգով իրավասու մարմինների կողմից ընդունվող փաստաթղթերը, որոնք սահմանում, փոփոխում կամ վերացնում, ինչպես նաև գործողության մեջ են դնում իրավունքի նորմերը: Դրանք նորմատիվ բնույթի պետական ակտեր են: Նորմատիվ-իրավական ակտերի շարքին են դասվում սահմանադրությունները, օրենքները, գործադիր իշխանության մարմինների նորմատիվ որոշումները: Ի տարբերություն իրավունքի այլ աղբյուրների, նորմատիվ ակտերը առավել լրիվ և գործարար կերպով են արտացոլում հասարակության զարգացման փոփոխվող պահանջմունքները, ապահովում են իրավական կարգավորման անհրաժեշտ կայունությունն ու արդյունավետությունը [17]:

Ժամանակակից զարգացած իրավական համակարգերում զգալի տեսակարար կշիռ ունեն նաև նորմատիվ պայմանագրերը: Նորմատիվ պայմանագրերը երկու կամ ավելի կողմերի համաձայնությունն է, որը պայմանավորող կողմերի իրավասության շրջանակում սահմանում, փոփոխում կամ վերացնում է իրավական նորմերը: Նորմատիվ պայմանագրերը լինում են ներպետական և միջազգային:

Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Միջազգային պայմանագրերը կարող են վերաբերվել պետությունների տնտեսական, առևտրական, ռազմական, մշակութային և այլ ոլորտներին: Ըստ սուբյեկտների՝ միազգային պայմանագրերը դասակարգվում են միջպետական, միջկառավարական, միջգերատեսչական պայմանագրերի: Դրանք կնքվում են պետության անունից, ճանաչվում են պաշտոնապես, վավերացվում են և սահմանված կարգով ընդունումից հետո պարտադիր ուժ են ձեռք բերում պայմանավորվող կողմերի ամբողջ տարածքում:

Իրավունքի սկզբունքները օբյեկտիվ օրինաչափություններն իրավաբանորեն արտացոլող հասարակական կյանքի այն հիմնական գաղափարներն ու ելակետային, ղեկավար դրույթներն են, որոնք որոշում են իրավունքի ձևավորման, զարգացման ու գործողության գործընթացը, դրա բովանդակության հիմնական հարցերը, սոցիալական էությունը [18] :

Իրավական դոկտրինը իրավունքի աղբյուրի բնույթ ձեռք բերեց իրավունքի պատմության արշալույսին՝ ծավալվելով Հռոմեական կայսրության բաժանումից Բյուզանդիայի անկման ժամանակահատվածում [19]:

Կրոնական կամ կանոնական իրավունքը մի շարք երկրներում ցայսօր շարունակում է խաղալ էական դեր: Նկատի են առնվում այն պետությունները, որտեղ կրոնական կառույցները ճանաչվում են պետական ինստիտուտ [20] :

Եթե գործող իրավունքի աղբյուրները հիմնականում նորմատիվ-իրավական ակտերն ու սովորութային նորմերն են, ապա «իրավունքի պատմության աղբյուրները դառնում են գերազանցապես գրավոր այն հուշարձանները,

որոնցում արտացոլվել են տվյալ ժամանակաշրջանի գործող իրավունքը՝ զանազան դատաստանագրքեր, օրենքների ժողովածուներ, մատենագրական ու վիմագրական վկայություններ և այլն» [21]:

Դատաստանագիրքը պետության կամ կրոնական ազգային հաստատությունների կողմից կողիֆիկացված կամ համակարգված օրենքների ժողովածու է [22]:

Հայոց դատաստանագրքերում մարդու իրավունքների հիմնախնդիրների վերլուծությունը մեծ կիրառական նշանակություն ունի: Ստորև համառոտ կներկայացնենք միջնադարյան հայկական դատաստանագրքերում մարդու իրավունքների հիմնախնդիրների լուսաբանումը:

Մարդու իրավունքների հիմնախնդիրների արտացոլումը Դավիթ Ալավկատորդու «Կանոններում»

Հայ իրավական հուշարձաններում և կանոնական իրավունքում մարդու իրավունքների և դրանց պաշտպանությանը վերաբերող հարցերը որոշակիորեն արտացոլվել են Դավիթ Ալավկատորդու «Կանոններ» աշխատությունում, որը գրվել է 1130 թ. և դարձել հայ միջնադարյան իրավունքի կարևորագույն աղբյուրներից մեկը:

Յավոք Դավիթ Ալավկատորդու մասին կենսագրական շատ տեղեկություններ չեն պահպանվել: Ըստ պատմիչ Կիրակոս Գանձակեցու նա ծնվել է Ուտիք նահանգի Գանձակ քաղաքում, ապրել է 60-65 տարի, եղել է վարդապետ, մահացել է 1139թ. ու հանդիսացել է ժամանակի ճանաչված գիտնականներից: Բացի Կիրակոս Գանձակեցուց նրան են անդրադարձել հայ պատմիչներից Վարդան Արևելցին, Ստեփանոս Օրբելյանը, Մխիթար Այրիվանցին և ուրիշները, որոնք բարձր են գնահատել նրա գիտական և հասարակական գործունեությունը: Դավիթ Ալավկատորդին իր ժամանակի շատ զարգացած մարդկանցից մեկն էր և երկար ժամանակ զբաղվում էր մանկավարժությամբ, որի կարծիքը հաշվի էին առնում նույնիսկ կաթողիկոսի նշանակման ժամանակ:

Դավիթ Ալավկատորդու ստեղծած կանոնները և այլ հին ու միջնադարյան հայ իրավաբանական հուշարձանները պետական իշխանությամբ վավերացված և ընդունված չլինելով հանդերձ կիրառում էին կյանքում, հետևաբար իրավաբանական ուժ ունեցող ակտեր էին: Ուշագրավ է, որ Դավիթ Ալավկատորդու «Կանոնները», ինչպես նաև հայ եկեղեցական իրավունքի բոլոր կարևորագույն հուշարձանները, կազմված էին հազարամյակների ընթացքում գործող սովորությանից իրավունքի նորմերի խստագույն և մանրակրկիտ հաշվառմամբ, այսինքն՝ այս աշխատության հիմքում ընկած է սովորությանից իրավունքը [23]:

Նա հայ իրականության մեջ աշխարհիկ օրենքների ժողովածու (դատաստանագիրք) կազմելու առաջին փորձն է կատարել [24]:

Գնահատելով Դավիթ Ալավկատորդու հասարակական քաղաքական և իրավական հայացքները ինչպես նաև նրա «Կանոնների» տեղը միջնադարյան հայ իրավաբանական մտքի և իրավական հուշարձանների շարքում, պետք է

նշել, որ իր կանոններում նա առաջ է քաշել իրավաքաղաքական մտքի մի շարք գաղափարներ, որոնք առաջինն էին արձագանքում հայ իրավական մտքի պատմության մեջ: Դավթի «Կանոնների» ձեռագրի թիվը հասնում է 17-ի, որոնցից 15-ը գտնվում է Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտում՝ Մատենադարանում, մեկը Վենետիկի, մյուսը Վիեննայի Մխիթարյանների մոտ [25]:

Կանոնների հիմնական աղբյուրներն են՝

1. Սովորութային իրավունքը
2. Հին ու Նոր Կտակարանները՝ հատկապես Մովսես մարգարեի Հին Կտակարանի հայտնի Հնգամատյանը
3. Հայ կանոնական իրավունքը:

Բացի վերը նշված աղբյուրներից, նա ուսումնասիրել և օգտագործել է հայ մատենագիրների, հատկապես փիլիսոփաների աշխատությունները, որոնք իրենց ազդեց ունեն են թողել նրա աշխարհայացքի ձևավորման վրա:

«Կանոններ» աշխատությունում հանցագործության սուբյեկտ է ճանաչվում որոշակի տարիքի հասած ֆիզիկական անձը: Այս սկզբունքը պահպանվել է առ այսօր և այն գործում է ՀՀ քրեական օրենսգրքում: Ի տարբերություն այս աշխատության՝ հին և միջնադարյան իրավունքում հանցագործության սուբյեկտ են ճանաչվում նաև կենդանիները և բնության ուժերը:

Խստիվ արգելվում է ինքնադատաստանը, իսկ ինքնադատաստան կատարողները համարվում էին որպես հանցագործ և ենթարկվում էին քրեական պատասխանատվության:

Դավիթ Ալավկաորդին խոսել է նաև ընտանեկան իրավունքի մասին: Ըստ նրա ամուսնանալու համար պետք է լինել կնոջ և տղամարդու կամավոր համաձայնությունը: Նա դեմ էր անհիմն ամուսնալուծություններին: Մեծ նշանակություն է տվել երեխաների անվճար ուսուցման հարցերին:

Իր «Կանոններ» աշխատությունում նա խոսել է աշխատանքային հարաբերությունների մասին անդրադառնալով՝ աշխատաժամանակի և աշխատանքի պաշտպանության հարցերին:

Նրա կանոնական օրենսդրությունը բաղկացած էր «Նախադրություն»-ից և 97 կանոններից, ու նախադրությունում հեղինակը մեծարում է իր պատվիրատուին: Դրանցով կարգավորում են աշխատանքի պաշտպանության, քաղաքացիական, ամուսնաընտանեկան, քրեաիրավական հարաբերությունների վերաբերյալ հարցերը: Այն եղել է գործող օրենսդրություն, որի 12 կանոնները վերաբերվում էին նախաբանին, 8-ը այլակրոնների հետ հարաբերություններին, 21-ը մարդու անբարո վարքագծի արգելմանը, 7-ը ամուսնական սրբապղծությունների արգելմանը, 14-ը զանազան ախտերի վերացմանը, 3-ը գողության դեմ և 27-ը՝ անհավատարմությանը: Այստեղ որոշ կանոններ ուղղված էին վաշխառությանը, դիտավորյալ հրդեհմանը, երդմնազանցությանը, անկարգ լացուկոծին, գերիների ու աղքատների հետ վարվելակերպին, կանանց ապահարզանի,

ծննդաբերության և այլ կենցաղային խնդիրների կարգավորմանը:

Լինելով հայ քրիստոնեական եկեղեցու ներկայացուցիչներից մեկը՝ Դավիթ Ալավկատրդին բնականաբար դրսևորում է որոշակի անհանդուրժողականություն ժամանակաշրջանի աղանդների (Թոնդրակյան շարժման մասնակիցների) և այլակրոնների (մահմեդականների) նկատմամբ:

Անդրադառնալով Դ. Ալավկատրդու կանոններին, հին հայ իրավունքի գիտակ Խ. Սամուելյանը նկատի առնելով այդ երկի գործնական կիրառական նշանակությունը, այն իրավամբ դասել է ազգային դատաստանագրքերի շարքը [26]: Նմանատիպ կարծիք է արտահայտել նաև Մանուկ Աբեղյանը նշելով, որ Դավիթ Ալավկատրդու կանոնները հայկական կանոնական օրենսդրությունն են և դասվում են հայկական դատաստանագրքերի թվին [27]:

Դավիթն իր կանոններում շարադրել է նաև քրեական իրավունքի կարևորագույն ինստիտուտներից մեկը՝ անհրաժեշտ պաշտպանության իրավունքը: Ելնելով անհրաժեշտ պաշտպանության իրավունքից՝ նա արդարացի և օրինական է համարում օտար նվաճողների դեմ պայքարը [28]:

Պատիժ նշանակելիս հաշվի էին առնվում արարքի մեղմացնող և ծանրացնող հանգամանքները՝ հանցագործության սուբյեկտ ճանաչելով միայն մեղսունակ ֆիզիկական անձի, որը հասել էր որոշակի տարիքի:

Ծանրացնող հանգամանքներ էին դաժանաբար կատարված հանցագործությունները, բազմակի հանցագործությունները կատարված հանցագործի կողմից, որն իր մեջ ներառում է ռեցեդիվի հատկանիշներ և այլն: Մեղմացնող հանգամանքներ էին անզգույշ հանցագործություն կատարելը, որի դեպքում նախատեսված էր անհամեմատ մեղմ պատիժ՝ դրամական տուգանք, ապաշխարհանք և այլն: Ծանրացնող հանգամանքների դեպքում հանցագործի նկատմամբ կիրառվում էր ավելի խիստ պատիժներ, որոնցից էին մարմնական պատիժը, ազատագրկումը և մահապատիժը: Քրեական պատասխատվության ենթարկելու հիմք էր սահմանվում կատարած արարքում նրա մեղավորությունը:

Դավիթ Ալավկատրդին մարդուն քրեական պատասխանատվության ենթարկելիս սահմանում էր մեղքի հետևյալ ձևերը՝ դիտավորություն, անզգուշություն և մեղքի խառը ձևը:

Դավթի կանոնները կարևոր սկզբնաղբյուր են ինչպես հայ իրավունքի պատմության, այնպես էլ միջնադարյան Հայաստանի վարք ու բարքի, հասարական-քաղաքական և իրավական ուսմունքների պատմության համար:

Դավիթ Ալավկատրդու կանոնների քննությունը ցույց է տալիս, որ իրենց բովանդակության բազմազանությամբ ժամանակին մեծ արժեք են ներկայացրել: Այդ պատճառով էլ զարմանալի չէ, Դավիթ Վարդապետի մահվանից բավականին ժամանակ անց դրանք որպես սկզբնաղբյուր օգտագործել են և Մխիթար Գոշը, և Սմբատ Գունդստաբլը իրենց դատաստանագրքերում [29]:

Դատաստանագրքի աշխարհաբար տեքստը առաջին անգամ հրատարակվել է 1953 թ.:

Մխիթար Գոշի իրավաքաղաքական հայացքները

Մխիթար Գոշը մեկն է հայ միջնադարյան վերածնության ժամանակաշրջանի կարևորագույն դեմքերից է: Երկար ու ճիգ դարերի ընթացքում Գոշի անունը և գրական ստեղծագործությունը չխամրեցին: Նա մնաց հայ մշակույթի պատմության մեջ որպես նրա ամենախոշոր ու բեղուն երախտավորներից մեկը: Ընդ որում Գոշով հետաքրքրվել են ոչ միայն իրավագետներն ու գրականագետները, այլև բանասերները, լեզվաբանները, պատմաբանները, մանկավարժները, տնտեսագետները և փիլիսոփաները [30]: Վ. վրդ. Բաստամեանցը Գոշի Դատաստանագիրքը համարում է հայ միջնադարյան մատենագրության կարևորագույն նվաճումներից մեկը, քանի որ ներկայացնում է հայոց իրավունքի զարգացման մակարդակը միջնադարում [31]:

Միջնադարյան Հայաստանի իրավական հուշարձաններում մարդու իրավունքների, մարդկանց ազատության, անվտանգության, հավասարության պատվի և արժանապատվության գաղափարներն առավել ցայտուն են արտահայտվել Մխիթար Գոշի «Հայոց դատաստանագրքում», որը կազմվել է 1184թ.:

Մխիթար Գոշը ծնվել է Գանձակում 1130թ., մահացել է 1213թ.: Երկար տարիներ ապրել է իր հիմնադրած Նոր Գետիկ վանքում, որը իր անունով հետագայում կոչվել է Գոշավանք: Այն ներկայումս գտնվում է Տավուշի մարզի Իջևան քաղաքի Գոշ գյուղում: Նրա կենսագիրը պատմիչ Կիրակոս Գանձակեցին հաղորդում է, որ Մխիթար Գոշը ապրել է երկար «Կյանքի երանելի ընթացքը կատարելով ու հավատը պահելով հասավ իր ծերության» [32]:

Գոշը թողել է գրական մի շարք ստեղծագործություններ և եղել է հեղինակավոր հասարակական դեմք: Գոշի թողած գրական ժառանգության մեջ «Առակները» նրա լավագույն ստեղծագործություններից են: Առակները արժեքավոր ներդրում են հայ գրականության մեջ և արտացոլում են Գոշի ժամանակի հայ հասարակական հարաբերությունները, դասակարգային պայքարը, հայ ժողովրդի կենցաղը, իրավունքը քննադատվում են ընկած բարքերը տիրողների ճնշումը և շահագործումը «հնազանդյալ»-ներին [33]:

Առակը գրականության մեջ մուտք է գործել առաջին անգամ Հունաստանում և մ.թ.ա 6-րդ դարում Հեսիոդոս բանաստեղծը «Աշխատանք և օրեր» ստեղծագործության մեջ արձանագրել է ժողովրդական պատմվածքը՝ առակը, բազեի և սոխակի մասին: Նրանից հետո հրապարակ է եկել Եզոպոսը, որը համաշխարհային գրականության մեջ հայտնի է որպես այդ ժանրի առաջին հիմնադիրը: Եզոպոսի առարկները հայ գրականության մեջ մուտք են գործել Վարդան Այգեկցու միջոցով, որի առակների ընդհանուր թիվը կազմում է 380: Առակների մի մասը հասել է մեզ «Աղվեսագիրք» անունով, որը թարգմանվել է արաբերեն, վրացերեն և այլ լեզուներով: Առակների մեջ դրսևորվել են ժողովրդի կենցաղը, բարքերը, ժամանակի հասարակական ըմբռնումները ու հարաբերությունները, կնոջ իրավազուրկ վիճակը և այլն:

Մխիթար Գոշը առարկների մեջ տեսնում է բնականաբար երկու մաս՝ բուն

պատմվածքը և խրատական եզրակացությունը [34]: Նրա համար ավելի կարևոր արժեք ուներ առակի երկրորդ խրատական մասը, քանի որ խրատների մեջ կարևոր տեղ են բռնում հոգեշահ խրատները և հոգևոր առաքինությունները:

Մ. Գոշից հետո հայ առակագիտությունը որակական մի նոր աստիճանի բարձրացրեց Վարդան Այգեկցին, որը ապրել է 12-13-րդ դարերում: Առարկների լեզուն գրաբարախառն աշխարհաբարն է, որը հասկանալի է եղել ժողովրդի համար [35]: Բացի առարկներից, նրա գրչին են պատկանում շուրջ մեկ տասնյակ աշխատություն, որոնցից արժանի է հիշատակման «Երեմիայի մարգարեության համառոտ մեկնություն» քերթվածը՝ Տիրոջ մարմնի և արյան մատուցման կարգի մասին, թե ինչպես է հարմար և ինչ հերթականությամբ պետք է դա արվի, «Ողբ մեր էության մասին» երկը, Ադամի և Եվայի անունից՝ ուղղված իրենց որդիներին ու դուստրերին, «Ուղղափառ հավատի հայտնությունը ընդդեմ հերձվողների» աստվածաբանական աշխատությունը՝ գրված մեծ զորահրամանատար Զաքարեի և նրա եղբայր Իվանեի խնդրանքով, «Աղվանական քրոնիկոնը», ուր համառոտ շարադրված է 11-12-րդ դդ. Աղվանքի պատմությունը և այլ աշխատություններ:

Մ. Գոշը մեծ հեղինակություն է ունեցել ոչ միայն մտավորականների շրջանում, այլև քաղաքական և պետական գործիչների շրջանում: Նա եղել է Զաքարե Զաքարյանի խոստովանահայրն ու խորհրդատուն [36]:

Ժամանակին Մխրթար Գոշի մասին պատմվել են ավանդություններ, որոնց մեջ նա սրբացվել է [37]:

Բայց, Գոշի գլուխգործոցն է «Գիրք դատաստանի», որը բացառիկ արժեք է ներկայացնում և որպես որպես միջնադարյան իրավունքի նշանավոր գործ ու առաջնակարգ տեղ է գրավում աշխարհի ճանաչված օրենսդրական հուշարձանների շարքում [38], և այն գործադրվեց ոչ միայն բուն հայրենիքում, այլև նրա սահմաններից դուրս և հայկական գաղթօջախներում մի հանգամանք, որ բացառիկ երևույթ է իրավագիտության պատմության մեջ: Մ. Գոշը թողել է հսկայական գրական ժառանգություն: Նրա անվամբ հանդիպում ենք աղոթքներ, ճառեր, քարոզներ, մեկաբանություններ, թղթեր, ժամանակագրություն և այլն:

Մխրթար Գոշի Դատաստանագիրքը գրված է գրաբարով, առանձնահատուկ իր հակիրճությամբ՝ ընդամենը 251 հոդված, հատուկ համակարգում չկա, տեսական դատողությունները զուգակցված են հեղինակի առաջարկություններով, իրավունքի նորմերով ու դրանց բացատրություններով [39]: Քաղաքական իր կողմորոշմանը համապատասխան՝ Մ. Գոշը ոչ թե Ներսես Լամբրոնացու նման փորձել է հայերեն թարգմանել հունական կամ օտար օրենքները, այլ ձեռնամուխ է եղել և ստեղծել ազգային օրենսգիրք: Ազգային օրենքների ժողովածուի ստեղծմամբ Գոշը նպատակ էր հետապնդում պետականությունը նոր – նոր կորցրած հայ ժողովրդի ինքնագիտակցությունն արթնացնել, սատարել ընդհանուր համազգային շահերին, հայ ժողովրդի ինքնահաստատմանը

և քաղաքական ինքնորոշմանը: Դատաստանագիրքը այս առումով հանդես է գալիս որպես իրավական - քաղաքական ծրագիր [40]: Կողմնակից լինելով կառավարման միապետական ձևին, նա թագավորության նպատակահարմար պետաիրավական կառուցվածքը տեսնում է կենտրոնացված իշխանության մեջ՝ միապետի գլխավորությամբ: Հայ իրավագիտության պատմության մեջ առաջին անգամ Մ. Գոշը ուրվագծում է պետության սուվերենության (ինքն-իշխանության) հասկացությունը և առանձնացնում է դրա երկու հիմնական հատկանիշները՝ պետական իշխանության լրիվ ինքնուրույնությունը պետության ներսում և անկախությունը՝ արտաքին հարաբերություններում: Գոշից հետո միայն 16-րդ դարում ֆրանսիացի իրավաբան Ժան Բոդենը «Վեց գիրք պետության մասին» աշխատությունում անդրադարձավ պետության ինքնիշխանության գաղափարին:

Բացի ինքնիշխանության գաղափարից Գոշը առաջ է քաշել նաև օրենքի գերակայության գաղափարը: Գոշը կողմնակից էր երկրում մեկ համապետական օրենք, օրենսգիրք սահմանելուն և դեմ՝ ավատական բազմաթիվ, հաճախ իրար հակասող, անջատ-անջատ մասնավոր (պարտիկյուլար) օրենքների գոյության [41]:

Մ. Գոշը անդրադարձել է նաև դատավորների բարոյական կատարելության խնդրին: Նա մշակել է դատարանի և արդարադատության մասին իր ուրույն հայեցակարգը, որն իր տեսական-ճանաչողական և գործնական առումով պահպանել է իր նշանակությունը [42]:

Դատաստանագրքում հեղինակը անդրադարձել է իրավունքի տարբեր ճյուղերին:

Քրեաիրավական նորմերը սահմանելիս Գոշը ելնում է այն տեսակետից, որ մի շարք հանցագործությունների հիմքում ընկած է մեղքը և մասնավորապես մեղքը քրեաիրավական իմաստով ծագում է ոչ թե բնությունից, կամ ինքնին, այլ երբ մարդը գիտակցաբար խախտում է օրենքը (մաս 2-րդ, հողված ժթ):

Մարդկանց քրեաիրավական պատասխանատվության ենթարկելու հարցում Գոշը նախատեսում է երկու մոտեցում՝

1. քրեաիրավական պատասխանատվության հիմքում պետք է ընկած լինի մեղքը, այսինքն միայն մեղավորությամբ կատարված արարքի համար մարդուն կարելի է ենթարկել քրեական պատասխանատվության,
2. պատասխանատվության անհատականացում, այսինքն մարդը ենթակա է քրեական պատասխանատվության միայն սեփական արարքի համար:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ մարդկանց քրեաիրավական պատասխանատվության ենթարկելու և պատժելու հիմքում դատաստանագրքում ընկած է սուբյեկտիվ մեղսայնացման և պատժի անհատականացման սկզբունքը և հանցագործության սուբյեկտ կարող է ճանաչվել միայն մարդը ու լինել 12 տարեկանից բարձր: Իսկ տվյալ ժամանակաշրջանում Եվրոպայում և այլ

երկրներում հանցագործության սուբյեկտ են համարվել նաև կենդանիները, անզամ բնության ուժերն ու անշունչ առարկաները:

Պատիժ նշանակելիս Գոշը առաջարկում է, որ նախ պատիժը պետք է համապատասխանի կատարած արարքի վտանգավորության աստիճանի, ապա և պատիժը նշանակելիս պետք է պատժել հանցագործի անձը, ինչպես նաև հանցագործության կատարման միջոցներն ու մեթոդները, շարժառիթներն ու առաջացած հետևանքները: Ըստ Գոշի պատիժը պետք է ծառայի հանցագործին խրատելու և ուղղելու նպատակին:

Գոշի դատաստանագիրքը սահմանում է պատժատեսակների սահմանափակ թվաքանակ, և աչքի չի ընկնում իր առանձնակի դաժանությամբ: Հիմնական պատժատեսակներն են դրամական տուգանքները, մարմնական պատիժները, ազատազրկումը և ապաշխարանքը: Իսկ ինչ վերաբերվում է մահապատժին, ապա Գոշը դեմ էր այս պատժատեսակին, որը բավականին լայնորեն տարածված էր միջնադարյան ավատատիրական երկրներում: Նրա Դատաստանագրքում մահապատիժը կիրառվում է խիստ բացառիկ դեպքերում: Նա առաջարկում էր մահապատիժը փոխարինել տուգանքով, անդամահատությամբ, բանտարկությամբ, աքսորով և այլն:

Սկզբունքորեն դեմ լինելով մահապատժին, Գոշը այն համարում է հակաբնական և փոխարինում այլ պատժատեսակներով, միաժամանակ առաջ քաշելով հանցագործին ուղղելու մարդասիրական տեսակետը և այսպիսով հնարավորություն է ընձեռում ոչ միայն ֆիզիկական փրկության, այլև հոգևոր վերածննդի համար [43]: Մխիթար Գոշը բնական իրավունքի տեսությամբ եկավ հիմնավորելու հայ ժողովրդի ազատագրական պայքարը և դրա գաղափարական հիմքը հանդիսացող մարդ-անհատի կամքի ազատությունը և, մյուս կողմից՝ իրավական հիմք (կազմելով «Դատաստանագիրքը») ստեղծելու վերականգնվելիք հայոց պետականության համար [44]:

Մխիթար Գոշը խոսել է նաև ամուսնաընտանեկան հարաբերությունների մասին և սահմանել է մի շարք նորմեր այդ հարաբերությունները կարգավորելու ուղղությամբ: Այս հարցում նա ելնում էր ժամանակի առաջադիմական և լավագույն գաղափարներից: Նա գտնում էր, որ ամուսնությունը պետք է լինի ամուսնացող զույգերի կամավոր համաձայնության արդյունք: Ամուսինը պարտավոր է հարգել կնոջ պատիվն ու արժանապատվությունը, մարդկային լինել նրա հետ: Ժամանակի թելադրանքից ելնելով՝ Գոշը չի խոսել կնոջ կողմից տղամարդու իրավունքների հարգման մասին, քանի որ միջնադարում տիրապետում էր այն տեսակետը ըստ որի կինը պետք է ենթարկվի տղամարդուն: Սակայն, չնայած սրան, Գոշը գույքային հարաբերություններում խոսում է ամուսինների գույքային հավասարության մասին, ինչը շատ հազվադեպ երևույթ է միջնադարյան ժամանակաշրջանում:

Դատաստանագրքում առկա են նաև բավականին առաջադիմական նորմեր, որոնք վերաբերվում են արդարադատության իրականացմանը: Դատա-

րանի նպատակը պետք է լինի արդարության բացահայտումը և ճշմարտության բացահայտումը: Գոշը իր դատաստանագրքում խոսել է դատավորի վարվելակերպի կեցվածքի մասին: Ըստ նրա դատավորը պետք է լինի անկաշառ, ունենա տեսական գիտելիքեր, գործնական աշխատանքի փորձ, լինի համարձակ դատական ատյանում և վճիռ կայացնելիս: Դատավորը պետք է նաև օր ու գիշեր զբաղվի ինքնակրթությամբ, յուրացնի բոլոր ազգերի իմաստուն մարդկանց խոսքերը, օրինակ վերցնի նրանցից: Գոշի կարծիքով դատավորը պետք է նաև ներողամիտ լինի:

Մխիթար Գոշը անդրադարձել է նաև դատավարության ձևին: Դատավարությունը, որպես կանոն, բանավոր էր և կրում էր հրապարակային բնույթ, այսինքն՝ դռնբաց էր: Կողմներին լսելուց հետո, դատարանը ձեռնամուխ էր լինում վկաների հարցաքննությանը: Նա դեմ է եղել դատավարության իվկվիզիցիոն ձևին: Ըստ նրա դատավարությունը պետք է ընթանա մրցակցային ձևով: Չնայած խոստովանությունը միջնադարում համարվում էր ապացույցների «թագուհին», սակայն Գոշը սրան ոչ մի առավելություն չի տվել: Նա դեմ էր նաև երդմանը, որպես ապացույցի տեսակի: Գոշը չէր ընդունում նաև բոլոր տեսակի Օրդալյանները, որպես բարբարոսական մեթոդ՝ բացահայտելու «ճշմարտությունը»: Օրդալիան արտահայտվում էր երդման, հաղորդություն ընդունելու շիկացած երկաթը ձեռքն առնելու, սառը ջուրը մտնելու կամ մենամարտելու (անզեն կամ զենքով) միջոցով: Օրդալիայի ենթարկվածը ապացուցում էր իր անմեղությունը [45]: Ապացույցների մեջ Գոշը ամենավստահելիին և ամենահավատալիին համարում էր վկաների ցուցմունքը (նախ. գլուխ է): Վկաների ցուցմունքի հիման վրա կայացված դատավճիռը կլինի արդարացի:

Մխիթար գոշի Դատաստանագիրքը իրեն հավասարը չի ունեցել նաև միջնադարյան հայ իրականության մեջ: Իրավունքի փիլիսոփայության և տեսության տեսանկյունից, ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ հայոց առաջին աշխարհիկ օրենսգիրքը կազմվել է պետականության բացակայության պայմաններում, մի բան, որը ևս բացառիկ երևույթ է իրավունքի պատմության մեջ: Մխիթար գոշի իրավագիտական ուսմունքը կազմված է անձի, ազգի և պետության ինքնիշխանության հիմքի վրա [46]:

Մխիթար Գոշի առաջին հետազոտողները սխալմամբ կարծել են, թե դատաստանագիրքը չհամակարգված խառնիխուռն հոդվածների ժողովածու է: Նորագույն ուսումնասիրողները Ա. Սուքիասյանը և Խ. Թորոսյանը ցույց են տվել, որ այն ունի միասնական և կուռ կառուցվածք: Դատաստանագիրքը կառուցված է 3 մասից՝

1. Նախադրություն – 11 գլուխ
2. Եկեղեցական կանոններ –124 գլուխ
3. Աշխարհական կանոններ – 130 գլուխ

Նախադրությունը իսկական դատաստանագիրք է դատարանակազմության և դատավարության օրենսգիրք: «Նախադրությունը» փաստորեն իրավա-

գիտական աշխատություն է դատաստանագրքի ստեղծման պատճառների, դատարանի, դատարանակազմության, վկաների և ապացույցների, դատաստանագրքի նպատակի և խնդիրների մասին: Այստեղ Գոշն արժարծել է նաև գրավոր և բանավոր օրենքների և կրոնական կանոնների տարբերությունը, սահմանել դատավորի վարքագծի առանձնահատկությունները, նրա իրավունքներն ու պարտականությունները, վկաների դերը, երդումը, ապացուցումը, պետության կառավարման ձևը, պետության սուվերենությանը, ժառանգությանը և այլն: Գոշի հայացքներում առանձնահատուկ տեղ են գրավում մարդու ազատության և իրավունքներին ու պետական ինքնիշխանությանը նվիրված գաղափարները: Պետական ինքնիշխանության մասին Գոշի հասկացությունը հեռու չէ պետական ինքնիշխանության ժամանակակից գիտական սահմանումից [47]: Դատաստանագրքի եկեղեցական կանոնները պարունակում են 124 հոդված, որոնցից բուն օրենքներն են 53, իսկ մանացածը՝ 71 լրացումներ ու հավելվածներ: Երրորդ մասի նորմերը վերաբերվում են պետության, վարչակարգի, կառավարողների և սեփականատիրության փոխհարաբերությունների հարցերին: Այս բաժինը բաղկացած է 130 հոդվածից: 1-88 հիմնական բաժինն է, իսկ 89-ից 130 լրացուցիչ և հավելվածային կետերը: 6 հոդված վերաբերվում է պետական իրավունքին, 46-ը՝ քրեական, 35-ը՝ քաղաքացիական իրավունքին:

Աշխարհիկ և հոգեվոր իշխանությունների հարաբերությունները սահմանազատելու և կարգավորելու վերաբերյալ առաջ քաշված գաղափարներով Գոշը ընդհուպ մոտեցավ իշխանությունների տարանջատման հարցին [48]:

Դատաստանագիրքը կերտվել է երկար տարիների ընթացքում և հեղինակը այն ավարտված չի համարել, քանի որ նրա կարծիքով օրենքները երբեք ավարտուն չեն լինում [49]:

Գոշը տարբերակում է իրավունքի զարգացման հետևյալ փուլերը՝

1. բնական իրավունք
2. աստվածային իրավունք
3. սովորության իրավունք
4. կանոնական իրավունք
5. աշխարհիկ իրավունք:

Գոշը առաջնայնությունը տալիս է բնական իրավունքին, որը գոյություն է ունեցել Աբրահամի և հեթանոսների ժամանակ: Բնական իրավունքը ամենից առաջ ենթադրում է անձի ազատություն, որը մարդը ի ծնե ազատ է: Բնական իրավունքը, ըստ Գոշի աստվածային բնակության արտահայտությունն է մարդու մեջ [50]:

Այն տարածվել և գործածվել է ոչ միայն պատմական Հայաստանում, այլև հայկական գաղթօջախներում՝ Լեհաստանում, Ղրիմում, Վրաստանում, Ռուսաստանում և այլուր: Դեռևս միջնադարում այն թարգմանվել է լատիներեն և ղպչաղերեն [51]:

Շնորհիվ օրենսգրքի, բազմաթիվ նորմեր ընդունելություն գտան «հին աշ-

խարհի» մի շարք երկրների օրենսդրություններում՝ այսպիսով ծառայելով աշխարհի իրավական մտքի առաջընթացին [52]:

Մխիթար Գոշի դատաստանագիրքը հայ իրականության մեջ գործեց մոտ 600 տարի [53]: Մխիթար Գոշի դատաստանագրքի գնահատման համար նախ պետք է նշել, որ, բացառությամբ Հուստինիանոսի, «Corpus juris civilis» ժողովածուի և հետագայում բյուզանդական օրենքների, նրա ապրած դարաշրջանում չեն եղել «Հայոց Դատաստանագրքին» հավասար իրավական հուշարձաններ [54]:

Հայ իրականության անխոնջ մշակ Ղ. Ալիշանը գնահատելով Գոշի գործունեությունը նշում է, որ նա կարող էր իրեն անմահացնել, եթե անգամ «Դատաստանագրքից» բացի ոչինչ չթողներ [55]:

Եթե Արիստակես Լաստիվերցին ողբում էր ազգային թշվառությունը, Հովհաննես Սարկավազը աղոթում է, որ փարատված հայ ժողովուրդը հավաքվի և փրկվի, Ներսես Շնորհալիև խաչակիրների օգնությամբ արևելյան քրիստոնյաների «լավ օրերի ու վերածաղկման» երազն է առաջադրում՝ չունենալով Հայաստանի անկախության, հայոց թագավորության բուն հայրենիքում վերականգնելու կովանն էր, ապա Մխիթարը ուներ քաղաքական ազատության իրական հեռանկար և համոզված էր, որ կվերականգնվի հայկական թագավորությունը: Ըստ որում նա հույսը կապում էր ոչ թե արտաքին միջամտության այլ երկրի ներքին՝ սեփական ուժերի հետ:

Այդ հեռանկարը և համոզմունքը իրենց դրսևորումն են գտել թե նրա առակներում և թե Դատաստանագրքում [56]:

Սմբատ Սպարապետի օրենսդրական գործունեությունը

Սմբատ Սպարապետը միջնադարի հայ ամենաերևելի քաղաքական և գրական գործիչներից է, որը որպես զորքերի գլխավոր հրամանատար մինչև կյանքի վերջը սուրը ձեռքին պատշպանեց հայոց պետականության անկախությունն ու անվտանգությունը, որպես խոշոր դիվանագետ՝ պաշտպանեց հայոց պետականության շահերը արտաքին հարաբերություններում, որպես օրենսդիր՝ իր «Դատաստանագրքով» բավարարեց իր ժամանակի հայ իրականության իրավական պահանջները, որպես պատմիչ իր «Տարեգրքով» գալիք սերունդներին ավանդեց ժամանակի պատմությունը և վերջապես որպես թարգմանիչ իր թարգմանած «Ասիզներով» կորստից փրկեց և համաշխարհային իրավագիտության սեփականությունը դարձրեց միջնադարի այդ իրավական հուշարձանը [57]:

Հայ իրավական մյուս նշանավոր հուշարձանը Սմբատ Սպարապետի (Գունդստաբլի) «Դատաստանագիրքն» է գրված 1265 թ., և այն կազմվել է Մ. Գոշի «Դատաստանագրքի» հիման վրա, որը գործել է Կիլիկիայի հայկական թագավորությունում: Սմբատը իր ամբողջ կյանքը տվեց հայ վերածնված պետությանը ծառայելու գործին: Նա աչքի ընկնող զորավար էր, դիվանագետ,

պատմաբան և իրավագետ [58]: Սմբատը շուրջ 50 տարի, որպես պետության սպարապետ (Գունդստաբլ) մինչև իր մահը (1276թ.) գլխավորում էր զորքը ու միշտ պատրաստ էր պաշտպանելու թշնամիների հարձակումներից հայրենի երկրի սահմանները: Կիլիկյան պետության համար Սմբատ Գունդստաբլը նույնն է, ինչպիսին նրա ժամանակակից և բարեկամ ժուանվիլն էր (1225-1317թթ.) Ֆրանսիայի համար [59]:

«Պատմությունն» ընդգրկում է 951թ-ից, այսինքն Աշոտ 3-րդի Բագրատունու թագավորության սկզբից մինչև՝ 1331 թ. ընկնող ժամանակաշրջանը: 1276 թ. Սմբատի մահից հետո նրա պատմությունը շարունակել է մեկ ուրիշ տարեգիր: Որպես ականավոր գործիչ Սմբատը կարևոր տեղեկություններ է տվել հայբյուզանդական, հայ-արաբական, հայ-վրացական, հայ-թաթարական, հայ-պարսկական հարաբերությունների մասին: Առանձին ատելությամբ է խոսում բյուզանդական կայսրի և պատրիարքների հայադավ գործունեության մասին [60]:

«Հիշատակարանը», որ Սմբատը գրել է 1266-1269 թթ. բաղկացած է 60 չափածո տողերից:

Թեև նշված երկու աշխատությունները մեծ արժեք ունեն Սմբատի դարաշրջանն ուսումնասիրելու համար, սակայն իրավունքի պատմաբանների համար առանձնահատուկ նշանակություն ունեն Սմբատի մյուս երկու ստեղծագործությունները: Սկզբնական շրջանում շարունակելով Լամբրոնացու գործը, նա փորձում է օտար օրենքների թարգմանությամբ բավարարել հասարակության իրավական պահանջները: Այդ իսկ պատճառով թարգմանում է «Անտիոքի ասիզներ» իրավական հուշարձանը: Սակայն շուտով համոզվում է, որ օտար օրենքների յուրացումը «Ռեցեպցիան» հնարավորություն չի տալիս լիովին կարգավորելու հայոց թագավորության հասարակական հարաբերությունները և ձեռնամուխ է լինում կազմելու ազգային դատաստանագիրք, որը ամբողջովին կբավարարել հասարակության իրավական պահանջները:

«Անտիոքի ասիզները» [«Ասիզք» կամ ասիզներ բառը առաջացել է «assises» -ից, որը նշանակել է դատական նիստեր, ատյան, այսինքն՝ դատավարական օրենսգիրք, դատաստանագիրք] հրապարակվել է Անտիոքում՝ Բոհեմունդ 4-րդի օրոք /1201-1235թթ./: Օրենքների այդ հավաքածուն բաղկացած է երկու մասից՝ 1-ին մասը, որը ունի 17 գլուխ, բովանդակում է նորմեր, որոնք կարգավորում է սենյորի և նրա վասալի փոխհարաբերությունները, նրանց իրավունքներն ու պարտականությունները: Ասիզների 2-րդ մասը բովանդակում է 21 գլուխ և վերաբերվում է քաղաքացիների փոխհարաբերություններին: Սմբատը Ասիզները թարգմանել է 13-րդ դարի կեսերին, համենայն դեպս մինչև 1265 թ., երբ կազմվեց դատաստանագիրքը:

Ուշագրավ են Սմբատ Սպարապետի հայացքները իրավունքի և օրենքի, օրինականության, ամուսնաընտանեկան, քրեաիրավական, աշխատանքի պաշտպանության, երեխաների կրթության, պատերազմի և խաղաղության

հարցերի վերաբերյալ: «Դատաստանագիրքը», ըստ իր ձևի և համակարգված շարադրանքի և ըստ նյութի դասավորության իսկական օրենսգիրք է /կողմֆիկացիա/, թեև օրենքների այս հավաքածուն կոչվում է «Դատաստանագիրք», սակայն այն բովանդակում է ոչ միայն դատական, այլև իրավունքի մյուս ճյուղերի նորմեր:

Սմբատի Դատաստանագիրքը ֆեոդալական-ճորտատիրական օրենսգիրք է: Նրանում իրենց արտացոլումն են գտել աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների դասակարգի արտոնությունները, դասակարգերի ու դասերի անհավասարությունը, գյուղացիների ու արհեստավորների քաղաքական իրավագրկությունը, նրանց տնտեսական կախումը ֆեոդալների դասակարգից և նրանց պետությունից: Այդ պատճառով էլ նշված Դատաստանագիրքը, որպես հայ ֆեոդալական պետության պաշտոնական օրենսգիրք, ավելի քան հարյուր տարի գործում էր Կիլիկիայում:

Թեև օրենքների այդ հավաքածուն կոչվում է «Դատաստանագիրք», սակայն նա բովանդակում է ոչ միայն դատական, այլև իրավունքի մյուս ճյուղերի նորմեր:

Սմբատի Դատաստանագիրքը բովանդակում է 177 պարագրաֆներ: Իրավանորմերը դասավորված են հետևյալ կարգով՝ պետական և վարչական իրավունք (1-3, 70-71 և այլ պարագրաֆներ), եկեղեցական իրավունք (8 -17, 21-39, 51-66 և այլ պարագրաֆներ), քաղաքացիական իրավունք՝ (96-114 և այլ պարագրաֆներ), գրավադրման և հիպոթեկային իրավունք (99-104 պարագրաֆներ), ամուսնա-ընտանեկան իրավունք (72-98 և այլ պարագրաֆներ), ժառանգական իրավունք (94-96, 113-114 պարագրաֆներ), իրավախախտումներից և քրեական իրավունքից բխող պարտավորություններ (1-19, 119-177 և այլ պարագրաֆներ), դատական իրավունք (1, 48, 49, 61, 71, 79, 112 և այլ պարագրաֆներ), առևտրական իրավունք (106-112 և այլ պարագրաֆներ), ստրկատիրական և ճորտատիրական իրավունք (18, 115-118 պարագրաֆներ) [61]:

Ըստ նրա իրավունքի և օրենքի էությունն ու նպատակը կարգուկանոն հաստատելն է և ծառայելը հասարակական բարորությանը: Աշխարհական օրենքները, արտացոլելով աստվածային իրավունքը, կոչված է կարգավորել աշխարհիկ հարաբերությունները և պատժել օրինազանցներին: Սմբատ Սպարապետը ամուսնության համար սահմանում է որոշակի տարիք հասնելու հասկացությունը, և դատաստանագիրքը սահմանում էր 15 տ. հասակ ամուսնանալու և ասպետների շարքը անցնելու համար և ամուսնացողների կամավոր համաձայնության առկայությունը: Նա պաշտպանում է նաև կնոջ պատիվն ու արժանապատվությունը: Սեռ ուշադրություն է դարձրել նաև երեխաների խնամքի, դատարարական և կրթության հարցերին դատաստանագրքով նա իրավաբանորեն ամրագրել է երեխաների անվճար ուսուցումը:

Մխիթար Գոշի նման նա նույնպես չէր ընդունում օբյեկտիվ մեղսայնացման

սկզբունքը և ամրագրել է պատժի և պատասխանատվության անհատակա-նացման սկզբունքը: Պատիժը պետք է կիրառվի մեղադրվող անձի նկատմամբ՝ սուբյեկտիվ մեղսայնացման սկզբունքին համապատասխան:

Սմբատ Սպարապետին հայտնի էր նաև անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտը, որի դեպքում մարդը ենթակա չէ քրեական պատասխանատվության:

Սմբատը ընդհանրապես տարբերում էր իրավունքի հետևյալ տեսակները՝ Ա) աստվածային, բ) աշխարհիկ (պետական), գ) եկեղեցական

Օրենքների հիմքը աստվածային իրավունքն է՝ գրված Մովսեսի ավետարանի, առաքյալների և եկեղեցու հայրերի միջոցով:

Սպարապետը կանգնած էր արդարադատության օրինականության դիրքերում և պնդում էր, որ արդարադատությունը պետք է իրականացվի օրենքի հիման վրա: Օրենքը պետք է պահպանվի բոլորի կողմից, այդ թվում՝ նաև թագավորի:

Նա նաև խաղաղության և ժողովուրդների բարիդրացիական հարաբերությունների կողմնակից էր: Մասնավորապես, նրա անմիջական ջանքերով կնքվեց հայ-մոնղոլական 1254 թ. պայմանագիրը, որով ոչ միայն կասեցվեց մոնղոլական աշխարհակործան արշավանքը դեպի Կիլիկիա, այլև Հայաստանում որոշակիորեն մեղմացրեց մոնղոլական տիրապետության ծանրությունը: Այս պայմանագիրը կնքվեց Մանգու խանի նստավայրում՝ Կարակորում: Սույն պայմանագրի երկրորդ հոդվածով մշտական խաղաղության և բարեկամության հիմք է դրվել մոնղոլների և քրիստոնյաների միջև [62]: Այն բաղկացած էր 7 հոդվածներից: Նախ երկու կողմերը համաձայնվեցին ստեղծել հայ-մոնղոլական հատուկ բանակ՝ Միջագետքի, Ասորիքի և Պաղեստինի նվաճման համար: Մոնղոլները պարտավորվեցին պաշտպանել Կիլիկիայի թագավորությունը այն դեպքերում, երբ նրա վրա հարձակվեն Իկոնիայի, Եգիպտոսի սուլթանությունները և այլ պետությունները: Բացի այդ, Մանգու խանը Հերոմ 1-ին տալիս է հատուկ հրովարտակ, որ մոնղոլ իշխանությունը չների նրա երկիրը: Մանգու խանը խոստացավ հարկերից ազատել հայ հոգևորականներին և Կիլիկյան քաղաքներում չպահելով ոչ զորք, ոչ էլ պաշտոնյաներ: 1285թ. Մայիսի 7-ին կնքվեց նաև հաշտության պայմանագիր Կիլիկյան հայերի և Եգիպտոսի սուլթանի միջև: Պայմանագիրը բաղկացած էր պրեամբուլայից (ներածականից) և 30 հոդվածներից: Հայ-եգիպտական 1285թ. Պայմանագիրը կարևոր միջազգային իրավական ակտ է, որը հնարավորություն է ստեղծում պարզելու ոչ միայն հայ-եգիպտական փոխհարաբերությունները 13-րդ դարի վերջերին, այլև ծանոթանալու Մերձավոր Արևելքում միջազգային պայմանագրեր կնքելու կարգին:

Այդ պայմանագրի նշանակությունը կարևոր է նաև, որ հիմք է տալիս պատկերացում կազմելու Կիլիկիայի տնտեսական բարգավաճ դրության մասին: Հայ-եգիպտական պայմանագիրը վկայում է նաև այն մասին, որ Կիլիկիան

ունեցել է իր նավատորմը, ծովային առևտուրը, ավինորդական իրավունքը, ապաստան շնորհելու ինստիտուտը:

Այն տվյալներ է պարունակում նաև Կիլիկիայի մի քանի հասարակական խավերի մասին: Այդ պայմանագրով, որը պահպանվեց մինչև մոտ 14-րդ դարի առաջին քառորդը, հնարավորություն ստեղծեց Կիլիկիան գոնե միաժամանակ հեռու պահելու ասպատակություններից:

Սմբատ Սպարապետի իրավաքաղաքական հայեցակարգի հիմնադրույթներն են՝

1. պետության լավագույն ձևը սահմանադրական միապետությունն է
2. միապետի իշխանության սահմանափակումները վերաբերվում են՝ ա/ թագաժառանգման մեխանիզմին, բ/ ավատատերերի իմունիտետի պաշտպանությանը
3. դատական գերագույնը իշխանությունը պատկանում էր թագավորին / պետությանը/, իսկ եկեղեցականը դրա շարունակությունն է:

Կիլիկյան հայկական թագավորության պատմությունը հայ ժողովրդի բազմադարյան պատմության կարևոր ու բովանդակալից էջերից մեկն է [63]: Դատաստանագրքի հայերեն տեքստը նրա գերմաներեն թարգմանության հետ միասին հրատարակվել է 1905 թ.: Դատաստանագիրքը գրված է իր ժամանակի խոսակցական լեզվով՝ միջին հայերենով: Սմբատ Սպարապետի գրական ժառանգությամբ զբաղվել են ինչպես հայ, այնպես էլ օտար հեղինակները [64]:

Եզրակացություն

Միջնադարյան Հայաստանում կիրառված Դատաստանագրքերը ունեցել են էական կիրառական նշանակություն:

Դավիթ Ալավկաորդու կանոններում տեղ գտած դրույթները վերաբերել են մարդու իրավունքների բավականին լայն շրջանակի: Հետապնդելով կրթական նպատակներ՝ Դավթի կանոնները հիմնականում նվիրված են եղել ամուսնաընտանեկան հարաբերությունների հետ կապված հիմնախնդիրներին:

Մխիթար Գոշի Դատաստանագիրքը մեծ հեղինակություն է վայելել ինչպես ազնվականների ու պետական գործիչների, այնպես էլ հասարակ ժողովրդի շրջանում: Պատճառներից մեկն այն է, որ Դատաստանագրքում վերլուծվում են հասարակության տարբեր խավերի անձանց հարաբերությունների կարագավորումը, քննվում են սովորույթների և բարքերի նշանակությունը, սահմանվում է մեղքի գաղափարը և անմեղության կանխավարկածը:

Սմբատ Սպարապետը ժառանգում է Մխիթար Գոշի իրավաքաղաքական հայացքները՝ նրա գաղափարները փոխադրելով Կիլիկիայի հայկական թագավորական միջավայր: Մարդու իրավունքների հիմնախնդիրների վերլուծությունից բացի՝ Սմբատ Գունդստաբլի Դատաստանագիրքը Կիլիկիայում կենտրոնական իշխանության ամրապնդման համար կարևորագույն դերակատարություն է ունեցել:

Գրականության ցանկ

1. Ազատությունների Մեծ Խարտիան Անգլիայում /1512թ. հունիսի 15/, տես Արշակյան Ա, Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն, ստրկատիրության և ֆեոդալիզմի շրջան, հատոր 1, Ե., 1997թ, էջ 150:
2. Մարդու և Քաղաքացու իրավունքների մասին ֆրանսիական դեկլարացիան /1789թ. օգոստոսի 26/, տես Արշակյան Ա, Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն, Նոր ժամանակաշրջան, Ե., 1998, էջ 53:
3. ԱՄՆ-ի սահմանադրությունը /1787թ. սեպտեմբերի 17/ տես Արշակյան Ա, Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն, Նոր ժամանակաշրջան, Ե., 1998, էջ 136-140:
4. Кечекян Ц. Ф. О понятии источника права, учение записи МГУ, Вип 116, кн.1, Москва, 1946г.
5. Ներսեսյանց Վ. Ս., Իրավունքի և պետության տեսություն, Ե., 2001, էջ 155:
6. Шешеневич Г.Ф. Общая теория права, Москва, 1911г. ст., 368-369
7. Сергеевич В. И. Лекции по истории русского права, СПб, 1889-1990, с. 5.
8. Խրոպանյուկ Վ. Ն., Պետության և իրավունքի տեսություն, Երևան 1997, էջ 223-228:
9. Սաֆարյան Գ. Ն., Իրավունքի պատմության և տեսության հիմնահարցեր, Ե., 2010, 441-446էջ:
10. Ներսեսյանց Վ. Ս., նշվ. աշխ., էջ 155-174.
11. Марченко М. И. Источники права, М., 2005.
12. Зивс С. Л. Источники права, М., 1981.
13. Кросс Р. Прецидент в Английском праве, М., 1978.
14. Мицкевич В. И., Источники /формы выражения/ россиского права. Историко-теоритической очерк, закон, цоздание и токования. Под редакции А.С. Пиголкина, М., 1998, ст. 6.
15. Власов В., Власова Г., Дениеснко С., Теория государства и права, Ростов-на-Дону, 2016, с. 202-203.
16. Սաֆարյան Գ. Ն., նշվ. աշխ., էջ 444:
17. Жинкин С., Теория государства и права, Ростов-на-Дону, 2021, с. 219.
18. Վաղարշյան Ա., Պետության և իրավունքի տեսություն-2, Երևան, 2011, էջ 45:
19. Васильев А., Правовая доктрина как источник права, Вопросы теории и истории, Москва, 2021, с. 5-15.
20. Осавелюк А., Церковь и государство, М., 2021, с. 263-278.
21. Սամուելյան Խ. Հին հայ իրավունքի պատմություն, հատոր Ա, Ե., 1939, էջ 25:
22. Ավագյան Ռ., Հայ իրավական մտքի գանձարան, հ.1, Ե., 2001, էջ 20:
23. Նույն տեղում, էջ 179-244:
24. Ղազինյան Գ., Քրեական դատավարության պատմական և արդի հիմնախնդիրները Հայաստանում, Ե., 2001, էջ 21:
25. Աբրահամյան Ա., “Դավիթ Ալավկաորդու կանոնները”, /ուսմնասիրություն և բնագիր/, “Էջմիածին”, սեպտեմբեր-հոկտեմբեր 1952թ., հունվար, փետրվար, մարտ, 1953:

ԵՀՀ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ 2022

26. Սամուելյան Խ., նշվ. աշխ., էջ 75:
27. Աբեղյան Մ., Հայ հին գրականության պատմություն, Ե., 1946, էջ 46:
28. Մարիկյան Ռ., Դավիթ Ալավկաորդու կանոնական օրենսդրությունները// Արդարադատություն, 2015, հ. 2, Երևան, էջ 14-20:
29. Պողոսյան Է. Վ., Հայաստանի պետության և իրավունքի պատմություն, Երևան, 2009, էջ 189-190:
30. Թանանյան Գ. Մխիթար Գոշի իրավունքի փիլիսոփայությունը, ՊԲՀ, 2012, թիվ 1, էջ 39:
31. Բաստամենաց Վ., Կանոնագիտական երկեր, Երևան, 2015, էջ 33-34:
32. Գանձակեցի Կ., Հայոց պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և Մարի ծանոթագրությունները՝ Վարագ Առաքելյանի, Երևան 1982, էջ 159:
33. Առաքելյան Ա. , Հայ ժողովրդի մտավոր մշակույթի զարգացման պատմություն, Երևան 1959., էջ 385:
34. Աբեղյան Մ. , նշվ. աշխ. էջ 156:
35. Առաքելյան Ա., նշվ. աշխ., էջ 280:
36. Մանուչարյան Հ. , Դրվագներ հայ քաղաքական մտքի պատմությունից, Ե., 2002, էջ 89:
37. Ղանալանյան Ա., Ավանդապատում, Ե., 1969, էջ 178-179, 321:
38. Ավագյան Ռ., Հայ իրավական մտքի գանձարան, հ.1, Ե., 2001, էջ 337:
39. Ասլանյան Ա., Հայաստանի պետության և իրավունքի պատմություն, Ե., 2009, էջ 108:
40. [39], էջ 109:
41. Սուքիասյան Ա., Մ. Գոշը և “Հայոց դատաստանագիրքը”, Եր. 1962, էջ 20:
42. Սաֆարյան Գ., Մալխասյան Լ., Դատական իշխանությունը որպես սոցիալ-իրավական ինստիտուտ. Պատմատեսական հետազոտություն, Ե., 2020, էջ 39:
43. Գրիգորյան Ա., Բնական իրավունքի և մարդասիրական գաղափարները Մ. Գոշի “Դատաստանագրքում”, Պետություն և իրավունք, 1, Ե., 2001, էջ 62:
44. Սաֆարյան Գ., նշվ. աշխ., էջ 254:
45. Հովհաննիսյան Ա., “Մարդու իրավունքների հիմնախնդիրները միջնադարյան հայ իրավաքաղաքական հուշարձաններում” Օրենք և իրականություն, թիվ 7 ,Երևան 2007, էջ 34:
46. Սաֆարյան Գ .,նշվ . աշխ., էջ 251:
47. Швецов В., Государственный суверенитет, М., 1979, стр. 5.
48. Քաղաքագիտություն, Ե., 2006, էջ 102:
49. Մանուչարյան Հ. Գ., նշվ. աշխ. էջ 89:
50. Պողոսյան Է.Վ. ,նշվ. աշխ., էջ 196:
51. Միրումյան Կ , Քաղաքական ուսմունքների պատմություն, Ե., 2006, էջ 247:
52. Խաչատրյան Մ., Գոշի դատաստանագրքի կիրառումը պատմական Հայաստանի սահմաններից դուրս, Օրինականություն, N 35, Ե., 2006, էջ 42-45:
53. Սաֆարյան Գ. , նշվ. աշխ., էջ 99-100:
54. Սուքիասյան Ա. Գ., նշվ. աշխ., , էջ 61:
55. Ալիշան Ղ., Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 101
56. Պիվագյան Է. , նշվ. աշխ., էջ 87:
57. Սաֆարյան Գ., Սմբատ Սպարապետի իրավաքաղաքական հայեցակարգը,

- Օրինականություն, թիվ 65, Ե., 2011, էջ 2
58. Սուքիասյան Ա., Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմությունը, Ե., 1978, էջ 236-237:
59. Սուքիասյան Ա., [58], էջ 238:
60. Մանուչարյան Հ., նշվ. աշխ., էջ 96:
61. Սուքիասյան Ա., [58], էջ 241:
62. Ավագյան Ռ., [38], էջ 646:
63. Միքայելյան Գ., Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Երևան, 2007թ. էջ 500:
64. Սաֆարյան Գ., [63], էջ 364:

ОТРАЖЕНИЕ ВОПРОСОВ ПРАВ ЧЕЛОВЕКА В СРЕДНЕВЕКОВЫХ АРМЯНСКИХ СУДЕБНИКАХ

Մկրտիչ Մուրադյան

Երևանский университет «Айбусак»

Резюме: Средневековые армянские судебники имеют важную роль в изучении вопросов прав человека в Средневековой Армении и Киликии. Данные законоположения Давида Алавкаворди были действующим законодательным актом, о чем свидетельствуют летописцы того времени, и дошедшие до нас, многие рукописи. Доказательством того, что эти законоположения были действующим правовым актом, служат также значительное количество сохранных рукописей.

Судебник Мхитара Гоша пользовался большим авторитетом и уважением не только среди интеллигенции, но и в кругах современных ему политических и государственных деятелей. Гош был духовником и советником амирспасалара (верховного главнокомандующего) Грузинского царства, армянина по происхождению, Закарэ Долгорукого, который высоко его ценил. В «Судебнике» Смбата много статей, где разбираются вопросы взаимоотношений людей различных слоев населения, их обычаев, быта и нравов, о дворцовых чинах, порядке наказания преступников.

Историческое значение «Судебника» Смбата Спарапета также в том, что он сыграл немалую роль в борьбе правящих кругов Киликийской Армении за усиление центральной власти.

Ключевые слова: Источники права, судебники, Мхитар Гош, права человека, феодальное право

REFLECTION OF HUMAN RIGHTS ISSUES IN MEDIEVAL ARMENIAN JUDICIALS

Mkrtich Muradyan

Yerevan "Haybusak" University

Medieval Armenian judgments played an important role in the study of human rights issues in Medieval Armenia and Cilicia.

These statutes of David Alavkavordi were a valid legislative act, as evidenced by the chronicles of that time, and many manuscripts that have come down to us. A significant number of preserved manuscripts also serve as proof that these statutes were valid legal acts.

The Code of Law of Mkhitar Gosh enjoyed great authority and respect not only among the intelligentsia but also in the circles of contemporary political and state leaders. Gosh was the confessor and advisor to the Amirspasalar (Supreme Commander-in-Chief) of the Georgian kingdom, an Armenian by origin, Zakare Yerkeynabazuk, who highly valued him. In the “Code of Law” of Smbat, there are many articles, which deal with the issues of relations between people of various strata of the population, their life and customs, about palace ranks, and the procedure for punishing criminals.

The historical significance of Smbat Sparapet’s “Code of Law” also lies in the fact that it played a significant role in the struggle of the ruling circles of Cilician Armenia for strengthening the central power.

Keywords: Sources of law, judicial codes, Mkhitar Gosh, human rights, feudal law.

Քննակում.

Ելույթներ.

Գ. Սաֆարյան.- Թեման չնայած պայմանական է, սակայն արդիական է իր հարցադրումներով և դրանց լուծման ուղիներով:

Պատմական իրադարձությունների բերումով Մխիթար Գոշը ոչ միայն առաջին հայ կողիֆիկատորն է, օրենսդիրն ու օրենագետը, այլև եղել է առաջին իրավապաշտպանը:

Այս առումով թե՛ Գոշի Դատաստանագիրքը և թե՛ ինքը՝ Մխիթար Գոշը իր գաղափարախոսությամբ և գործունեությամբ միշտ արդիական ու ուղենիշ է եղել, կա և կլինի մեզ՝ հայերիս համար:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ և ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

¹Լիանա Մալխասյան, ²Գառնիկ Սաֆարյան

¹ Երևանի «Հայբուսակ» Համալսարանի Իրավագիտություն և միջազգային
հարաբերությունների ինստիտուտ
² ՀՀ ԳԱԱ, Իրավ. և փիլ. ինստիտուտ

Ամփոփում. Յոյց է տրված, որ, Հայոց ցեղասպանությունը որպես մեկ ամբողջական շարունակվող ոճրագործություն դիտարկելիս Ցեղասպանության հանցագործության կանխման և դրա համար պատժի մասին կոնվենցիան անվերապահորեն տարածվում է Հայոց ցեղասպանության վրա և կազմում է այն միջազգային-իրավական ակտերի անկապելի մասը, որոնք գործել են մինչև հիշյալ կոնվենցիայի ընդունումը: Այս առումով Հայոց ցեղասպանության որակման և դատապարտման համար միջազգային իրավական փաստաթղթեր են հանդիսանում նաև ad hoc գործող միջազգային տրիբունալների որոշումները: Միջազգային ողջ հանրության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը նշանակալի քայլ է կլինի նման հանցագործությունների կանխարգելման, ազգերի անվտանգ և ապահով կեցության ու բնականոն զարգացման համար:

Բանալի բառեր. Ցեղասպանություն, մարդու իրավունքներ, կոնվենցիա, հանցագործություն, միջազգային իրավունք, միջազգային-իրավական պատասխանատվություն:

XX դարի սկզբին Օսմանյան կայսրությունը տնտեսական և քաղաքական խոր ճգնաժամ էր ապրում: Ուժեղացել էին հպատակ ժողովուրդների ազատագրական շարժումները: Թուրքական հասարակությունում առաջացել էին ուժեր, որոնք ցանկանում էին երկիրը դուրս բերել ծանր կացությունից և ամեն գնով պահպանել կայսրությունը: Այդ ուժերից էր 1889թ. կազմակերպված «Իթթիհաթ վե Թերաքքի» («Միություն և առաջադիմություն») կուսակցությունը, որը գլխավորում էր հակասուլթանական շարժումը երկրում:

1907թ. դեկտեմբերին Փարիզում տեղի ունեցավ Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի երկրորդ Համաժողովը: Երիտթուրքական և դաշնակցական կուսակցությունները, արաբական, հրեական, ապա մակեդոնական կոմիտեները համաձայնության եկան համատեղ ջանքերով մինչև 1909 թվականը զինված ապստամբությամբ տապալել համիդյան վարչակարգը և Թուրքիայում հաստատել սահմանադրական կարգեր: Բայց հեղաշրջումը կատարվեց ծրագրված ժամկետից շուտ՝ 1908թ. հուլիսին: Շարժման կենտրոնը դարձավ Սալոնիկը, իսկ շարժիչ ուժը՝ թուրքական բանակը: 1908թ. հուլիսի 10 (23)-ին Մակեդոնիայում Նիզադի և Էնվեր բեյերի գլխավորությամբ թուրքական զորքերն ապստամբվում են և շարժվում Կ. Պոլիս՝ սուլթանից պահանջելով վերականգնել 1876թ. ընդունված, բայց չգործադրված Միդիատյան սահմանա-

դրությունը: Կարճ ժամանակում տեղի է ունենում պետական հեղաշրջում, երկրում հաստատվում են սահմանադրական միապետական կարգեր, որտեղ վճռական դեր էին խաղում երիտթուրքերը [1]: Սակայն շատ կարճ ժամանակահատվածում երիտթուրքական կառավարությունը բացահայտեց իր իրական դեմքը՝ շարունակելով սուլթան Համիդի վարչակարգի հաստատած քաղաքականությունը ավելի նենգ ու դաժան եղանակով՝ հայոց հարցի լուծումը ցեղասպանության միջոցով: Նրանց հանցավոր մտադրությունն ընկած էր պետական ողջ ապարատի քաղաքականության հիմքում:

1911թ. Հունական Սալոնիկ քաղաքում կայացած գաղտնի ժողովում Թալեաթի, Էնվերի, Ջեմալի ղեկավարությամբ որոշում կայացվեց առաջիկա պատեհ առիթի դեպքում հայերին իսպառ ոչնչացնել՝ Հայաստանը ամբողջությամբ գրավելու, ռուսական վտանգը վերացնելու և «Մեծ Թուրան» ստեղծելու պանթուրքիստական ծրագիրը իրականություն դարձնելու համար [2]:

20-րդ դարում աշխարհում առաջինը հայ ժողովուրդը ենթարկվեց պետականորեն ծրագրավորված և մանրազնին պլանավորված ցեղասպանության: Հիմնականում դրանով է Հայոց ցեղասպանությունը տարբերվում մինչ այդ համաշխարհային պատմության մեջ հայտնի զանգվածային կոտորածներից:

Մեկ այլ ոչ պակաս առանձնահատկություններից է, որ Հայոց ցեղասպանության նախապատրաստումը և իրականացումը ընթացավ խիստ գաղտնիության պայմաններում: «Գաղտնիությունը»՝ որպես միջազգային հասարակությունից գաղտնի գործելակերպ, ևս ուղղակիորեն վկայում է թուրքական իշխանությունների կանխամտածված, ծրագրավորված և մանրազնին պլանավորված ցեղասպան քաղաքականության մասին և այն մասին, որ երիտթուրքական կառավարությունը լիովին գիտակցում էր իր քաղաքականության և ծրագրավորված հրեշավոր հանցագործության ողջ հետևանքները (հայ ազգաբնակչության ոչնչացումը, հայրենագրվումը, հայերի ունեցվածքի ապօրինի յուրացումը և այլն), և ցանկանում էր դրանց առաջացմանը (քրեագիտության մեջ դա բնորոշվում է որպես ուղղակի դիտավորություն):

Հայոց ցեղասպանության նախապես ծրագրավորված ու մանրազնին պլանավորված և խիստ գաղտնիության պայմաններում իրականացրած հրեշավոր մտադրության և իրականացված մասսայական կոտորածների մասին են վկայում բազմաթիվ և բազմատեսակ պետական (թուրքական, գերմանական, ֆրանսիական, անգլիական, ռուսական) պաշտոնական գրագրությունները, արխիվային նյութերը, վերապարծ ականատեսների վկայությունները, և այլն:

Ահա դրանից մեկի վկայությունը. երիտթուրքերի կառավարությունը Թալեաթի ստորագրության մեկ այլ գաղտնի կարգադրության ուղղեց վիլայեթների իշխանություններին, որում նշված է, որ անհրաժեշտ է ոչնչացնել Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի ողջ հայ ազգաբնակչությանը: «Կառավարությունը, նշվում էր կարգադրության մեջ, իր վրա է վերցնում ամբողջ ատասխանատվությունը և հրամայում է չխնայել անգամ օրորոցի երեխաներին» [3]:

Արևմտահայերի մասսայական տեղահանությունն ու բռնագաղթը այլ բան չէր, քան նրանց մասսայական բնաջնջում: Ժան դը Մորգանը, դոկտոր Հ. Լեպսիուսը և ուրիշներ հայերի տեղահանությունը համարում են «դիմակավորված կոտորած», «ծրագրված ոչնչացում»: 1915-1916 թվականներին երիտթուրքերի կառավարությունը հրի ու սրի միջոցով արևմտահայերին մասսայորեն տեղահան արեց հայրենի բնակավայրերից, կողոպտեց նրանց ունեցվածքը, ավերեց ու ամայացրեց ամբողջ Արևմտյան Հայաստանը, բնաջնջեց մեկուկես միլիոն հայ:

Թուրքիայի մեծ վեզիր Թալեաթը լկտիաբար հայտարարում էր. «Երեք ամսում ես ավելի շատ բան արեցի հայկական հարցը լուծելու համար, քան Աբդուլ Համիդը 30 տարում». «Հայկական հարց այլևս գոյություն չունի, որովհետև այլևս հայեր գոյություն չունեն»: «Չարժե հայերի մասին վիճել,- ասում է նա Ամերիկայի դեսպան Հ. Մորգենթաուին,- որովհետև մենք արդեն լիկվիդացիայի ենք ենթարկել նրանց երեք քառորդին [4]: Ոչ Բիթլիսում, ոչ Վանում և ոչ էլ Էրզրումում այլևս հայեր չկան»:

Հայոց ցեղասպանության սանձազերծման մեջ Թուրքիային ամեն կերպ խրախուսում էր դաշնակից Գերմանիան, իսկ եվրոպական ոչ մի երկրից հայերը գործնական որևէ օգնություն չստացան: Միայն անհատ հումանիտատներն էին (Լեպսիուս, Անատոլ Ֆրանս, Վեսելովսկի, Նանսեն, Բրյուսով, Բոլկ և ուրիշներ) իրենց բողոքի ձայնը բարձրացնում ի պաշտպանություն հայերի:

Թուրքական կառավարության գաղտնի որոշումների, հրահանգների, կարգադրությունների և այլ «պաշտոնական փաստաթղթերի վերլուծությունը ցույց է տալիս, որ Օսմանյան կայսրության պետական կառավարման բարձրագույն մարմինները, ինչպես նախարարների խորհուրդը, այնպես էլ առանձին նախարարություններ, ակտիվորեն ներգրավված են եղել Հայոց ցեղասպանության նախապատրաստման աշխատանքներում: Այն եղել է ծանրագույն միջազգային հանցագործություն, որի պատասխանատվությունը կրում են ոչ միայն առանձին անհատներ, այլ նաև օսմանյան թուրքերի կողմից ղեկավարվող պետականությունը [5]:

Այս բոլորը աներկբա վկայում են, որ Թուրքական կառավարության որոշումների և տեղական իշխանությունների կողմից դրանց անշեղ իրագործումը նախապես ծրագրավորված և մանրամասն պլանավորված հայատյաց քաղաքականության գործնական իրացումն էր՝ թուրքական ողջ պետական մեքենայի կողմից (վերից վար): Այստեղից եզրակացություն. հայատյաց քաղաքականության և հայոց ցեղասպանության՝ որպես ուղղակի դիտավորությամբ կատարած հրեշավոր հանցագործության սուբյեկտներն են՝ Թուրքական կենտրոնական և տեղական իշխանությունները, պաշտոնատար անձինք, զինվորականությունը, ոստիկանությունը, իթթիահատականների հանցավոր կազմակերպությունը (Միություն և առաջադիմություն), ինչպես նաև ջարդերի անմիջական կատարողները: Հենց ցեղասպանության, որպես ծանրագույն հանցագործության

բնույթն արտահայտվում է նրա դիտավորության ուղղվածության մեջ, որի էությունը նրանում է, որ այդ հրեշավոր հանցագործությունը իրականացվում է միմիայն պետական մակարդակով, նախօրոք մշակված հանցավոր ծրագրի շրջանակներում, որի հիմնական նպատակն է՝ ոչնչացնել պատմականորեն ձևավորված ժողովրդին (ազգին) կամ նրա մի մասին (ինչպես հնարավոր կլինի՝ պայմանավորված արտաքին և ներքին գործոններով) և տիրելով զոհի հայրենիքին, ունեցվածքին, պատմամշակութային ժառանգությանը և այլն:

Այդ է պատճառը, որ ցեղասպանությունը, դասվում է միջազգային ծանրագույն հանցագործությունների շարքին, որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն և որի նկատմամբ գոյություն չունի վաղեմության ժամկետ:

Ցեղասպանության հետևանքով հայ ժողովուրդը կրեց մարդկային, նյութական և հոգեկան անդառնալի կորուստներ: Արևմտյան Հայաստանի հայ բնակչությունը զրկվեց հայրենիքից ու կորցրեց իր բնօրրանը համարվող տարածքներից, ինչպես նաև ունեցվածքից: Լուրջ փոփոխություններ տեղի ունեցավ ժողովրդի կենդանի մնացած մի հատվածի հոգեբանության, նրա հասարակական և քաղաքական մտածելակերպի, հոգևոր կերտվածքի բուն էության մեջ, ինչպես Հայրենիքում, այնպես էլ Սփյուռքում:

Հայոց ցեղասպանության պատասխանատվության համար միջազգային իրավական հիմքերն են ինչպես ցեղասպանության ժամանակաշրջանում գործող միջազգային իրավական սովորույթը, միջազգային պայմանագրային նորմերը և պետությունների պրակտիկան, այլևարդի միջազգային իրավունքի կոնվենցիաները, միջազգային պայմանագրային նորմերը և «ad hoc» գործող միջազգային տրիբունալների որոշումները:

Այս կապակցությամբ դժվար է համաձայնվել որոշ հեղինակների այն կարծիքի հետ, ըստ որի. «Հայոց ցեղասպանության նկատմամբ կիրառելի իրավունքի հիմնահարցը քննարկելիս, նպատակահարմար ենք համարում հետազոտողների ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ տվյալ տեսանկյունից վերլուծության առարկա պետք է դառնան ոչ թե ցեղասպանության հանցագործության համար միջազգային իրավական պատասխանատվություն նախատեսող առկա միջազգային և ներպետական իրավակարգավորումները, այլ Հայոց ցեղասպանության իրագործման ժամանակահատվածում գոյություն ունեցածները» [6]: Այս դիրքորոշումը, մեր կարծիքով, մեթոդաբանական ճիշտ մոտեցում չէ: Գտնում ենք, որ Հայոց ցեղասպանության միջազգային-իրավական պատասխանատվության հիմքերը կազմում են միմյանց հետ շաղկապված ցեղասպանության և արդի ժամանակաշրջանների միջազգային սովորույթական իրավունքի և պայմանագրային նորմերի համակցությունը: Դրանք արհեստականորեն չի կարելի սահմանազատել միմյանցից, քանի որ.

անաջին՝ ցեղասպանության ժամանակաշրջանի միջազգային սովորույթային իրավունքի և պայմանագրային իրավունքի նորմերը ամենևին էլ չեն կորցրել իրենց իրավաբանական ուժը,

Երկրորդ՝ դրանք հանդիսացել են իրավական աղբյուր արդի միջազգային իրավական պայմանագրային (այդ թվում 1948թ. Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժելու մասին կոնվենցիայի) ձևավորման ու զարգացման համար,

Երրորդ՝ քանի դեռ ցեղասպանություն իրականացրած սուբյեկտը (Թուրքիան) շարունակում է ցեղասպանության ժխտողական պետական քաղաքականությունը՝ ամենաստոր եղանակներով ու մեթոդներով (հայկական պատմամշակութային հուշարձանների ոչնչացմամբ, պատմական և արխիվային նյութերի ոչնչացմամբ կամ կեղծմամբ, ազգային խտրականության և ընդհուպ մինչև սպանություն՝ ազգային հողի վրա՝ Հրանտ Դինքի սպանությունը):

Ցեղասպանության հետևանքով աշխարհասփյուռ հայրությունը դեռևս չի վերադարձել իր բնօրրանը՝ Արևմտյան Հայաստան, հետևաբար չի ավարտվել նաև Թուրքիայի ցեղասպան քաղաքականությունը կամ ցեղասպանությունը (շարունակվող ցեղասպանություն):

Այստեղից կարելի է եզրակացնել, որ Հայոց ցեղասպանության միջազգային-իրավական պատասխանատվության համար իրավական հիմք են հանդիսանում ինչպես 19-րդ դարի երկրորդ կեսի, այնպես էլ 20-րդ դարի և արդի ժամանակաշրջանի միջազգային իրավական ակտերը, որոնք առնչվում են ցեղասպանության հանցակազմի հետ:

Թուրքիայի Հանրապետության միջազգային-իրավական պատասխանատվության ենթարկելու իրավաչափությունը նաև նրանում է, որ նա ոչ միայն իրավահաջորդն է Օսմանյան Կայսրության կողմից կատարված ցեղասպանության համար, այլև իր կողմից առ այսօր շարունակվող ցեղասպան քաղաքականության (շարունակվող ցեղասպանության) համար:

Ցեղասպանությունը՝ ծրագրավորված պետական ռասիստական քաղաքականության իրագործումն է տարբեր հանցավոր եղանակներով ու մեթոդներով (սպանություններ, ֆիզիկական կամ մտավոր խեղման պատճառում, բնակչության չհիմնավորված տեղահանություն մահվան ելքով, մշակութային արժեքների ոչնչացում և այլն), որոնք ուղղված են ողջ ազգի էթնոսի, ժողովրդի կամ որևէ կայուն ու մշտական մարդկային խմբի կամ դրանց առանձին անձանց լրիվ կամ մասնակի ոչնչացմանը:

Այս տեսանկյունից, հետազոտողների ճնշող մեծամասնությունը թյուրիմացաբար ցեղասպանության հիմքեր են տեսնում հին և միջնադարյան պատերազմներում, ինկվիզիցիայում և այլ ընդհարումներում, որոնք ցեղասպանության հասկացության հետ կապ չունեն կամ կարող են նմանվել արտաքին դրսևորումներով (օրինակ՝ դաժանությամբ, սպանություններով, զանգվածային կոտորածներ և այլն):

Ցեղասպանությունը համանման ոճրագործություններից տարբերվում է հետևյալով.

1. օբյեկտիվ առումով՝ ցեղասպանության հիմնական օբյեկտը մարդկային

մշտական և կայուն էթնոսն է՝ իր ուրույն քաղաքակրթությամբ (մշակույթով, լեզվով, կրոնով, սովորույթով, ավանդույթով և այլն),

2. սուբյեկտիվ առումով՝ ցեղասպանությունը իրականացվում է պետական ռասիստական քաղաքականության միջոցով՝ ուղղակի դիտավորությամբ:

Այս կապակցությամբ խիստ ուսանելի է Նախկին Հարավսլավիայի գործով Միջազգային տրբունալի որոշումներից մեկը, որում նշված է, որ «չնայած կատարվածի ողջ դաժանությունը, արարքը չի կարող համարել ցեղասպանություն, եթե մեղավորի մտադրությունը (դիտավորության ուղղվածությունը՝ Գ.Ս.) խմբի, որպես այդպիսին ոչնչացումը չէ («to destroy the group in question»)» [7]:

Ուրեմն, ցեղասպանության հանցագործության սուբյեկտիվ կողմի դիտավորության ուղղվածությունը՝ ազգային, էթնիկական, ցեղական կամ կրոնական որևէ խմբի, որպես այդպիսին, լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությունն է (ընդգծումը՝ Գ.Ս.):

Առաջին միջազգային իրավական ակտը, որը 1915թ. հայերի կոտորածները որակեցին որպես մարդկային և քաղաքակրթության (այսինքն՝ միջազգային հանրության) դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն (ըստ էության՝ ցեղասպանություն, չնայած որ այս եզրույթը այն ժամանակ հայտնի չէր), դա Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի 1915թ. մայիսի 24-ի համատեղ հռչակագիրն է, որում, մասնավորապես, նշվում է. «Ողջ անցած ամսվա ընթացքում Հայաստանում տեղի են ունենում հայերի կոտորածներ քրդերի ու թուրքերի կողմից օսմանյան իշխանությունների ակնհայտ թողտվությամբ, իսկ երբեմն նաև դրանց ուղղակի աջակցությամբ... «Ելնելով Թուրքիայի կողմից մարդկայնության և քաղաքակրթության դեմ կատարվող այդ նոր հանցագործություններից Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի կառավարությունները սույնով հրապարակայնորեն հայտարարում են Բարձր Դռանը, որ նրանք այդ հանցագործությունների համար անձնական պատասխանատվությունը դնում են թուրքական կառավարության բոլոր անդամների, ինչպես նաև նրա այն տեղական ներկայացուցիչների վրա, որոնք առնչված կլինեն տվյալ կոտորածին» [8]:

Անտանտի երկրները փորձեցին իրագործել 1920թ. օգոստոսի 10-ի Սևրի խաղաղության պայմանագրում ամփոփված Մայիսյան հռչակագրի դրույթները, որոնք Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ կատարված միջազգային հանցագործությունների վերաբերյալ մի շարք դրույթներ են պարունակում: Մասնավորապես, Պայմանագրի Գլուխ 7-ում՝ «Պատժամիջոցներ» (հոդվածներ 226-230), նախատեսված են նորմեր պատերազմական հանցագործությունների և «կոտորածների (massacres)», այսինքն՝ հայերի դեմ իրագործած հանցագործության առնչությամբ պատասխանատվության ենթարկելու համար: Այսպես, օրինակ, հոդված 226-ը նախատեսում է, որ «Թուրքական կառավարությունը ճանաչում է Դաշնակից և Միավորված Տերությունների՝ նշված հանցագործությունները կատարողներին պատասխանա-

տվության ենթարկելու իրավունքը»: Հոդված 230-ն իր հերթին պարտավորեցնում է Թուրքիային «հանձնել Դաշնակից Տերություններին այդ հանցագործությունների մեջ մեղադրվող անձանց»: Ինչպես նշում են «Իրավական ուղեցույց»-ի հեղինակները. «Ի մի բերելով վերը նշվածը՝ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ Օսմանյան կայսրությունը, լինելով 1878թ. Բեռլինի պայմանագրի, 1899թ. Ցամաքային պատերազմի օրենքների ու սովորույթների մասին Հաագայի երկրորդ կոնվենցիայի և այլ միջազգային իրավական փաստաթղթերի մասնակից, ստորագրելով Սևրի պայմանագիրը և ստանձնելով մի շարք այլ միջազգային իրավական պարտականություններ, ըստ միջազգային իրավունքի պարտավորված էր կանխարգելել կայսրության հայկական բնակչության ամբողջական կամ մասնակի ոչնչացումը: Հետևաբար, Հայոց ցեղասպանությունը դիտարկվում է ոչ միայն իբրև սովորույթային միջազգային իրավունքի նորմերի, այլ նաև Օսմանյան կայսրության միջազգային պայմանագրային պարտավորությունների խախտում: Լինելով միջազգային հանրության մի մասնիկ՝ Օսմանյան կայսրությունը պարտավոր էր գործել միջազգային իրավունքին համապատասխան, որն արգելում էր նշված հանցագործությունները» [9]:

Հայոց ցեղասպանության համար միջազգային-իրավական պատասխանատվության հիմնական փաստաթղթերից է «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիան է, որն ընդունվել է 1948թ. դեկտեմբերի 9-ին և ուժի մեջ է մտել 1951թ. հունվարի 12-ին:

Ոմանք պնդում են, որ հիշյալ կոնվենցիայի դրույթները հետադարձ ուժ չունեն և հետևաբար, չեն տարածվում դրանից առաջ եղած ցեղասպանությունների, այդ թվում նաև Հայոց ցեղասպանության վրա, քանի որ կխախտվի միջազգային քրեական իրավունքի հայտնի սկզբունքներից մեկը՝ «չկա հանցագործություն առանց օրենքի» («nullum crimen sine lege»): Ամենևին էլ չհակառակվելով նման սկզբունքին, որի ակունքները հասնում են հին հռոմեական իրավունքի համակարգը, այդուհանդերձ, փորձենք հիմնավորել Ցեղասպանության Կոնվենցիայի կիրառելիության հնարավորությունը՝ Հայոց ցեղասպանության համար պատասխանատվության համատեքստում:

Փաստարկ առաջին՝ ցեղասպանության ժամանակակից հասկացությունը մշակել է լեհ-ամերիկյան իրավաբան Ռաֆայել Լեմկինը, որը պատմության ընթացքում եղած այլ ջարդերի հետ միասին, հիշատակում է նաև հայերի կոտորածները և հենց հայերի կոտորածների պատմության ուսումնասիրությունից է նա հետևություն արել ցեղասպանության, այսինքն՝ մարդկային կայուն խմբի ոչնչացումը որպես այդպիսին: Հայերի ցեղասպանությամբ է նաև հիմնավորվում այդպիսի հանցագործության առկայությունը երկրորդ համաշխարհային պատմության ընթացքում՝ հրեաների Հոլոքոստը՝ որպես ցեղասպանություն:

Փաստարկ երկրորդ. Ցեղասպանության կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո (1951թ. հունվարի 12-ին) հետադարձ ուժով (ընդգծումը՝ Գ.Ս.) տարածվել

է երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ կատարված հանցագործությունների պատժելիության վրա [10]:

Հետևաբար, եթե մեկ անգամ Յեղասպանության կոնվենցիան ունեցել է հետադարձ ուժի իրավազորություն, ապա ինչու՞ այն չպետք է տարածվի 20-րդ դարի առաջին՝ հայոց ցեղասպանության վրա, որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործության և որի հիման վար էլ մշակվել է այդ ոճրագործության քրեաիրավական հասկացությունը և որակումը:

Փաստարկ երրորդ. Յեղասպանության կոնվենցիան ուղղակիորեն տարածվում է Հայոց ցեղասպանության համար միջազգային-իրավական պատասխանատվության վրա, քանի որ Թուրքիայի Հանրապետությունը ոչ միայն որպես իրավահաջորդի կարգավիճակով է պատասխանատու, այլև «շարունակվող ցեղասպանության» համար, քանի դեռ չի վերացրել ցեղասպանության այն հետևանքները, որոնք օբյեկտիվորեն ենթակա են վերացման՝ ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը, նյութական և բարոյական վնասների հատուցումը, հակահայկական ագրեսիվ և դեսպանության ժխտողական քաղաքականության շարունակությունը և այլն:

Փաստարկ չորրորդ. 1968թ. պատերազմի և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետներ չկիրառելու մասին կոնվենցիայի համաձայն, Հայոց ցեղասպանության համար պատասխանատվության վրա ոչ մի վաղեմության ժամկետ չի կարող տարածվել, հենց դրանով են տարբերվում միջազգային ծանրագույն հանցագործությունները սովորական քրեական հանցագործություններից:

Այս առումով իրավացի են «Իրավական ուղեցույց»-ի հեղինակները, երբ պնդում են, որ «վաղեմության որևէ ժամկետ չի կարող կիրառվել պետության պատասխանատվության նկատմամբ, և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում միջազգային դատական կամ արբիտրաժային ատյանը պետք է որոշի՝ ընդունելի են, թե ոչ որևէ պետության միջազգային իրավական պահանջները» [11]:

Փաստարկ հինգերորդ. Ժամանակակից միջազգային քրեական իրավունքի տեսությունը 1915թ. հայերի զանգվածային կոտորածները որակում է որպես առաջին «ցեղասպանություն», որը լիովին համընկնում է Յեղասպանության կոնվենցիայով նախատեսված հանցակազմին [12]:

Գրականության ցանկ

1. Петросян Ю.А. Младотурецкое движение (вторая половина XIX-начало XXвв.), М., 1971; Կիրակոսյան Զ. Երիտթուրքական շարժում. ծագումը, ընթացքը // «Գարուն» (Ե.), 1972, № 3, էջ 88-92:
2. Հայոց պատմություն: Դասագիրք բարձրագույն ուսումնական հաստատությունների համար: Խմբ. պրոֆ. Հր. Ռ. Սիմոնյանի, Երևան, 2012, էջ 464:
3. Հայոց պատմություն, [2], էջ 647:
4. The memoirs of Naim Bey, Turkish Official Documents relating to the Deportations and Massacres of Armenians. London, 1920, էջ 16 (մեջբերումն ըստ Հայ

- ժողովրդի պատմություն: Հատոր VI: Հայաստանը 1870-1917 թվականներին: ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ: Երևան, 1981, էջ 555):
5. Հենրի Մորգենթաու (1856-1946) ամերիկացի դիվանագետ, իրավաբան, 1913-1916թթ. ԱՄՆ-ի դեսպան Օսմանյան կայսրությունում, պատերազմի ընթացքում ներկայացնում էր նաև Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Իտալիայի և Բելգիայի շահերը, Մերձավոր Արևելքում օգնության ամերիկյան կոմիտեի (Ամերկոմ) փոխնախագահ, փորձել է կանխել հայերի արտաքսումն ու կոտորածը: Նրա «Հայկական ջարդերի առթիվ» (1918), «Ինչու՞ պետք է կործանել Օսմանյան կայսրությունը» (1918), «Հայաստանը կանչում է» (1918), «Հայերի կոտորածները (1915-ին)» (1922) հոդվածները, «Հայաստանի ողբերգությունը» (1918), «Բոսֆորի գաղտնիքները 1913-1916» (1918), «Դեսպան Մորգենթաուի հուշերը» (1919) գրքերը կարևոր վկայություններ են Հայոց ցեղասպանության մասին:
 6. Ռուբեն Սաֆրաստյան, Թուրքական պաշտոնական վավերագրերը Հայոց ցեղասպանության նախապատրաստման մասին //Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները: Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով, զեկույցների ժողովածու, Երևան, 2014, էջ 475:
 7. Prosecutor v. G. Jeliscic. Case № IT -95-10. 14 December 1999, § 93:
 8. Տե՛ս և Геноцид армян в Османской империи: Сборник документов и материалов. Под. ред. М.Г. Нерсисяна. 2-е изд., дап. Ереван, 1983, с. 602-603.
 9. Հայերի ցեղասպանության համար միջազգային-իրավական պատասխանատվության հիմքերը, էջ 13-14:
 10. R. Lemkin, Axis rule in occupied Europe: tows of occupation, analysis of government; proposals for re-dress. Washington: Carnegie Endowment for International Peace, Division of International Law, 1944, p. 80 n.3, Raphael Lemkin, A crime without a name //Ameri-can Scholar, Volume 15, № 2 (April 1946), pp. 227-230.
 11. Հայերի ցեղասպանության համար միջազգային-իրավական պատասխանատվության հիմքերը, էջ 22:
 12. Международное уголовное право. Под общей редакцией академика В.Н. Кудривцева. М., «Наука», 1999, с. 130; Наумов А.В., Кибальник А.Г., Орлов В.Н., Волосюк П.В. Международное уголовное право. Под редакцией А.В. Наумова, А.Г. Кибальника. Российская правовая академия. М., 2014, с. 2016-217.

ГЕНОЦИД АРМЯН И ПРАВА ЧЕЛОВЕКА.

ПРОБЛЕМЫ ОТВЕТСТВЕННОСТИ

¹Лиана Малхасян, ²Гарник Сафарян

¹Институт Юриспруденции и Международных отношений ЕУА

²НАН Армении, Институт права и философии

В работе показано, что, когда Геноцид армян рассматривается как продолжающееся преступление, Конвенция о предупреждении преступления геноцида и наказании за него безоговорочно применяется к Геноциду армян и является неотъемлемой частью международно-правовых актов. В этом отношении

решения международных трибуналов, действующих на <<ad.hoc>>, также являются международно-правовыми инструментами для квалификации и осуждения Геноцида армян.

Признание и осуждение Геноцида армян всем международным сообществом станет значительным шагом на пути к предотвращению подобных преступлений, безопасному и надежному существованию народов и их нормальному развитию.

Ключевые слова. Геноцид, права человека, конвенция, преступление, международное право, международно-правовая ответственность.

THE ARMENIAN GENOCIDE AND HUMAN RIGHTS. ISSUES OF RESPONSIBILITY

¹Liana Malkhasyan, ²Safaryan Garnik

¹Institute of Law and International Relations of YHU

²NAS of Armenia, Institute of Law and Philosophy

In this article it is shown, that when the Armenian Genocide to consider as a complete ongoing crime, then the Convention on the Prevention of the Crime of Genocide Acceptance: In this respect, the decisions of the international tribunals operating on ad.hoc are also international legal instruments for the qualification and condemnation of the Armenian Genocide.

Recognition and condemnation of the Armenian Genocide by the entire international community will be a significant step towards the prevention of such crimes, the safe and secure existence, and the normal development of nations.

Keywords. Genocide, human rights, convention, crime, international law, division of International Law.

Քննակում.

Ելույթներ.

Գ. Առաքելյան.- Թեման խիստ արդիական է թե տեսական առումով և թե գործնական նշանակությամբ:

Գ. Սաֆարյան.- Թեման խիստ արդիական է հատկապես հայոց պետականության զարգացման ներկա փուլում: Այս առումով զեկուցման բովանդակությունը գիտական ու գործնական առումով շատ կարևոր և հետաքրքիր է:

ПРОТИВОДЕЙСТВИЯ КОРРУПЦИИ: ПОИСК ЭФФЕКТИВНЫХ РЕШЕНИЙ

Гриша Аракелян

Университет Сан-Паулу, Бразилия, Ереванский университет Айбусак

Резюме: *в статье рассмотрены вопросы, касающиеся организационных и правовых основ противодействия коррупции. Генерируется конструктивное предложение о том, что для эффективного противостояния коррупции на национальном уровне необходимо взаимодействия всех государств. Автор придает особое значение рекомендациям ФАТФ, ГРЕКО и конвенцию ООН против коррупции. В результате проведенных исследований, Автором сделаны предложения, которые могут иметь важное значение для разработки антикоррупционной стратегии Армении.*

Ключевые слова: *ФАТФ, ГРЕКО, КПК ООН, возврат активов, антикоррупционная конвенция.*

Коррупция является глобальной угрозой. Какую бы страну мы не брали, о каком бы политическом устройстве или уровне экономического развития не говорили – коррупция ставит под удар стабильность и благосостояние общества, делает людей бесправными и беззащитными, наносит неимоуемый, колоссальный ущерб безопасности и суверенитету государства. На различных международных площадках, прежде всего в рамках Организации объединённых наций, ведется постоянный поиск наилучших способов борьбы с коррупцией. Принят целый ряд международных и региональных антикоррупционных конвенций. Фактически мировое сообщество выработало юридически четкие определения криминальных проявлений коррупции [1]. Республика Армения подписала и ратифицировала Конвенции ООН по транснациональной организованной преступности, конвенции ООН по борьбе с коррупцией, принятую на встрече стран – членов ООН в Мексике в декабре 2003 года [2]. По замыслу разработчиков это конвенция ставит бедные и богатые страны в равное положение в деле борьбы с коррупцией. Она содержит перечень коррупционных деяний, включающий подкуп национальных и иностранных публичных должностных лиц, хищение, неправомерное присвоение или иное нецелевое использование имущество публичным должностным лицом, злоупотребление влиянием в корыстных целях и злоупотребления служебным положением; незаконное обогащение, подкуп, хищение имущества в частном секторе, воспрепятствование правосудия и отмыванию доходов. Также конвенция впервые содержит пункт о международной помощи в расследовании теневых доходов, а также об их возврате на родину. В конвенции четко написано, что правительство стран подписавших конвенцию, обязано объявить

вне закона взяточничество, присвоение чужого имущества и денег, отмывание „грязных денег” и злоупотребление служебным положением. Кроме того, в ней подробно регламентированы вопросы о выдаче лиц, совершивших коррупционные преступления. Все это касается не только государственного сектора, но и бизнеса. Компании, которые платят взятки в других странах, также должны быть наказаны. К сожалению конвенция не предлагает экстраординарных мер, направленных на разоблачение коррупционеров. Она не требует отмены законов о тайне банковского вклада и неприкосновенности политиков на определенных должностях. Речь идет лишь о гарантиях ответственности коррумпированных политиков за свои действия и доступа к определенной банковской информации [3].

В последние годы Республика Армения проявляет себя активным участником международного антикоррупционного сотрудничества. Основой реализации государственных усилий на данном направлении является позиция Премьера Пошиняна, для которого вопросы противодействия коррупции – безусловным приоритет. Пашипян не раз говорил о необходимости комплексного подхода в организации антикоррупционной деятельности в Армении. На стадии формирования находится организационные и правовые основы противодействия коррупции. Принят закон “ О незаконном обогащении”; который станет краеугольным камнем Национальной стратегии противодействия коррупции. В целом же в связи с ратификацией и принятием Арменией ключевых международных антикоррупционных конвенций изменениям должны подвергнуться положения законов о государственной и муниципальной службе, нормы уголовного, уголовного – процессуального законодательства, а также нормы гражданского и трудового законодательств.

Одновременно наша страна должна неизменно отстаивать следующую позицию: эффективное международное сотрудничество в антикоррупционной сфере, в том числе на площадках Совета Европы, СНГ, ОБСЕ, Европейского союза, должно осуществляться при центральной координирующей роли Организации объединённых нации на основе конвенции по противодействию коррупции ООН. Именно эта конвенция является единственным универсальным международно – правовым инструментом, задающим главное направление развития и регулирующим весь комплекс вопросов международного сотрудничества по противодействию коррупции. Необходимо подчеркнуть, что процесс включения в повестку для мировых форумов проблематики борьбы с коррупцией во всем многообразии начался более 15 лет назад и со временем стал набирать обороты. Сначала эта тематика фигурировала в решениях „Группы семи”, в декларациях саммитов „G20”. В этой связи особую роль играет Организации экономического сотрудничества и развития (ОЭСР), группы разработки финансовых мер борьбы с отмыванием денег (FATF), группы

государств по борьбе с коррупцией (ГРЕКО) созданной Советом Европы [4-7].

Приоритетных вопросов здесь много: это противодействие взяточничеству, легализации доходов от коррупции, выполнение стандартов ФАТФ по прозрачности бенефициарных собственников юридических лиц. Однако анализ деклараций и решений перечисленных форматов за последние годы является иллюстрацией постоянно повторяющихся сюжетов. Давайте вспомним – что говорилось и принималось десять лет назад. Примерно такой же набор заявлений и в этом году. И невольно задаётся вопросом: есть ли прогресс в глобальном антикоррупционном движении? Полагаю, что он мизерный. Опыт Армении и многих постсоветских стран показывают, что всплеско зачастую совпадают с разгаром избирательной компании либо внутривнутрипартийской борьбы.

Необходимо отметить, что наметалась мировая тенденция по укреплению организационных основ противодействия коррупции на международном уровне: Под эгидой ООН создается новый международный центр в сфере борьбы с коррупцией, основной целью которого станет содействие усилиям правоохранителей по преследованию коррупционеров и возврату активов. При этом декларируется, что в компетенции центра будут также отнесены вопросы коррупции в высших эшелонах власти [8-9]. В этой связи создается инновационный центр передовых антикоррупционных технологий. Для Армении имеет огромное значения, что в центре готовят практическое руководство для соответствующих структур, занимающихся возвратом активов. Одновременно Всемирный банк рассматривают возможность „компенсационных платежей” старанам, пострадавшим от коррупции.

Возникают как минимум два вопроса:

- Сможет ли Армения участвовать в происходящих процессах?
- Что будет, если от них абстрагироваться?

Думается, международное сотрудничество в сфере противодействия коррупции необходимо не для того, чтобы кому-то что-то доказать, а потому, что коррупция – эта не национальная, а международная проблема [10-13]. И все, что происходит на национальном уровне, в той или иной степени отражает происходящие в мире процессы. Именно международное сотрудничество является ключевым аспектом функционирования механизма возвращения активов, полученных коррупционным путем и выведенных за рубеж. Все это означает, что в современных условиях для результативного взаимодействия с другими странами в сфере противодействия коррупции Армения должна быть хорошо подготовлена как в профессиональном плане, так и экспертном.

И, наверно, самое важное – наладить эффективную координацию между госорганами, участвующими в противодействии коррупции.

Нужно определиться с позицией Армении по возможному участию в создаваемых международных антикоррупционных центрах. И так, чтобы добиться

кардинального перелома в этой борьбе, предстоит большая работа по системному использованию антикоррупционных мер в повседневной деятельности государства.

Գրականության ցանկ

1. Пекарев В. Правовые акты борьбы с коррупцией и международном уровнях. М. 2008. Ст 38-41
2. Лебедев Александр. Противодействие коррупции в морови моештабе (новая газета / 31. 22. 07. 2016)
3. Андриченко Л.В. Проблемы регламентации статуса и деятельности комиссий по урегулированию конфликта интересов на муниципальной службе // Журнал российского права. 2014. № 2. С. 59-67.
4. Балковая В.Г. Сенатское расследование злоупотреблений в Санкт-Петербургской портовой таможне (1742-1743 гг.) // Журнал российского права. 2014. № 6. С. 126-132.
5. Каширкина А.А. Международно-правовые модели имплементации антикоррупционных конвенций // Журнал российского права. 2014. № 3. С. 79-86.
6. Мусаелян М.Ф. Совершенствование уголовной политики в сфере противодействия коррупции в РФ // Журнал российского права. 2014. № 5. С. 56-65.
7. Плохой О.А. Основные направления государственной политики Российской Федерации в свете противодействия коррупции // Журнал зарубежного законодательства и сравнительного правоведения. 2014. № 3. С. 413-417.
8. Привалова В.Ю. Имплементация международных антикоррупционных требований в российское законодательство // Журнал зарубежного законодательства и сравнительного правоведения. 2014. № 5. С. 858-864.
9. Сидоренко Э.Л. Антикоррупционные стандарты ОЭСР и их реализация в национальном уголовном праве (опыт прохождения странами третьей фазы оценки) // Журнал зарубежного законодательства и сравнительного правоведения. 2014. № 1. С. 85-88.
10. Севальнев В.В. Противодействие коррупции: опыт КНР // Журнал зарубежного законодательства и сравнительного правоведения. 2014. № 1. с. 89.
11. Федоров А.В. Введение уголовной ответственности юридических лиц – прогнозная тенденция развития российской уголовно-правовой политики // Журнал зарубежного законодательства и сравнительного правоведения. 2014. № 3. С. 429-433.
12. Опыт войт с коррупцией в зарубежных странах <http://www.prparn.ru/articles/voinna.htm1>
13. Anti-corruption summit. 12.05.2016// URL <http://>

ANTI-CORRUPTION: FINDING EFFECTIVE SOLUTIONS

Grisha Arakelyan

San Paulo University, Brazil, YHU

In this article, the author took into consideration questions concerning anti-corruption efforts and ways of fighting. The author has made constructive suggestions for fighting corruption at the national level. The author came to an idea that it is necessary to have efforts of all states in order to fight corruption effectively. There were approaches presented in the results of the study by the author, which may be important for development of anti-corruption strategy in Armenia.

Keywords. FATF, GRECO, UNCAC, anti-corruptions conversations, return of money.

ԿՈՌՈՒՊՑԻԱՆ և ԴՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՈՒՂԻՆԵՐԸ

Գրիշա Առաքելյան

Սան Պաուլոյի Համալսարանի, Հայքուսակ Համալսարան

Անդրադարձ է կատարված կոռուպցիայի դեմ պայքարի իրավական և կազմակերպական ուղիներին վերաբերող հիմնախնդիրներին: Կառուցողական առաջարկներ է ներկայացված ազգային մակարդակում կոռուպցիայի դեմ պայքարի համար: Հողվածում հեղինակը եզրահանգել է այն մտքին, որ կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարելու համար անհրաժեշտ է բոլոր պետությունների միասնական ջանքերը: Ուսումնասիրության արդյունքներում ներկայացվել են մոտեցումներ, որոնք կարող են նշանակալից ազդեցություն ունենալ Հայաստանում հակակոռուպցիոն ռազմավարության մշակման համար:

Բանալի բառեր. ՖԱՏՖ, ԿԴՊՊԻՄ, ՄԱԿ ԿԴԿ գումարների վերադարձ, հակակոռուպցիոն կոնվենցիա:

Ելույթներ

Գ. Սաֆարյան. - Թեման խիստ արդիական է հատկապես հայոց պետականության զարգացման ներկա փուլում: Այս առումով զեկուցման բովանդակությունը գիտական ու գործնական առումով շատ կարևոր և հետաքրքիր է:

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Ռաֆիկ Սիրունյան, Կարինե Առաքելյան,
Երևանի Հայրուսակ համալսարան**

Ամփոփագիր. *Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների հանրային վրանգավորությունը կայանում է նրանում, որ դրանք խախտում են տնտեսության ոլորտի իրավակարգը, տնտեսական շրջանառության առանձին մասնակիցների, հասարակության, պետության տնտեսական շահերը, գույքային վնաս են պատճառում տնտեսվարող սուբյեկտներին և առանձին քաղաքացիներին: Քննարկվող հանցագործություններն առաջանում են ՀՀ-ում նորմալ տնտեսական գործունեության ընթացքում՝ նյութական արժեքների արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման, ձեռնարկատիրական գործունեության, դրամավարկային ինչպես նաև ծառայությունների մատուցման բնագավառում:*

Հիմնաբառեր. *Տնտեսական գործունեություն, հանցագործություն, պետություն, հարկ, տնտեսական շահ:*

Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունները հիմնականում դրսևորվում են գործողությամբ (ապօրինի ձեռնարկատիրությունը, սպառողներին խաբելը և այլն), որոշ դեպքերում՝ անգործությամբ (հարկեր վճարելուց խուսափելը): Մի քանի հանցակազմերի համար որպես օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ նախատեսված են նյութական հետևանքները (զգալի, խոշոր, առանձնապես խոշոր չափի վնասներ): Տնտեսական գործունեության դեմ ուղղված բոլոր հանցագործությունները կատարվում են դիտավորությամբ:

Տնտեսության ոլորտում հասարակական հարաբերությունների քրեաիրավական պաշտպանությունը հանդիսանում է շուկայական տնտեսության բնականոն զարգացման երաշխիք:

ՀՀ Քրեական օրենսգրքի 22-րդ գլուխը նվիրված է տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններին, որն ընդգրկում է 187 հոդվածից մինչև 216 հոդվածները [1]: Այդպիսի հանցագործությունների շարքին են դասվում՝ օրինական ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեությանը խոչընդոտելը, ապօրինի ձեռնարկատիրությունը, առանց լիցենզիայի արտարժույթի առուվաճառքի իրականացումը, կեղծ ձեռնարկատիրությունը, հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներն օրինականացնելը (փողերի վճարումը), վարկը ոչ նպատակային օգտագործելը, կանխամտածված և կեղծ սնանկությունը, ապրանքային նշանն ապօրինի օգտագործելը, առևտրային կաշառքը, կեղծ փողերը կամ արժեթղթեր պատրաստելը, պահելը կամ իրացնելը, հարկեր, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները

վճարելուց չարամտորեն խուսափելը, ակցիզային դրոշմանիշներ և հսկիչ նշաններ (դրոշմապիտակներ) կեղծելը կամ իրացնելը, սպառողներին խաբելը, մաքսանենգությունը, ակնհայտ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույք ձեռք բերելը կամ իրացնելը և այլն [2]:

ՀՀ գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունուն կատարված ամփոփումից տեղեկանում են, որ 2020թ. տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ հարուցվել է շուրջ 844 քրեական գործ, և որ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններին առնչվող քրեական գործերով շատ դեպքերում քննության առարկա են միևնույն սխեմայով կատարված նույնաբնույթ հանրորեն վտանգավոր արարքներ, պետությանը պատճառված վնասը վերականգնելու նպատակով տարբեր գործերով ընդհանուր 13,5 մլրդ դրամի չափով արգելանքներ են դրվել մեղդրյալների գույքի և դրամական միջոցների վրա:

Տնտեսական հանցագործությունները ՀՀ քրեական օրենսդրության մեջ ամենաբարդերից են, ինչպես նյութական իրավունքի ձևակերպման, այնպես էլ հանցագործության փաստն ապացուցելու, քննության առանձնահատկություններն ու բարդությունները ամբողջությամբ վերցրած, տեսանկյունից: Նշենք, որ տնտեսական հանցագործությունների կատարման հանցավոր սխեմաներ մշտապես փոփոխվում և կատարելագործվում են: Դրանք կատարելու համար հանցագործներն օգտագործում են տնտեսական, իրավական, սոցիալական համակարգի առանձնահատկությունները, որոնք առկա են ժամանակի որոշակի պահին և որոնք նույնպես անընդհատ փոփոխվում են: Ուստի, դրանք քննության արդյունավետությունը բարձրացնելու համար կարևոր է հասկանալ այն ընդհանուր հարցերը, որոնք բնորոշում են տնտեսական հանցագործությունների քննության առանձնահատկությունները: Սա կօգնի հասկանալ ոչ միայն կոնկրետ հանցագործության կատարման մեխանիզմը, այլև բացահայտել դրա հետ կապված հարակից հանցագործությունները: Օրինակ՝ տարբեր տեսակի խարդախությունները, կոռուպցիոն հանցագործությունները, հանցավոր ճանապարհով եկամուտների օրինականացումը և այլն:

Տնտեսական հանցագործություններ կատարած անձանց բարձր տեսական և գործնական պատրաստվածություն այն տարածքում, որտեղ գործում է տուժող ձեռնարկությունը ի տարբերություն քննիչների և իրավապահ մարմինների այլ աշխատակիցների, որպես կանոն, տվյալ ոլորտում աշխատելու մեծ փորձ ունեն և համապատասխանաբար, նաև հանցավոր սխեմաների իրականացման փորձ: Ուստի նրանք կարող են կատարել ձեռնարկությունում հաշվապահական հաշվառման ճշտության դիտավորյալ խախտում, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի ոչնչացում, կեղծում և այլն:

Նման հանցագործությունները բացահայտելու համար իրավական մարմինների աշխատակիցների կողմից խորհրդատվություն ստանալու անհրաժեշ-

տություն է առաջանում տարբեր մասնագետներից, ովքեր փորձ ունեն տուժող ձեռնարկությունում աշխատելու, դրանց ղեկավարությունից, աշխատող անձնակազմից, որպեսզի հանգամանորեն հասկանան բոլոր տնտեսական, տեխնոլոգիական, արտադրական, ձեռնարկության մեխանիզմը: Սա անհրաժեշտ է հասկանալու համար, թե արդյոք տվյալ ձեռնարկությունը եղել է շահութաբեր, ծախսարդյունավետ իր դեմ հանցավոր գործողությունների կատարման պահին (ինչպես, ինչի շնորհիվ է շահույթ ստացել, վաճառել աշխատանքի արտադրանքը, ինչ վարկային պարտավորություններ է ունեցել, արդյոք սկզբնապես ապահովված էին և այլն): Այդպիսի անձինք կարող են լինել նաև սնանկացած ձեռնարկության կամ շահերի ոլորտում գործող այլ ձեռնարկությունների ամենափորձառու աշխատակիցները:

Տնտեսական գործունեության ոլորտում հանցագործությունների քննության հաջողությունը մեծապես կախված է քննիչի որոնողական և ճանաչողական գործունեության նպատակաուղղվածությունից, նախաքննության առարկայի՝ գործով հաստատվելիք հանգամանքների շրջանակի ճիշտ և հստակ սահմանումից, մեծ թվով դատական փորձաքննություններ (տնտեսական, ֆինանսական, գնահատման, շինարարական, հաշվապահական և այլն), նշանակելուց, մեծ թվով քննչական գործողություններից, որոնք պետք է իրականացվեն տնտեսական հանցագործության փաստը պարզելու և ապացուցելու համար, հանցագործության հետևանքով պատճառված վնասի հաշվարկման, պարզելու կոնկրետ ում կողմից (ֆիզիկական, իրավաբանական անձինք, հիմնադիրներ, բաժնետերեր, պարտատերեր, ձեռնարկության աշխատողներ և այլն) է կատարվել, խնդիրները որոշելու համար [3]:

Տնտեսական գործունեության ոլորտում հանցագործությունների մասին տեղեկատվությունը ստացվում է տարբեր աղբյուրներից: Անկախ դրանց բնույթից՝ տեղեկատվության ճշտման անհրաժեշտություն միշտ առաջանում է, երբ առանց լրացուցիչ տվյալներ ձեռք բերելու անհնար է ճիշտ լուծել քրեական գործ հարուցելու հարցը:

Իրավասու մարմինների տեղեկատվության հիմնական աղբյուրը կապված է օպերատիվ-որոնողական և կարգավորող մարմինների գործունեության ոլորտի հետ: Սա առաջին հերթին պայմանավորված է տնտեսական հանցագործությունների առանձնահատկությունների իմացության, տարբեր իրավական մեխանիզմների և միջոցների ակտիվ կիրառման հետ:

Մասնավորապես, տնտեսական հանցագործությունների զգալի մասը կատարվում է բանկային և տնտեսական գործարքների, արտաքին առևտրային գործարքների և հասարակական հարաբերությունները կարգավորող գույքային ու այլ ձևերի անվան տակ: Նման դեպքերում հանցավոր մտադրությունը, հանցագործության հատկանիշները դժվարությամբ են ճանաչվում, քանի որ արտաքուստ նման տնտեսական հանցագործությունը շատ չի տարբերվում սովորական գործարքից: Բացի այդ, դրանք մեծ մասամբ հանցագոր-

ծույթուններ են՝ առանց զոհերի, առանց տեսանելի հետևանքների:

